



Բարսի

ՄԱՐՏ
ԱՊՐԻԼ
89



ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՆ՝
ՀԱՅՐԵՆԻ ԳՐՈՂՆԵՐ...

5577



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1... * * *	Գեհ, Ե՛կ, ընթերցող ու մի խեղճանայ...
3... ՀԳՄ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ	Պ. Ղուկասեան, Տ. Յովհաննիսեան Վ. Մովսիսեան...
4... Վ. ԳԱԻԹԵԱՆ	Քարի հասնալարի
5... Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Բանաստեղծութիւններ
7... Վ. ԳԱԻԹԵԱՆ	Տանիա Յովհաննիսեան
7... Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Կոպիտ պոեզիա – քղրէ վարդ
9... Ա. ՇԵԿՈՅԵԱՆ	Թռիչքներու երգում եւ արքմնի
13... Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Մեղրէ վնաս
14... » » »	Տօնն անցաւ
15... Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Հակատագրական նամբարածան
16... Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Օրը կապոյտ է...
17... » » »	Առատ
18... Ս. ՍԱՐԻՆԵԱՆ	Գրական նոր սերնդի դիմանկարը
19... Պ. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Ընտվոր լուրքիւն
22... » » »	«Կարմիր մամուռ»
25... » » »	Նոր կատարածուն
29... Վ. ԳԱԻԹԵԱՆ	Սրարատ Մկրտումեան
30... Ա. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	Սիքաշաքքի
31... » » »	Ալլէէ՛... հոպ
32... Դ. ՏՕՆՈՅԵԱՆ	Բանաստեղծութիւններ
34... ՀՐ. ՄԱԹԵՆՈՍԵԱՆ	Էյի զաշուն կր գայ
35... Ե. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Մի նշխարք խունկ՝ երկրաշարժին գոհ գնացած Գրչակից բնկերներիս շիրիմներին Նորից եկել...
36... Հ. ՍԱՀԵԱՆ	Ապրել, քանի մը ափաշտի հող կայ
37... «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԵՒ...»	Հայրենիքիս յիշատակները
38... Շ. ԱԶՆԱՒՈՒՐ...	Քաղաքից քաղաք
39... » » »	Կր լռել վերքը քարին
40... Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Հայաստանի մէջ...
47... Ե. ՏԼՄԻՐՆԵԱՆ	Զոռոյց՝ Հ. Մալեանի հետ
54... Վ. ՄԵԼՔԻՍԵՅԵԱՆ	Ի խորոց սրտի
56... Գ. ԱԲԱԶԵԱՆ	Հրանտ Հրահան
58... Գ. ԶԱՆԻԿԵԱՆ	Պէտք է բարձրացնել չափանիշները
60... ՀՐ. ՂԱՓԼԱՆԵԱՆ	Հա՛ք քաք
62... Մ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Առաքսի հետ
63... » » »	Գաշոյն
64... » » »	Պատմութիւն ու ես
64... » » »	Քոստէի Թադեոսեանի նամակը
65... Մ. ՄԵՆԱՍԵԱՆ	Չ'առ ուր ու հայ օրականութեան ազատին Խոստակութեան մասին
73... Է. ԶՐԲԱՇԵԱՆ	Լուս տեսան
82... * * *	Մշակութային լուրեր
86... * * *	

5577

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՐՈՒԵԱՏԻ

ԻՐ. ՏԱՐԻ ԹԻՒ 3-1 ՄԱՐՏ-ԱՊՐԵԼ 1989 ՊԵՏՐՈՒԹ

ԴԵՀ, Ե՛Կ, ԸՆԹԵՐՑՈՂ ՈՒ ՄԻ ԽԵՆԹԱՆԱՅ...

Արուբեան բազում գործեր կատարած ժողովուրդ է մեր ժողովուրդը, տարբեր մարզերու մէջ յայտնագործութիւններ արձանագրած ժողովուրդ, եւ դեռ՝ մարդկայնական բազում ստորագիւծներու տէր ու ապրելու իր բնագոյով պատմութիւնն ու աշխարհը ապշութեան մատնելու չափ ներգոյակ ուժի մը կրողը, բայց բախտաւոր ժողովուրդ չէ եղած ան ժամանակներէն որեւէ՝ մէկուն ընթացքին. ո՛չ իրարու յաջորդած արեւմտա-օրօք եւ ոչ ալ «ազատ ենք մենք ու երջանիկ» երգած վերջին եօրանասուն տարիներուն:

Ու հայ գրականութիւնը՝ իր ծնողին պէս, դժբախտ՝ պատմութեան բոլոր փուլերուն, հակատագրական աղէտներու բերումով քէ աղէտափիւռ հրէշներու վնիւններով:

Աւերիչ հորդանքներ սանձագերծող «Աղա Մամաղ Խան ահեղ ներքին» կը կոչուի հայ գրականութեան այդ թշնամիներէն մէկը, որուն սուրին գոհ գնաց «խալիսի նոքար Սայաք-Նովան»:

Լոյսի թշնամի ցարական իշխանութիւն կը կոչուի միւսը, որուն դաւադրութեամբ, «անյայտ ու անդամբան» կորսուեցաւ մեծախոով մեր լուսաւորիչներէն «Հայաստանի վերքի երգիչ»ը:

Կարգը խախտելով տանք երրորդ գիշատիչին անունը՝ բուրբը, որ յօշոտեց «ամենավատ» մեր աստղերէն վարուժանն ու վարուժանի սերնդակից հայ գրականութեան համարեա՛ ողջ համաստեղութիւնը:

Չորրորդը՝ ստալինեան համայնավարութիւնը, որուն մուրճն ու մանգաղները ահա որ ստոնասարուութեամբ մը ոչնչացուցին Չարենցը, Բակունցը եւ անոնց հետ ասպարէզ իջած ընտիրներու ամբողջ փաղանգ մը:

Շարքին մէջ կարելի չէ չիշել բուրբէն ու ստալինեան համայնավարութեան անաչ մոլիեզնած հայ գրականութեան հինգերորդ պատուհասը, բոքախոր, որ այնքան վաղահասօրէն առաւ-տարաւ Մկրտիչ Պէշկա-

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆ

շրջանը, ուրիշ մը՝ Գարեգին Պէշկէօփի բեանը, աստիճան մը աւելի դաժանութեամբ՝ Դուրեանը, Մեծարեանը, Տէրեանը, Զարիֆեանը, Փայլակ Միֆայէլեանը, ուրիշներ:

Տակաւին կայ միւս թշնամին. թիւը դուրս դրէք, պատահաբար թէ «իմտօրէն բեմադրուած ինքնաշարժի արկածներու»ն դաւը, Արշակ Զօպանեանի պարագան, Անդրանիկ Թերզեանի եւ Պարոյր Սեւակի մահուան շուրջ հիւսուած ինքնաշարժային առասպելները եւ անոնց յար եւ նման որսորդական առասպել մը, որ հայ գրականութենէն խլեց վերջին սիրելիներէն Մուշեղ Գալշոյեանը:

Եօթներորդ պատուհասը՝ հայ գրականութեան յատուկ պատուհաս մը չէ, բայց աննշան չեղաւ նաեւ անոր տուած մեր տուրքը, — Հայրենական պատերազմը, պատճառը՝ Թաքուլ Հուրեանի, Դերեանի Զարիշեանի եւ երկու տասնեակէ աւելի ստեղծագործ ու մտաւորական ընծիւղներու կորուստին:

Հայ մարդուն ծանօթ էին եօթնապատիկ այս հարուածները, որոնց իրաւանջիւրին առիթով յաճախ ընդվզած է ան. արիւնած, ճշացած բախտին դէմ, նախախնամութեան դէմ, հոգեկան ձեւագեղծուած կառոյցներով իշխանութիւններու հասած արիւնուշտ արարածներու դէմ. ողբացած կորուստը այն գանձերուն, որոնք մերը պիտի ըլլային ու չեղան ու դարձած ու հայիոյած է նոյն ուժերուն, գործօն չարերուն, մանրախնդիրներուն, մանրէներուն...

Դժբախտութեան իր մատեանին մէջ հայ գրականութիւնը դժբախտութիւնը չէր ունեցած էջ բանալու թերեւս միայն տարերքի գոհ գրողներու, գրուած է եղեր ուրեմն. որ բացուի նաեւ այդ էջը, էջը 7 Դեկտեմբեր 1988ին պատահած երկրաշարժի գոհերուն. որոնք թալաթեան Դեռիս ու ստալինեան Մոզոֆին կատարած հունձֆին պէս միաժամանակ անշնչացան, յանկարծօրէն բացուած վիհերուն մէջ, տասնեակ հազարաւոր սիրելիներու հետ...

«Անչունի զանգակատու ն» պոեմին մէջ, բանաստեղծը մեր անողորմ ճակատագրին դէմ-յանդիման կը դնէ իր հերոսը ու կ'ընէ անոր անկարելի սա կոչը.

— Դե՛հ, Ե՛կ, վարդապետ ու մի խենթանայ...

Մեր գրականութեան գոհերուն ցանկը ամփոփող վերի պատկերին դիմաց նոյնանման ոճ մը կը կազմուի ու կը ճշայ մարդուս մէջ.

— Դե՛հ, Ե՛կ, բնթերցող, ու մի խենթանայ...

Նոր գոհե՛րը...

Դիմացի էջին արտագրուած Հայաստանի գրողներու վարչութեան հաղորդագրութեան մէջ հանդիպեցանք հայ գրականութեան նոր գոհերուն յիշատակութեան. թիւով հինգ անուն. առաւել՝ «Լեւոնականում, Սպիտակում, Ստեփանաւանում ապրող եւ ստեղծագործող շնորհալիներ, որոնց անունները դեռեւս անյայտ էին ընթերցող լայն հասարակութեան»:

Ընթերցող լայն հասարակութեան դեռեւս անյայտ վերջիններուն անունները մենք փնտռեցինք հայրենի մամուլին մեզի հասած համարներուն մէջ, բայց Հրաչեայ Մաթեոսեանի կենսագրած հրապարակագրուհիէն գատ ուրիշ ոեւէ մէկուն չհանդիպեցանք: Զուր անցան նաեւ յիշատակուած գոհերէն թատերագիր Վարդգէս Մովսիսեանի ստորագրութեան հանդիպելու մեր բոլոր փնտռումները: Սրտի պարտք էք քանի մը էջ ներկայացնել նաեւ այս վերջինէն ու սրտի պարտք կը մնայ:

Հետագայ էջերը, որոնք կազմուած են սրտի խորունկ կսկիծով, թող համարուին պզտիկ տուրք մը անոնց յիշատակին, յուշարար մը՝ գործերուն, յուշարձան մը՝ անաւարտ ճակատագիրին...

Պ. ՂՈՒԿԱՍԵԱՆ, Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Վ. ՄՈՎՍԻՍԵԱՆ...

Ահեղ եւ ամենակործան տարերային աղէտը՝ 1988 թուականի Դեկտեմբեր 7ի երկրաշարժը, որն աննախադէպ ուժգնութեամբ փոթորկուեց Շիրակում եւ Լոռիում, ի թիւս բազմահազարների, գոհ տարաւ նաեւ արդէն անուն հանած, վաստակ ու ներդրում ունեցող ՍՍՀՄ գրողների միութեան անդամի մի շարք գրողների եւ առաջին վստահ ֆայլերն անող սկսնակ եւ երիտասարդ ստեղծագործողների:

Իրենց հարկերի եւ աշխատավայրերի փլատակների տակ դաժան ու ողբերգական մահով գոհուեցին Հայաստանի գրողների միութեան Լեւոնականի բաժանմունքի պատասխանատու ֆարտուղար, արձակագիր *Պատուական Ղուկասեանը*, դրամատուրգ *Վարդգէս Մովսիսեանը*, բանաստեղծուհիներ *Տանեա Յովհաննիսեանը*, *Հայկանի Տօնոյեանը*, բանաստեղծ *Արարատ Մկրտումեանը* եւ Լեւոնականում, Սպիտակում, Ստեփանաւանում ապրող եւ ստեղծագործող շնորհալիներ, որոնց անունները դեռեւս անյայտ էին ընթերցող լայն հասարակութեանը:

ՍՍՀՄ գրողների միութեան անդամներ, արձակագիր Պատուական Ղուկասեանը մի շարք գրքերի հեղինակ էր, տպագրութեան էր յանձնել երկու նոր գիրք, որ, աւա՛ղ, լոյս են տեսնելու ետ մահու. դրամատուրգ Վարդգէս Մովսիսեանի բազմաթիւ պիեսները բեմադրուել են Լեւոնականի Ա. Մուսեանի անունը դրամատիկական թատրոնում եւ հանրապետութեան այլ թատրոններում, բեմադրական ընթացքի մէջ էր նրա նոր պիեսը, որի բեմելի հրճուանքը, աւա՛ղ, չի վայելելու նա. Տանեա Յովհաննիսեանը սոսկ բախտ ունեցաւ տեսնելու իր առաջին գիրքը. Հայկանի Տօնոյեանի եւ Արարատ Մկրտումեանի բանաստեղծական անունները նոր-նոր երեւացել էին գրական մամուլում եւ սպասում էին իրենց առաջին գրքերի լոյս ընծայմանը:

Դաժանօրէն ցաւալին այն է, որ ինչպէս մեր սիրելի այս գրչակիցները, այնպէս էլ դեռեւս անյայտ միւս ստեղծագործողները գոհուեցին իրենց կեանքի միջօրէին չհասած, իսկ շատերը՝ մատաղ եւ ծաղիկ հասակում, կեանքային եւ ստեղծագործական բազում-բազում նպատակներ, իզձեր, ծրագրեր ի կատար չածած, ողբերգօրէն գոհուեցին իրենց անցնելիք ճանապարհի կէտին, շատերն էլ հենց ճանապարհի սկզբին, սգաւոր փլատակների հող ու ֆարի մէջ կորան կամ այրուեցին նրանցից շատերի ձեռագիր ստեղծագործութիւնները:

Համաժողովրդական մեծ սուգ ու վշտի այս օրերին, գլուխ խոնարհելով բազմահազար անմեղ գոհերի յիշատակի առաջ, բոլոր հայ գրողները, միաժամանակ, դառնագին կսկիծ ու ցաւ են ապրում իրենց սիրելի գրչակից ընկերների ողբերգական մահուան համար, խորապէս ցաւակցում են նրանց հարազատներին եւ մտերիմներին, մի անգամ եւս վստահեցնելով, որ նրանց յիշատակը միշտ անմար ու վառ կը պահեն իրենց սրտերում:

ՀԳՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վ. ԳԱԻԹԵԱՆ

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Երբ կարդացի Տանեա Յովհաննիսեանի բանաստեղծութիւններից մի քանիսը եւ մի փոքր ծանօթացայ նրա դժուար կենսազրութեանը, որու բանաստեղծութիւններէն Քսենեա Նեկրասովային յիշեցի: Դժուարութեամբ էին տպագրում Նեկրասովայի բանաստեղծութիւնները, քանի որ, գուրկ լինելով արտաքին փայլից, ոմանց դրանք շատ պարզունակ էին թուում: Նրանց խորքում պահուած թաքուն դեղեցկութիւնները գժուարութեամբ էին բացում ու պարտադրում: Նա կեանքի վերջում միայն կարողացաւ բանաստեղծութիւնների մի փոքրիկ գրքոյկ տպագրել, բայց դա էլ արժանի ճանաչում չըրեց նրան: Եւ ահա հիմա ոչ միայն իրար ետեւից վերահրատարակում են նրա ժողովածուները, այլեւ փնտրում, հրատարակ են հանում նրա թողած ժառանգութեան պատառիկները:

Տանեա Յովհաննիսեանի բանաստեղծութիւններն էլ գուրկ արտաքին փայլից, արտաքուստ գրական վարպետութեան նշաններ էլ չեն ցուցաբերում, բայց խորքում հոգեւոր գեղեցիկ հարստութիւններ ունեն: Որքան խորանում էի նրա բանաստեղծութիւնների ընթերցանութեան մէջ, այնքան աւելի էի սկսում հաստատ նրա իրաքանչիւր առդին, քանի որ իմ դէմ բարձրանում էր մարդկային մի շեշտուած անհասականութիւն, մի հոգի, որ որքան կանացի, նոյնքան էլ վճռական է ու ամուր:

Հաստատ էի, որ նա, յիրաւի, ինչպէս ինքն է ասում իր բանաստեղծութիւններից մէկում, «բարի ու վեհ կապեր» ունի «արեւի, ջրի, հողի հետ»...



Տանեայի բանաստեղծութիւնները կարդալուց յետոյ ամբողջ օրը մի լաւ բան դաւած մարդու հաճելի տրամադրութիւնը չէր լքում ինձ: Ահա այդ տրամադրութեամբ էլ նրա բանաստեղծութիւններից մի քանիսը յանձնում եմ ընթերցողի ուշադրութեանը, յոյս ունենալով, որ նա էլ կը համակուի նոյն տրամադրութեամբ եւ ինձ հետ միասին բարի ճանապարհ կը մղի նրան («Գրական քերթ», 1983, թիւ 10):

ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

**

Ձեռքերս այնպէ՛ս են հասել, այնպէ՛ս,
Տարիներ պահել եմ արեւի տակ, տարիներ,
Բեր ֆեմ աչքերիդ — բացուեն աչքերդ —
Բեր դիպչեմ երեսիդ — ջահելանաս:
Ձեռքերս այնպէ՛ս են հասել.
Տարիներ ապրել են հոգի երեսին,
Հենց բռնես — բարեկամ կ'ունենաս,
Բեր ֆեմ սրտիդ — սիրովանաս,
Բեր դիպչեմ վերքիդ — լաւ լաւանաս,
Ինչքան շոգ լինի, եկ — գովանաս,
Ձեռքերս այնպէ՛ս են հասել, հասել...
Ջրի մօտ երկար եմ ապրել — երկար,
Բեր դիպչեմ գործիդ — անմահանա՛ս,
Բեր դիպչեմ սիրուդ — փառաւորուե՛ս,
Դէ բռնիր ձեռքս, եւ ահա երբեք
Չես սխալուել...

**

Այդպէս սրտաբաց մի թռչկոտիւր ինձ հետ
Սար ու ձորերով, երկինք-արեւներով,
Բացազատ արօտավայրերով
Ու ամէնուրեք
Մի թափառեցնի ինձ հիմա այդպէս շոյալ,
Բացսիրտ, անշահախնդիր, ձրի,
Ինձ այդպէս երես մի տայ,
Մի նուիրիւր ինձ
Այդքան սանձարձակ աշխարհ...
Եւ մոռանալ չգիտեմ,
Եւ երբեք մոռանալ չգիտեմ:

Եւ յանկարծ այլեւս բաց չեմ թողնի ձեռքդ,
Եւ յանկարծ մէկընդմիջտ կը պահանջեմ ծագիկներ,
Եւ յանկարծ ոտքս կը խփեմ գետնին
Եւ կ'ասեմ՝ ահա այն նանապարհը եւ ահա մեր ոտնատեղերը

Ես յանկարծ, իմ ընկեր,
Քեզ քարշ կը տամ մէկընդմիջտ
Բացազատ արօտավայրերով, երկինք-արեւներով...

Եւ երբե՛ք
Մենակ չեմ վերադառնայ...
Ես մենակ
Երբե՛ք չեմ վերադառնայ...

**

Փոքրիկ մէկը, փոքրիկ մի մարդ —
Որ երբ նստած խոհանոցում գործ եմ անում,
Մի փոքրի՛կ օգնի ինձ, մի փոքրի՛կ նստի կողքիս
Կամ երբ կապոյտ ծաղիկ եմ ասեղնագործում զգեստի,
Մի փոքրի՛կ գարմանայ մատներիս շարժումնով,
Ու երբ լողանամ գործից յոգնած, ու տաքանայ մաշկս,
Մի փոքրի՛կ շոյի ու հիանայ իմ գեղեցկութեամբ, մի՛ փոքրիկ:

Փոքրիկ մէկը, փոքրիկ մի մարդ,
Որ երբ խնդամ ուրիշի հետ ու հեռանամ մի փոքրիկ,
Նայի յետեւիցս մի փոքրի՛կ երկար, թախծոտ ու սիրազեղ,
Կամ երբ բանաստեղծութիւններ յօրինեմ յանկարծ,
Մի փոքրիկ բարձրանայ, մի փոքրիկ ուշադիր լսի...
Ես կ'ուզեմ մի փոքրիկ, մի տխուր, մի անհանգիստ մարդ
Որ ես էլ կարողանամ ցրել նրա տխրութիւնը մի փոքրիկ...

**

Ծաղիկները բոյր ունեն —
Դու այդպիսի բաներ մի անի,
Մի նուիրիր ինձ ծաղիկներ...
Ես չեմ մոռանայ նրանց բոյրը:

Ճանապարհները նշաններ ունեն,
Մի տանիր ինձ քեզ հետ ճանապարհներով,
Ես նշանները, դրոշմները, ստնատեղերը
Միշտ կը յիշեմ ու կը վերադառնամ նոյն նշաններով,
Երբ լքես ինձ:

Մի բռնիր ձեռքս այդպէս, փիղ մէջ մի դնիր ձեռքս,
Այդպէս տաք եմ լինում ձեռքերը՝ միասին, ես չեմ մոռանայ,
Հաց ու կոծս կը դնեմ, կը յիշեմ փիղ տաքութիւնը՝ իմ ցուրտ
ժամանակ

ՏԱՆԵԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տանեա Յովհաննիսեանի բանաստեղծութիւններում ինձ ամէնից
առաջ դուր է գալիս զգացմունքի անկեղծութիւնն ու ճշմարտացիութիւնը:
Նրա տողերն ինձ վրայ կենդանի, թրթռուն ու ցաւոյ նեարդերի ապաւորու-
թիւն են թողնում, ու ես հաւատում եմ նրա իրաքանչիւր տողին: Կենսագ-
րութիւն կայ Տանեայի բանաստեղծութիւններում, տառապանքով երջանկու-
թիւն որոնող մարդու հոգեկան կենսագրութիւն: Տանեան ո՛չ միայն ասելիք
ունի, այլեւ՝ իր ասելիքի կերպը, որ ինքնատիպութիւն է կոչուում: Բաւական է
որբէ է տեղ նրա անստորագիր բանաստեղծութիւնը կարգում, որ իսկոյն ճա-
նաչեմ ձեռագիրը: Սա արդէն շատ մեծ բան է:

Այս ամէնից, ի հարկէ, չի հետեւում, թէ Տանեայի բանաստեղծութիւն-
ներում ամէն ինչ կատարեալ է, եւ նա անելիք չունի: Ոչ: Տանեային յաճախ է
դաւաճանում ճաշակը, յաճախ է դաւաճանում չափի զդացումը: Իսկ սա նշա-
նակում է, որ նրա զգացմունքի կուլտուրան դեռ անհրաժեշտ բարձրութիւնը
չունի: Այո՛, զգացմունքն էլ կուլտուրա ունի, քննութեան չենթարկուող, բայց
ինքն իրեն մատնող կուլտուրա: Դա, բարեբախտաբար, ձեռք բերովի է, եւթա-
կայ է մշակման, մշակման՝ ընթերցանութեան, զեղարուեստական բարձր ար-
ժէքների առաւել շաա հաղորդուելու եւ բազում այլ միջոցներով:

Կարծում եմ, ժամանակի հետ կը գայ նաեւ այդ կուլտուրան, եւ Տան-
եայի բանաստեղծութիւնները մի առաւել վայելուչ գսպութիւն ձեռք բերելով,
կը դառնան առաւել ազնիւ, առաւել համակողմ («Գարուն», 1984, թիւ 8):

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ԿՈՊԻՏ ՊՈՆԶԻԱ — ԹՂԹԷ ՎԱՐԴ

Իմ պատուհանին դու միշտ կաս,— թղթ է կոշտ ծաղի՛կ, ձեռքով
պատրաստած,
Եւ բոլորը տեսնում եմ, որ դու թղթից ես ու կոշտ,— անմարա՛կ
սարքած.—
— Ես չեմ ամաչում, ուրիշներն ամաչում եմ այդպիսի ծաղկի համար՝
իրենց պատուհանին:—

Իմ պատուհանին դու միշտ կաս — թղթ է կոշտ ծաղիկ,—
Դրանով — պարզ երեւում է իմ վառ սէրը բոլոր ծաղիկների
Հանդէպ — որոնք առմիշտ բացակայ են այստեղ,—
Դրանով — ակնյայտ է իմ վառ ցանկութիւնը,
Մէկընդմիջտ իմ կանչը՝ կենդանի ու բուրոզ վա՛րդը դէպի...

Ուրիշներն ամաչում են — ես չեմ ամաչում,
Որ ցանկութիւնս այդպէս կոշտ է երեւում պատուհանիս,—
Ես միայն սաստիկ պիտի ամաչէի ու տխրէի — թէ չունենայի
պատկերը ծաղկի — բնա՛ւ,—
Թէ ցանկութիւնս ի սպառ կորսուէր՝ այդ ծաղկի տեսքով — անհե՛տ:—

Գիտե՛ք ի՛նչ, դու՛ք հենց նրանք է՛ք — որ չեն նուիրում ինձ
 բուրոզ վարդեր,—
 Իսկ ես՝ ձեզ հակառակ ահա — գովում եմ հենց իմ —
 քղթե վարդը — կոպիտ պոեզիան,—
 Որ զարդարում է — իրօք — իմ կեանքը:—

Այն իմ նարտարութիւնն է՝ սէքս ապրեցնելու առմիշտ,
 Այն իմ նարտարութիւնն է՝ ցանկութիւնս վեր պարզելու առմիշտ:

Այն իմ ձեռքն է, որ չեզած տեղը զարդարում է պատուհանս,
 Այն իմ սիրտն է, որ միշտ ծաղիկ է տալիս:

Ես սիրում եմ իմ նարտար ձեռքը, որ միշտ պատրաստում է վարդ,
 Ես սիրում եմ իմ նարտար սիրտը, որ միշտ երագում է կեանք:

ՏԱՆԵԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



*ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ «Քարէ սեղան» բանաստեղծական
 ժողովածուին նուիրում Ջաւէն Ա. Կոմստանի գրախօսականին մէջ
 բնթերցողը կը կարգայ:*

... Տեսէք, թէ ինչպէս է փոխում բառի ու պատկերամիջոցների ընտ-
 րութեան սկզբունքը մի ուրիշ բանաստեղծութեան մէջ, որի քնարական հերո-
 սը մարդկային կեցութեան այլ ոլորտի է պատկանում:

Կարգանք. «Դայանա Տէր-Յովհաննիսեան» բանաստեղծութեան
 առաջին մասը.

*Զգուշօրէն կարդացի մի փոքրիկ գիրք,
 Ուր Դայանայի սիրտը դրում էր
 Միրանենու բոյրի,
 Ապակու, բետոնի
 Եւ նեւրոզի եղրին:*

Պատկերի մէջ ո՛չ միայն հերոսուհու մարդկային դիմապատկերն է, այ-
 լեւ՝ նրա ստեղծածի էութիւնը: Այստեղ նաեւ հեղինակի վերաբերմունքն է
 նրա նկատմամբ: Դայանայի փոքրիկ գիրքը չկարդացողը կուհում է, որ նրա-
 նում ջղածիզ ժամանակի դէմքն է, նաեւ երեւում է նրանից երես շրջած բա-
 նաստեղծուհու հոգին, որ պարուրում է բնապաշտութեան բարի յոյզերով
 («Գարուն», 1987, թիւ 5, էջ 79):

Ա. ՇԵԿՈՅԵԱՆ

**ԹՌԻԶՔՆԵՐ ԵՐԱԶՈՒՄ
 ԵՒ ԱՐԹՄՆԻ**

*Տանեա Յովհաննիսեան բանաստեղծուհին մամուլում տպագրած իր
 հասուկենա բանաստեղծութիւններով արդէն որոշակի տպաւորութիւն թողել
 էր: Իրենից ընդամէնը հինգ-վեց բանաստեղծութիւն կարդալով՝ շատերս ան-
 համբեր սպասում էինք իր այս «Հրաբուխի ծաղիկ» ժողովածուին: Հաղու ա-
 դէպ պատահող բան. բանաստեղծուհին «Առվետական գրականութիւն» ամ-
 սագրի եւ «Գրական քերթ»-ի իրեն յատկացուած փոքր ասրածքում թրթիռ-
 ղզացմունքների մի անկաշկանդ ու միանգամայն անծանօթ համալիր էր
 առաջարկում մեզ:*

*Ինչեւէ, գրքոյկն արդէն կայ ու երբեւէ գրախօսական չգրած մէկին հա-
 մոզում է վերագառնալ եւ գրաւոր անգրագառնալ պոեզիայի առեղծուածին:*

*Եւ առաւօտ է:
 Մաքուր է օդը, ճանապարհը, երկինքը:
 Պայծառ է խոտի գոյնը, քո դէմքը, սարերին ճտած հորիզոնը:
 Անազարտ է արթնացումը երեխայի, ծերունու, ազգկայ:
 Փռշի չկայ ծաղկի քերթին, քո մագրին,
 լուսամուտների կապոյտ ապակիներին:*

*Այսպէս է սկսում: Այսպէս, սրտում տեղ գաած պատկեր-զգացում-
 ներն իրար բերելով եւ զգուշութեամբ գուրգուրելով, սկսում է Տանեա Յով-
 հաննիսեանը: Եւ ապա՝*

*Հիմա ամուր եմ յեմուած հողին,
 Հիմա բոլորը անխար եմ, լիիրաւ, կատարեալ,
 Գիտեմ ամէն ինչ՝ ո՞ւր գնալ, ինչո՞ւ, եւ այլն,
 Կայ միայն մի պատասխան — լինել:*

*Լինել—ը Տանեա Յովհաննիսեանի ու էլի շատերի պատասխանն է: Իր
 այս լինել—ը հեշտ արտաբերում բայ չէ եւ ցաւի, սիրոյ — կեանքի բազմա-
 բարդութիւններում է լինելութեան իրաւունք նուաճում: Այս ամէնի մասին
 Յովհաննիսեանը գուցէեւ սեւեռած չի մտածում, պիտի որ սեւեռուն մտածած
 չլինի, քանի որ ինքն ողնուծուծով այս ամէնի մէջ է լինում—կայանում: Իրենը
 իր կեանքն է ու իր բանաստեղծութիւնը, առաջին հերթին իր կեանքը եւ առա-
 ջին հերթին իր բանաստեղծութիւնը: Խօսքը խօսք է բերում, առջը բերում է
 նոր առդ, եւ սկսում բանաստեղծութիւնը շարունակելով է յաջորդի ու յա-
 ջորդների մէջ՝ գառնալով ճակատագրի ու բազմածալ հողեմիջանկների բա-
 նաստեղծական պատմութիւն—չարագրանք: Բարոյական խնդիրը հենց
 առաջնայինն է, բայց շարողի նշոյլն իսկ չի հանդիպում: Քարոզը գուցէ ար-
 էւլ ու աւարաուել է նախքան բանաստեղծութեան սկսուելը, յամենայնդէպս,
 մենք իրեն չենք հանդիպում, եւ ինքը մեզ խոստում տալով չի անհանգստաց-*

նում: Բարոյականութիւնն էլ մեզ չի պարտադրում, եւ, ընդհանրապէս, այս զբոյնը մեզ ոչինչ չի պարտադրում: Մեզ պարզապէս բանաստեղծութիւնների մի շարան է առաջարկուած եւ ասուած է՝ այս է: Իմ ցաւն է: Իմ հոգսն է: Իմ սէրն է: Իմ հիացմունքն է: Իմ հիասթափութիւնն է: Իմ վիրաւորութիւնն է: Իմ զոհութիւնն է: Իմ դժգոհութիւնն է: Իմ անդրդուելիութիւնն է: Իմ փխրութիւնն է: Իմ հաւատն է: Իմ կասկածն է: Իմ կեանքն է: Ե՛ս եմ: Մեզ անծանօթ, բայց եւ հարազատ այս վախի մեզեզիները բռնող ու բաց չթողնող են, որովհետեւ նոթագրուած են սրտով:

Հէ՛յ, դո՛ւք, ելէ՛ք, պարէ՛ք
այս մոռացուած վախը
եւ լսեցէք քայտոցը ձեր սրտերի,
ականց դրէք,
եւ ուզարկէք քնքաւէտ
ձեր երկտողը՝ ում որ կ'ուզէք:

Մեզ այսպէս է հրաւիրում մասնակցութեան, այսպէս թեթեւօրէն մեր լաւ լինելն է կամենում, ուզում է մեզ իր ուրախութեանը (տխրութեանը) մասնակից դարձնել, որովհետեւ՝

Իմ մէջ օրօրուում են սիրոյ տողերը՝
Առ կեանքն ու երկինքը,
Սիրոյ իմ տողերը օրօրուում են, ծփում,—
Ինչպէս ես այս քաղցր վախի մէջ, սիրելիս,
Ինչպէս ես այս քաղցր վախի մէջ:

Ուրախութեան եւ տխրութեան սահմանազատումը որոշակի չէ, որովհետեւ այս երկուսի արանքում ապրուած եւ ապրուելիք կեանք կայ: Բանաստեղծուհին մեզ (կամ աւելի կոնկրետ մէկին) ուզում է անպայման մասնակից դարձնել իր հանդէսին, բայց եւ ինքն արդէն իսկ նախապատրաստուած է՝ առանց մեր (կամ աւելի կոնկրետ մէկի) օգնութեան իր ուրախութիւնը տխրութեան փոխել: Վերահաս կսկիծն ինքը ճշգրիտ է նախազգում, բայց եւ չիմանալու — չզգալու է տալիս, չիմանալու տալով նախապատրաստուում ու նախապատրաստում է: Այս չիմանալու տալն է իր իմացած բանաստեղծութիւնը:

Ախ, դու գիտէի՞ր, որ ես մեռակ էլ կարող եմ պարել,
Որ ես մեռ-մեռակ էլ կարող եմ պարել,
Մեռակ էլ բրբռալ խնդագին, ոսկեփայլ,
Մեռ-մեռակ, խնդագին, ոսկեփայլ...
Ես մեղաւոր չեմ, ի հարկէ, ինչ արած,
Ուրախութիւնն է, որ այսպէս շատ է
Գինոտ ու ծաղկոտ աշխարհում, բուրմունքի աշխարհում:

Իր մեղաւորութիւնն իր ուսերից թեթեւօրէն փորձում է թօթափել, բայց եւ հաճոյքով է մարմրում քաւութեան նոխազ դառնալու մոլուցքի բոցին: Իրարից տարրեր երկու փիճակ: Ինչո՞վ իրարից տարրեր: Մեր աչքի՞ն են իրարից տարրեր երեւում: Տանեա Յովհաննիսեանի համար, կարծում եմ, տարրեր փիճակներ գոյութիւն չունեն, տարրերը մարդիկ են՝ ապրողներն ու կրողները: Այս տարրեր փիճակների մերձեցումը հեղինակի ցանկութիւններից մէկն է:

Ի՞նչ անեմ, ես մեղաւոր չեմ, ի հարկէ,
Մեղաւոր չեմ,
Գուցէ երբ, չես գալիս, ես մեռակ էլ պարում եմ,
Ես մեռակ էլ կը պարեմ,
Ես՝ քաղցր վախս իմ արքայական —
Պարտ'ում եմ...

Երեւի անտեսեմքութիւն ցուցարերեցի՝ գրախօսութեան սուղ տարածքում «Պար» բանաստեղծութիւնն ամբողջութեամբ մէջբերելով: Ինքնաբերարար ստացուեց: Սէրը Տանեա Յովհաննիսեանի հաւատն է: Հաւատալով՝ ինքն իրեն կեանք է պարզելում: Հաւատալով՝ մի գլուխ պարզելում ու պարզելում է: Ընթերցանութեան ինչ-որ մի կէտում մենք եւս միանում ենք իրեն ու իր հետ սկսում ենք հաւատալ այս պատմութեան իրական ու վարդապետ լինելուն: Մեզ հաւատալուց բացի ուրիշ ոչինչ չի մնում:

Ուզի թէ չուզի մէկը պիտի գայ հիմա
Ինձ տանելու դաշտ,
Ուզի թէ չուզի,
Քանի որ ես հիմա նստած եմ կարմրի մէջ
Ու փոշի չկայ փայլուն մագերիս:

Ուզենք թէ չուզենք, պիտի հաւատանք այս երազին ու այս իրականութեանը, ուզենք թէ չուզենք պիտի հաւատանք, որովհետեւ հակառակ մահն է՝ հողու ու յոյսի աւարտը: Տանեա Յովհաննիսեանն ինքը իրեն ճամբում է՝ «մի փոքրիկ» երջանկութիւն փնտոելու: Հենց Տանեա Յովհաննիսեանն է ճամբում, ինքը, եւ ոչ թէ քնարական հերոսը կամ հերոսուհին: Հեղինակին հերոս կամ հերոսուհի անուանելու հնարաւորութիւն այս բանաստեղծութիւնները չեն տալիս, որովհետեւ հեղինակի ու հեղինակային տեքստի միջեւ «պատշաճ» հեռաւորութիւն-տարածութիւն չկայ, չի եղել: Իր մետաֆորն իր հոգուց ու իր խօսքից չի դաւաւում, աչք չի ծակում, իրականն ու անիրականը մի գծի ու մի տարածքի վրայ են՝ միեւնոյն ճակատագրի մէջ: Բանաստեղծութեան հեշտ արտադրութեան մեր ժամանակում աւելի ու աւելի ենք կարօտ այսպիսի բանաստեղծութիւնների: Այսքանը: Գրախօսութիւնը բանավէճի վերածելու ցանկութիւն բնաւ չկայ, մանաւանդ որ «Հրաբուխի ծաղիկ» ծողովածուի մասին ասելիք դեռ ունենմ:

Փոքրիկ մէկը, մի փոքրիկ մարդ,—
Որ երբ նստած խոհանոցում գործ եմ անում,
Մի փոքրիկ օգնի ինձ, մի փոքրիկ նստի կողք-կողքի,
Կամ երբ կապոյտ ծաղիկ եմ ասեղնագործում զգեստիս,—
Մի փոքրիկ զարմանայ մատներիս շարժումնեմով,—
Ու որ լողանամ գործից յոգնած, ու տաքանայ մաշկս,—
Մի փոքրիկ շոյի ու հիանայ իմ գեղեցկութեամբ,—

մի փոքրիկ:

Իր երազած զլխաւորն ու մեծը «մի փոքրիկ» անուանելով ու երեխայարար մեր աչքին աննշան ներկայացնելով՝ երազելու եւ ուզելու իր իրաւունքն է խնդրում եւ հոգեբանօրէն կազմուպատրաստ է բախտի հեա հանդիպմանը: Ինքն իրեն ու մեզ հաւատացնում է՝ որ մեծ բան չէ իր ուզածը՝ այս ու այսքանն է: Այս ու այսքանը՝

Փոքրիկ մէկը, մի փոքրիկ մարդ,
Որ երբ խնդամ ուրիշի հետ ու հեռանամ մի փոքրիկ,
Նայի հետփիցս մի փոքրիկ, երկար ու քախծոտ, սիրագեղ,
Կամ երբ բանաստեղծութիւններ յորինեմ յանկարծ —
Մի փոքրիկ բարձրանայ, մի փոքրիկ ուշադիր լսի իմոնց —
Ես կ'ուզեմ մի փոքրիկ, մի տխուր, մի անհանգիստ մարդ —
Որ ես էլ կարողանամ ցրել նրա տխրութիւնը մի փոքրիկ:

Տանեա Յովհաննիսեանն առայժմ բառի պաշտամունք չունի: Բառ-խորհրդանիշը համարեա՛ թէ չկայ, առանձին բառերի բացարձակեցման չենք հանդիպում: Առայժմ իր զլխաւոր խնդիրը զգացմունքի ճշգրիտ ու խորունկ վերապրումն է: Այսօրուայ իր ուզածն այս է, եւ ինքն առայժմ չի կամենալու

իր զգացմունքն ու իր տողը տրոհել անանձին մասերի: Իսկ խօսքի զօրու-
թիւնը, նաեւ ի՛ր խօսքի զօրութեանը բանաստեղծուհին մեծ սիրով է հաւա-
տում: Հաւատալով ապաւինում է իր խօսքին, քանի որ «երկրի վրայ ինչ որ լի-
նում է՝ լինում է նախ խօսքի մէջ» (Հրանա Մաթեոսեանի ձեռագրագրութիւն):
Պօսքի միջնորդութեամբ ցանկալիի ու իրականի մերձեցումը շարունակուող
ու անվերջ է, եւ, ի վերջոյ, մի բաղձալի կէտում այդ միութիւնը պիտի կայա-
նայ:

Ձեռքերս այնպէս են հասել — այնպէ՛ս, —
տարիներ պահել եմ արեւի տակ — տարիներ՛ր,
բեր քեզ աչքերիդ — բացուեմ աչքերդ — բացուե՛մ,
բեր դիպչեմ երեսիդ — ջահելանաս — բե՛ր:

Նուիրուելու ու նուիրարերուելու ցանկութիւնն անկեղծ է, եւ պոե-
զիան ստեղծում է առանց զարմանալի գիւտերի սպասարկման: Պոեզիան
մարմնաւորուել է հողու խորքում եւ փոխանցում է մեզ՝ դրսիններէս: Մաքի
թուիչքը յօրինովի չէ եւ զլիաւորապէս ծնում է զգացմունքի շիկացումից:
Հենց այս պահի զօրութեան ներքոյ է Յովհաննիսեանը բառերի միջեւ
սկզբունքային խտրականութիւնը բացատրում: Եւ յանուն յանգերի էլ՝ յանուն
ճշգրիտ ու զրնգուն յանգերի, երբեք կանգ չի առնում ու ժամանակ չի կորցը-
նում: Ուրիշ, մէկ այլ հեղինակի մօտ այս ամէնն իրրեւ թերութիւններ գուցէ
դիտուեն, իսկ «Հրաբուխի ծաղիկ» ժողովածուի «Թերութիւններ» շտեմնե-
լու ենք տալիս, քանզի համոզուած ենք, որ հեղինակը միտումնաւոր է մի կողմ
գրել ոսկերչի իր հակումները: Չզայցմունքների ազատութիւնն ու տառտու-
թիւնը: Իր համար այժմ կարելորդ դրամայի անկաշկտնդ պատումն է:

Տօնն անցաւ, — ես մէկիկ-մէկիկ իջեցրի գարդերը ծառի,
եւ ո՛վ սահմանեց, թէ՛ անցաւ ժամը — այլեւս — ծառգարդարի —
ինչպէ՛ս՝ իմ ձեռքով հանգցնում եմ այս կանաչ

խարոյկը ուրախութեան...
Ներիր, ներիր, ծառ իմ, շարժումն քո անմեղ է,
տարերայնօրէն անգոր —

եւ հետեւում եմ սոսկ առօրեային:

Այսպէս տօնն անցնում է, եւ սկսում է դրաման: Աւելի ճիշտ՝ դրաման
վերսկսում է, որովհետեւ տօնի մէջ էլ դրամա կար, տօնն ինքն էլ, տօնտկա-
նութեամբ հանդերձ, դրամա էր: Մալաւատեսի ու կեանք սիրողի դրամա է՝
շարունակուող ու շարունակարար յոյս տուող:

Տանեա Յովհաննիսեանի «Հրաբուխի ծաղիկ» առաջնեկ ժողովածուն
աւելի քան ստացուել է: Գրքոյկի է՛, գեղարուեստական մակարդակը, է՛,
ծաւալը, է՛ ձեւաւորումն ու պոլիգրաֆիան տեղը տեղին են: Ինչպէս ասում
են՝ հեղինակը բողոքելու տեղ չուրի: Ամբողջական ու բանաստեղծական գիրք
է հրատարակուել: Այն անկասկած առաջին հերթին Տանեա Յովհաննիսեանի
բանաստեղծական շնորհքի արգասիքն է, եւ անպայման նաեւ Վահագն
Դաւթեանի կամեցողութեան արգասիքը (բանաստեղծը գրքի խմբագիրն ու
առաջարան-մաղթանքի հեղինակն է):

Աւարտելով խօսքս, ցանկանում եմ նոր թուիչքներ՝ իր երազային ու
իրական աշխարհում:

ԱՐՄԷՆ ՇԷԿՈՅԵԱՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄԵՂՐԷ ՎՆԱՍ

Դու թողնո՛ւմ ես, թոյլ ես տալի՛ս համդ առնել,
մեղրածո՛րս, ոսկերի՛կս ու ֆազգրաւո՛ւն,
խաբխբում ես, ցոլցոլո՛ւմ ես ու կպչո՛ւմ ես խաբկանքներո՛վ...
Բայց ես արդէն, օ՛, խբուել եմ ո՛ղջ մարմընով,
փոքրիկ, փոքրիկ իմ մարմընով,
մրջիւնի պէս իմ մարմընով,
եւ մեղրի մէջ, եւ ֆազգրի մէջ՝ պի՛նդ ու հեղձո՛ւկ, դեղնացոլո՛ւն...
Կր խեղդուեմ, օ՛, իմ մեղրէ — գօրութիւնն՝ ի՛նչ —
չունե՛մ, չունե՛մ՝
ինձ եւ ֆազգրից դուրս ֆաշելո՛ւ, ազատելո՛ւ...
Ա՛խ, անիծուէր պահը, մեղրի՛կ,
թեւս ֆնֆշիկ,
իմ՝ մրջիւնիս, թեւը պոկուէ՛ր,
ա՛խ, չընկնէի բաժակիդ մէջ...
ա՛խ, չառնէի համդ անուշ...
ֆազգրաբարո՛յ —
թոյլ չտայի՛ր, չկպչէի՛ր,
չխեղդէի՛ր
շափարաշատ վնասիդ մէջ — անփութութեան — չխեղդէի՛ր...

* *

Ամէն պահի սիրտս փափուկ-մելամաղձիկ ցմլըւում է,
մի հիւանդոտ, մի վշտահար, անապաֆէն երեխայ է այնտեղ տնօնում,
մի տխրամած, անզէն, հյու իր ցաւի դէմ՝ մի ձագուկ է լուռ թպրտում.
հովատակն է այնտեղ պառկել, ձորի միջին,
պազ ու անհամ ֆարն է լիզում,
սառած աչքն է լուսնին յառել —
հոգեվարքն է, հոգեվարքն է, էլ չի շնչում:
Ամէն պահի, ամէն պահի իմ սրտի մէջ
երագներիս դուռն է փակում,
եւ բարձրանում են դարպասները կարծրաերկաթ իմ կեանքի դէմ —
վարդից նագուկ իմ կեանքի դէմ,
եւ արիւնս ջուր է դառնում,
եւ արիւնս ջուր է դառնում...

Առաւօտներ հետաքրքիր ու բազմազեղ,
 ինչպէ՞ս էք ինձ առնում ձեր մէջ, տանում յստակ օրը դէպի — նորէն—
 բոյրեր մաքուր ու հոտաւէտ այգաբացներ,
 կապոյտ, ոսկի, մարմանդ գոյներ ցօղաթաթախ,
 ինչպէ՞ս էք ինձ առնում ձեր մէջ, տանում էլի օրը դէպի — նորէն:

ՏՕՆՆ ԱՆՑԱԻ

Տօնն անցաւ, ես մէկիկ-մէկիկ իջեցրի զարդերը ծառի.—
 Եւ ո՞վ սահմանեց, թէ անցա՛ւ ժամը — այլեւս — ծառզարդարի՛ —
 ինչպէ՞ս՝ իմ ձեռքով, հանգցնում եմ այս կանաչ խարոյկը ուրախութեան
 արագ...—

— Ներիր, ներիր, ծառ իմ, շարժումն քո անմեղ է, տարերայնօրէն
 անգօր — ես հետեւում եմ լոկ առօրեային...—

... Եւ ապա դու, որ սկիզբից ինձ զարդարեցիր մատանիներով ու
 ապարանջաններով,—

Մի հասնի այդ վատ ժամանակին՝ երբ ետ կ'առնես նուէրներդ...
 Մի հասնի այդ ատելի հասուն մտքին՝ ետ առնելու նուիրաբերումներդ,
 Մի պարզաբանի — թէ ես արժանի չեմ այլեւս զարդեր կրելու — քո
 ձեռքի տուած,—

Մի տանի երեսիս փայլն ու ժպիտը, գոհարներս մի խլի ետ,—
 Մի թողնի ինձ — անտօն, անուրախ, անմատանի, անզարդար,
 Մի փանդի պսակն իմ հարսանեկան, ամուսնալոյծ մի՛ անի ինձ —
 դարձեալ՝ անհմա՛յք, լքուա՛ծ ու դատա՛րկ,—

Չէ որ մենք ամուսնանում ենք (սէրը, որ մեր զարդն է) այդ սիրով
 միշտ զարդարուած մնալու համար...—

Ի զուր ապրելու թառամած տեսնով մի՛ պատիր հոգիս...—

Ես ծառ չեմ, ես կիւն եմ — որին դու միշտ պէտք է զարդարուած պահես՝
 Ուրախութեան պշրանգներով, շոյլ սիրագեղումներով փայփայուած —
 յարգի՛ դուրս գալու մարդամէջ —
 ցնծո՛ւն...

ՏԱՆԵԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

**ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ
 ՃԱՄԲԱԲԱԺԱՆ**

Մի անգամ, յիշո՞ւմ ես, դու ասացիր՝ սարսափելի արհաւիրքից յետոյ
 ողջ մնացածներն աւելի են մեռած, քան նրանք, ովքեր զոհուած-խաղաղուած
 են: Բանաստեղծ էիր, աննում էիր, թափանցում էիր մարդկային հոգեբանու-
 թեան ոլորանները, ո՞վ դիտի, դուցէ նաեւ գուշակում էիր ճակատագիրը,
 ահաւոր երկարչարժին զոհ գնացածի քո աչքերով դուցէ հիմա էլ տեսնում ես
 մեր՝ ողջ մնացածներին անասելի ցաւից դատարկուած ու ամայացած հոգիներ-
 րը: Քեզ համար դա դիրք է տպագիր. կարդում ես թեթեւօրէն, քանի որ գէն ես
 նետել առօրեայ հոգս ու տառապանքով ծանրացած մարմնական կաղապարը
 եւ դու ա ողբեցնիկ, հեշտութեամբ ընթերցում ես այն, ինչ ապրողներին համար
 մնում է անվերժանելի: Չլսուած, չաւանուած, տարօրինակ մխիթարու թիւն է,
 որ հիմա մեզ նման չես քայլում այս սարսափելի փլատակի, մազապուրծ
 փոկուածների ողբ ու կականի, այս ստուած Հայնաջքների միջով եւ չես փըլ-
 ւում-փլատակում աւերակի ներկայութիւնից: Թող Գիւմրին, զի մըրցի ըս-
 նաստեղծ Տանեա Յովհաննիսեան, քո աչքերում մնայ այնպիսին, ինչպիսին
 եղել է՝ մի փոքրիկ հրապարակում գէմ-դիմաց կանգնած, իրար հետ խօսք ու
 աղօթքի բոնուած նրբակերտ եկեղեցիների հարեանութեամբ, դիմընցու
 կենսասիրութեամբ, սրբազործուած հինը, նախնիներից ժառանգած ազաթ-
 սովորոյթը նորօրեայ քաղաքակրթութեան թոհու բոհում պահել-պահպանելու
 նախանձելի հնարամտութեամբ:

Դու, Տանեա Յովհաննիսեան, մահուանը չէիր բոլորովին, ինչպէս փլա-
 տակինը չէր Գիւմրին: Քո հոգում, քո բանաստեղծութեան մէջ նոյն կենսասի-
 րութիւնը բազմերանգ ծաղկում էր, իսկ դու ընդամէնը մի փոքրիկ ծաղկե-
 փունջ հասցիր հաւաքել, մի զրբոյկ՝ «Հրաբուխի ծաղիկ» վերնագրով,
 պատմուածքների՝ թերեւս շտապագրուած մի ժողովածու: Այդ քանը: Միւս-
 ները չհաւաքուած՝ կը կորչեն անյիշատակ, չենք տեսնի, չենք շնչի նրանց բոյ-
 րը, քո թողածի կենդանի ներգործութեամբ միայն կ'ակնկալենք նրանց եզրա-
 գծերը: Չգիտեմ ինչու մտաբերում եմ քո «Կոպիտ պոեզիա-թղթէ վարդ»
 բանաստեղծութիւնը: Յիշո՞ւմ ես, երբ դու առաջին անգամ կարդացիր այն, ես
 ասացի՝ թուում է, թէ քո բաց պատուհանից երեւացող այդ թղթէ վարդն աւելի
 է բուրում, քան՝ եթէ այն իրական լինէր: Այդպէս էր, դու կարողանում էիր
 կենդանի չունչ ու ջերմութիւն հաղորդել քեզ շրջապատող իրերին ու առար-
 կաներին, որովհետեւ սնում էիր քո հոգու լոյս ու ջերմութեամբ, քո էութեան
 մէջ պահում, փայփայում, տաքացնում էիր, եւ, պատահում էր, քո սողերում
 մեռածը կենդանանում էր, անչու նչն ու անզգան խօսում էին զգայացուց,
 բանաստեղծի էին հանդիպել, նրա հետ ապրում եւ ապրեցնում էին ընթերցո-
 ղին:

Իմ պատուհանին դու միշտ կաս, թղթ է կոշտ ծաղիկ,
 Եւ բոլորը տեսնում եմ, որ դու թղթից ես ու կոշտ,
 — Ես չեմ ամաչում, ուրիշներն ամաչում են այդպիսի
 Իսկ ես, ձեզ հակառակ, ահա գովում եմ հենց իմ
 Այն իմ նարտարութիւնն է՝ սէքս ապրեցնելու առմիշտ,
 Այն իմ ձեռքն է, չեղած տեղը զարդարում է
 պատուհանս, առմիշտ:

Այն իմ սիրտն է, որ միշտ ծաղիկ է տալիս:
 Փյատակում տան ու քաղաքի մասի չէ իմ այս խօսքը, չէ, փլատակ-
 ւած կեանքի մասին է, որովհետեւ, ի վերջոյ, ուզում եմ հաւատալ, փլատակը
 էր վերանայ, աւերակից նոյն ճարարութեամբ, ինչպէս եղել է առաջ՝ հնում,
 1926ի երկրաշարժից յետոյ, նորից կը յառնի Գիւմրին: Միայն չէ կեանքը կը
 մնայ կիսատ եւ դաժանօրէն ընդհատուած: Բայց էլի՝ չլսուած, շտեմնուած,
 տարօրինակ միջթարութիւն է՝ երկնքում էլ չոչնչին մենակ չէ, չոյր, քեզ հետ
 են արհաւիրքից զոհուած չոչնչակից ընկերները՝ Պատուական Ղուկասեանը,
 Հայկանի Տօնոյեանը, Վարդգէս Մովսիսեանը... Միջթարութիւն՝ նրանց հետ չո-
 կիսատ գրոյցը շարունակելով: Մենք էլ, ուրեմն, մեր մէջ կը պահենք—կը պահ-
 պտենք այն, ինչ դու թողել ես իշխատակ, իրրեւ կեանք, յուշ ու բանաստեղ-
 ծութիւն:

ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՕՐԸ ԿԱՊՈՅՏ Է...

Օրը կապոյտ է,
 օրը հանգիստ է,
 անցորդներն այսօր փափուկ են հպում,
 մեզմ գուրգուրում են այտերս,
 փոզոցը լայն է, անցումն ազատ է,
 ես մոռացել եմ արցունքներս.
 եւ լոյս, եւ գոյն է, եւ տաք ծառեր են,
 եւ քննուշ կիւն է՝ քննուշ կնոջ հետ
 ժպտում ու խօսում,
 ամէն ինչ բացուել, բացազատուել է,
 եւ արեգակին տեղ կայ երկնքում.
 ամէնուր ասես հոգի կայ, բարեւ,
 եւ նորութիւն է՝ որ սա մանկիկ է, որ
 սա պապիկ է, իսկ սա ճանապարհ,
 ազնիւ անցուղարձ, մեզմ ցանկութիւններ,

հատուկենտ գոչիւն,
 մեզմ յարդարանք է սրտի ու մարմնի,
 փափուկ շարժում ենք ու փափուկ երգում,
 իրար նայում ենք ու քոյր ենք կարծես,
 մի վարդ ենք նրբին մի թփի բուսած,
 անում ենք անվէն,
 կշիռս թեթեւ, երակներս տաք,
 առողջութիւնս վերադարձել է,
 արձակում է ժիր սլացքի նետեր,
 ես տուն եմ մտնում կամեցող, թեթեւ
 ու ջուր եմ խմում դանդաղ վայելքով,
 յետոյ պարգում եմ իմ մատը օրուան
 եւ խնդրում նշան այսօրուայ սիրոյ —
 մի պարզ, շոգշոգուն, ազնիւ մատանի.—
 ես գոհ եմ, այսօր,
 թող շարունակուի:

ԱՌԱԻՕՏ

Ես կամեցայ առաւօտուն
 նորէն տեսնել ծաղիկներս գուարթ
 եւ պազ ջրով, պազ ու գուլալ,
 ողորկեցի դրանք:

Հանդիպեցի այսօր ջահել մի պատանու եւ փրփրաբաշ
 նժոյգն իմ երազի նուիրեցի նրան.
 որ պատանին առաւօտն էլ կայծկլտայ,
 յաւերժ ջահել ապրի, կրակ:

Մետաքս ծովը
 ծալծլեցի քննուշ ու պահեցի
 աչքերիս մէջ.

որ նա ծփայ, որ օրօրուի, որ ալիքուի
 վազն էլ՝ առաւօտուն, ընդմիշտ:

Ես լսեցի մի անուշ ջութակ,
 ինչպէս մեզմիկ պարեց
 ազգայ մատների տակ,
 եւ նուազն այդ ես ուզեցի պահել
 վազն էլ՝ առաւօտուն, ընդմիշտ...



ՏԱՆԵԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

5377

ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

(Հատուած)

ԳԱՏՈՒԱԿԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ «ԲԱՐՈՎ ԵՍ ԵԿԵԼ» գիրքը աչքի է ընկնում փաստի դիտողականութեամբ և հանգամանքների հոգեբանական դունաւորումներով: «Օտար հարագատ» պատմուածքը հոգեբանական մի հետաքրքիր էտիոլոգիա է, բեկուած ընտանիքի հորադատ մարդկանց ներքին օտարումների ու վերադարձի անբացատրելի անցումներով:

«Բարով ես եկել» վիպակը սիւժետային լայն պլանի վրայ է գնում հեռուի կեանքի պատմութիւնը: Բժշկական ինստիտուտի ուսանող Գարեգինը իր բարեկամի հրաւերով մեկնում է գիւղ, անցկացնելու մի քանի օրերի հանգիստը: Կաթի գործարանը, ուր աշխատում է իր բարեկամը, հրապուրում է նրան աշխատանքային արարողութիւնների ուրբանով, որին մի արտակարգ հմայք էր տալիս Լեոնուհին՝ գեղեցիկ ու անդիմադրելի այդ աղջիկը, գիւղական իր պարզութեամբ և բնաւ չհաղորդուած իր մաքրութեամբ: Օրերն անցնում են աննկատ, հանդիպումները՝ սովորական, բայց Գարեգինի և Լեոնուհու հոգու բջիջներում գրանցուած է զգացմունքի մի թաքուն հոսանք, որը սակայն աւելին չէր կարող խոստանալ, քան հնարաւոր առիթներով Երևանում հանդիպելու ցանկութիւնը: Սակայն առերևոյթ ողորդականութեամբ այդ նախերգանքը, շարունակութեան մէջ ի յայտ է բերում կեանքի իր դրաման, որ վերստուգում է երիտասարդ ուսանողի բարոյական բմրոնումները, նրա մէջ յայտնարեւելով կամքի ու անհատականութեան գիտակցութիւնը: Երիտասարդական մոլորութիւնները յաճախ պաշարում են այնպէս, որ չեղումը թրուում է բնական անհրաժեշտութիւն, մա՛նաւանդ՝ երբ նա ստեղծում է կեանքի իր ուրոյն փիլիսոփայութիւնը: Ունենալ նիւթական ու բարոյական նեցուկներ, օգտուել խնամակալութեան բնական մեղքից և ակնկալել փայլուն ապագայ, փոյթ չէ, թէ զոհաբերում ևս անձնական երջանկութեան ինչ-որ էմպիրիկ թուացող արժէքներ: Այդ մոլորութիւնից զերծ շմնաց նաև Գարեգինը և դէպքերի տարերային ընթացքով նա մի օր իրեն գտաւ հովանաւորի աղջկայ հետ ամուսնական կապի մէջ: Եւ զուցէ հենց այդ պէս էլ նա համակերպուել էր ճակատագրին, և թէ վերստին չյայտնուէր Լեոնուհին: Հանդիպումը դրամատիկ էր ու ցաւագին: Լեոնուհուն չվրդովեց անակնկալ պատմութիւնը: Երիտասարդի խոստովանութիւնը անկեղծ էր, ներշնչող և այդ անկեղծութեան մէջ առկայծում էր նրա զգացմունքների հաւատարմութիւնը, նրա մոլորութիւնների ցաւագին տառապանքը: Եւ նրանք հեռանում են՝ ապագային թողնելով իրենց անաւարա սիրոյ անորոշ ընթացքը: Տարիներ են անցնում, Գարեգինը, կրելով իր ակամայ մեղքերի պատիժը, անցեալին է թողնում երիտասարդական մոլորութիւնների իր անցած կեանքը և վերադառնում գիւղ՝ գտնելով այն ճշմարիտ աշխարհը, որի մասին երազել էր և՛ դէպի որը ձգտել է նրա հոգու բնական մղումը: Այստեղ նրան սպասում էր Լեոնուհին՝ անաղարտ պահելով սիրոյ այն զգացումը, որով բարախել են նրա սրտի առաջին արթնացումները: Փոքր-ինչ ողորդական և բարեկարգ կայ սիւժէի հանգույցներում, և հենց այդ ողորդականութեամբ և վիպակի բովանդակութիւնը զգացմունքների գեղեցկութեան, հոգեբանական բունկումների վարակող ներգործութեամբ («Գարուն» 1984, թիւ 4):

ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆ



Պ. ՂՈՒԿԱՍԵԱՆ

Արձակագիր Պատուական Ղուկասեան ծնած է 20 Ապրիլ 1934ին, Ղուկասեանի շրջանի Սիգաւէլա գիւղը: Լեւինականի Մերկուրովի անուան նկարչութեան դպրոցը աւարակել է աք, կր հետեւի բժշկական ուսումնարանի պարնիթացներուն, ապա իրրեւ թուական կ'աշխատի շտապ օգնութեան կայանին մէջ: 1965ին կ'աւարակ Լեւինականի Մ. Նալբանդեանի անուան մանկավարժական ինստիտուտի մեթոդիկայի բաժանումը, ապա՝ 1980ին Մոսկուայի Ղեֆկտոլոգիայի ինստիտուտը: Իրրեւ Ղեֆկտոլոգ՝ կր պաշտօնավարէր Լեւինականի N2 1 մանկական դարմանասան մէջ:
Պատուական Ղուկասեան հրատարակած է պատմիւր ամբերնրու երեք ժողովածուներ՝ «Բարով ես եկել», «Անհանգստութիւն», «Եւ մարդը հորիզոնին չձուլուեց»:
Չու կ'ըրթայ 7 Դեկտեմբերի երկրաշարժին, Լեւինականի մէջ:

ԱՆՍՈՎՈՐ ԼՌՈՒԹԻԻՆ

Սովորութիւն էր. դաշտից վերադառնալուց յետոյ գիւղի տղամարդիկ, դեռ կարգին չընթրած, դուրս էին գալիս տնից, հաւաքուում գրասենեակի մօտ եւ սկսում իրար ձեռք առնել, կատակել: Բոլորից շատ նրանց գուարձութիւն էր պատճառում հաստավիզ Միոնը. նոյնիսկ այն ժամանակ, երբ բացակայ էր: Միոն շատ ժամանակ խուսափում էր գրասենեակի կողմերն երեւալուց:
Բայց ուրիշ ո՞ւր գնար: Արեւածագից առաջ նստում էր Գալուստի սայլը, գնում դաշտ, եղանով միանգամից կէս բլուր խոտ էր վերցնում... եւ բոլորից շուտ Գալուստն էր խոտի հետ երկինք բարձրանում, եւ բոլորից շուտ Գալուստի սայլն էր դաշտից դուրս գալիս ու բռնում գիւղի ճանապարհը... իսկ

երեկոյեան, գրասենեակի մօտ հաւաքուած տղաները շրջապատում էին Միոնին ու սկսում էր... Բայց Միոն, որքան էլ սրտնեղած, յաջորդ օրը ամէն ինչ մոռանում էր ու չէր կարող մնալ առանց տղաների:
Այդ երեկոյ, երբ Միոն գրասենեակի կողմը թեքուեց, նրանից ոչ ոք չփորձեց խլել ականջակալներով գլխարկը, որ ամառ-ամառ գլխին էր:
Միոն գարմացած համեց թելի տակ պինդ սեղմած գլխարկն ու քաշեց գլխին: Բայց այդ դէպքում էլ ամառվոր լուրջ էին տղաները: Միոն՝ մեծ-մեծ տրեխները դիտմամբ բտացնելով, մօտեցաւ խմբին: Բայց ոչ ոք չելաւ տեղից, թէ՛ Միո, նստի: Չմայած Միոն նստազր չէր, այն օրից, երբ քարը քաշեցին նրա տակից ու նա մէջքի վրայ շուտ եկաւ:

շում... Յետոյ յենակներով մի հայ յայտնուեց.

— Ուզում է իմանալ, քանի՞ տանկ ես խփել:

— Եսիմ,— Մխոն նորից ուսն է թօքուում ու աչքերը փակ ուզում է հաշուել՝ 5, 4, 2, քանի՞ս կը լինի:

— Ճի՞շդ է, որ տասնմէկ տանկ ես խփել,— ժպտում է յենակաւորը:

Մխոն նորից է ուսը շարժում, կանաչ արտը տրորոզ տանկերին խփեց... Յետոյ՝ իրեն էին ուզում նզմել՝ խփեց, խփեց... խփեց. իր ֆուրգոնի կողմը եկողներին՝ խփեց. երիտասարդ գինւորին էին ուզում նզմել՝ խփեց...

Հիմա գիւզում էլ չեն ծագում Մխոյին: Շատերը պատերազմից չվերադարձան: Մի քանիսն էլ վիրաւոր եկան ու այնքան հոգսեր: Բացի դրանից տարիքն առած մարդիկ են հիմա: Եղած նոր ջահելներ էլ Մխոյի կրծքին փայլուն մեղալներ են տեսել ու չեն հաւատացել, որ մի ժամանակ տղ մեաւաւոր մարդու հոգու հետ խաղացել են ջահելները:

Հին սովորուքին է. հիմա էլ Մխոն ուշխարը գիւղ բերելուց յետոյ շտապում է տուն, մի կտոր հաց ուտում ու իջնում գրասենեակի կողմը: Չնայած այն հին շինոյքը չկայ, նրա փոխարէն նորն է, մեծ-մեծ լուսամուտներով... ներսում՝ գունաւոր հեռուստացոյց... Բայց Մխոն սիրտ չունի, նա պատերազմում թողած աջ թեւի կողմով յենում է գրասենեակի պատին ու նայում ջահելներին: Տղաները կատակում, ձեռք են առնում իրար... իսկ երբ նկատում են

Մխոյին, լրջացած ելնում են տեղերից՝ նստէք, Մխո քեռի: Բայց Մխոն չի նստում, նրա համար պատին յենուելը հին սովորուքին է: Յաճախ տղաները աշխուժանում են՝ Մխո քեռի, քո անունը գրում գրուած է, եւ մէկը վագում, տնից գիրքը բերում ու էջը բացում է... Շրջկենտրոնում էլ են ցոյց տուել, թէ լաւ կռուողների մէջ քո անունը կայ: Բայց ինչ անի Մխոն, տառերը չգիտէ, որ կարգայ, ձեւակաւորէն նայում, նայում ու ուսերը վեր է հաշում՝ ի՞նչ անեմ:

Վերջերս պիտներները Մխոյին դըպրոց են կանչում, թէ Մխո քեռի, մի բան պատմիր պատերազմից: Բայց Մխոն նախ՝ շուտ է մոռանում, յետոյ էլ չի կարողանում տեղը տեղին պատմել: Միայն ասում է. «Կռիւ էր, երեսիւ է, մեծ կռիւ, շատ մեծ կռիւ» ու լռում է: Իսկ երբ պիտներները ուզում են վզկապ կապել Մխոյի վզին, չի թողում՝ թէ լաւ, երեսիւ է... ու յիշում է իր հասակակից տղաներին՝ թէ լաւ, տղաներ... «Թող տղերքը լինէին,— ափսոսում, տխրում է Մխոն,— թող նորից իր գլխարկը խլէին, շարտէին... թող նորից քարքաշէին տակից ու քրքային, ուրախանային...»:

Հիմա նրանց երեսները, թռուներն են հաւաքում գրասենեակի պատի տակ ու կատակում, ծիծաղում...: Թէ լաւ է, որ գոնէ նրանք կան, եթէ նրանք էլ չլինէին՝ դատարկ կը մնար գրասենեակի պատի տակը, որը Մխոյի համար պատերազմից ծանր մի բան կը լինէր:

«ԿԱՐՄԻՐ ՄԱՄՈՒՌ»

Վագոնախցիկի դուռն ազմուկով ետ գնաց: Գիտէին՝ գալիս են ճամպուկներն ստուգելու: Պատրաստ սպասում էին, այնուամենայնիւ սրտերում ինչոր ահ կար՝ չլինի յանկարծ արտասահմանում գնուած յուշանուէրներից որեւէ մէկը չթոյլատրելի համարեն:

— Մի դանդաղէք, երիտասարդ,— բերանը չպպացրեց կարնիկ, կրկնակակ մարդը,— միայն դուք չէք, մենք հագարումի գործ ունենք:

— Երեւի ճամպուկի բանալին է կորցրել,— ընկերոջն աչքով արեց մօրուփաւորը,— գրպաններդ լաւ նայիր...

Առանց յուզուելու: Գտա՞ր, կեցցես, թէ չէ փականն ինչու կոտրուէր:

— Ուզում էք տուէք ինձ բանալին,— առաջ թեքուեց կրկնակակը.— ձեր ձեռքերը ձեզ չեն ենթարկում, երիտասարդ: Ձէ, բացեցիք, ապրէք,— ժպտաց մօրուփաւորը եւ բարձրացրեց կափարիչը: Բարձրացրեց ու նրա յօնքերը վեր բռան, աչքերը չռուեցին, ընկերոջ յօնքերը վեր բռան, աչքերը չռուեցին: Կանայք գարմացած իրար նայեցին:

Ճամպուկն ամբողջութեամբ մարդկային ոսկորներով եւ կարմիր մամուռի կտորներով էր լի:

**

Արեւելի շիկնանքը գնալով ընդարձակում էր, իսկ խայտաբղէտ ամպակոյտի տեսիլքը աստիճանաբար քարափի էր վերածում:

Բարձրունքում քամին անելի բարկացկոտ էր: Սակայն վահագնը ի գուր էր անհանգստանում՝ մատներով սանրելով ու սանրելով սեւ գանգուրները: Ձէ որ մագերը կարն էին ու չէին լցում աչքերը: Երեւի ինքն իրեն տիրապետելու, ինքն իրեն գրադեցնելու միջոց էր այդ:

«Քարափը եկեղեցուց մօտ երկու վերստ հեռու է դէպի արեւելք»,— բացատրել էր տատը: Բայց եկեղեցի որտեղից. քարերը քալանուած, միայն որոշ տեղերում ցից-ցից պատերի լիցքեր, որոնք սուր ճանկերի նման վեր էին ցցուել՝ չգիտես, թէ ում դէմ: Հսկայ ֆայլերով առաջ էր մղում՝ ուշադրութիւն չդարձնելով քամու դադող ապակներին:

Ահա այստեղ՝ այս քարի մօտ պապին սպանեցին՝ իրեն սպանեցին: «Ձագարածու, սուր ծայրով դէպի երկինք ցցուած մարդաբոյ քար էր,— նկարագրել էր տատը:— Քարը կիսով չափ արիւն էր»: Ի հարկէ վաքսուն տարիների անձրեւներն ու ձիւները պէտք է լուացած-տարած լինէին քարի վրայի արիւնը, բայց պապի արիւնը մնացել ու կարմիր մամուռի տեսքով ծաղկել էր քարի վրայ:

Լաւ դուրս պրծաւ հիւրանոցից. «Մխոյ մարդ ես, ամբողջ գիշեր դռների մօտ նստած... Վերցրէք այս ընտիր սիգարները,— պէտք չէր, որ ասէր՝ հայկական,— վերցրէք բերանիդ համը փոխէք... իսկ հիմա, ներսում օդը մի տեսակ գաղջ է, շունչս ասես փակում է, դուռը բացէք դուրս գամ գով օդին: Բացի դրանից, ինչպէս կարելի է ձեր աշխարհի հիաստանչ արշալոյսը չդիմաւորել»:

Խոշոր ափով շոյեց ձագարածու քարը՝ ինչպէս մարդու գլուխն են շոյում: Յետոյ քարը քեքեց դանակով, թղթի մէջ փաթաթեց արիւնագոյն մամուռը եւ ոտքի ելաւ: Աչքերի առջեւ դիակներ էին երեւում, արնաշագախ, մեծ ու պզտիկ դիակներ:

«Պապը որ գոռաց հասնում են բորենիները...— տատի ձայնը նորից գրնգաց ականջների մէջ. — ես հօրդ բարուրը գրկած, քարափից նետուեցի: Ինչ կը լինէր թող լինէր, միայն չընկնէ նրանց ճանկերը: Թոյլ էդ ահագին բարձրունքից եւ հրաշք պատահեց. քամուց փոփոցող երկար փէշս մի սուր քարից կառչեց: Ես հօրդ բարուրը գցեցի, երկինքն ի վեր պարզուած ձեռքերի նմանուող, սալաքարերի արանքը: Յետոյ փէշս պատուեց՝ ցած ընկայ... Չնայելով մէջքիս, գլխիս սարսափելի ցաւերին, մի կերպ մարմինս քարշտուեցի: Կանանց ու երեսներին մահւան ձայներից խելս թոցրի՝ ուշաքափ եղայ: Աչքերս բացեցի, լուսինը դուրս էր եկել, աստղերը շոգշոգում էին: Քարերը ճանկոտելով ելայ հօրդ փնտռելու: Ձէն-ձուն չկար, մեռա՞ւ, մնա՞ց երեսէն, Աստուած գիտէր... Ձէ՛, քարուրի մէջ երեսան կը շարժուէր: Հօրդ գիրկս առած գնացի պապիդ փնտռելու: Պապը հրացանը ձեռքերի մէջ ամուր սեղմած, բերանփսիվայր ընկած էր ձագարածու քարին: Երկար լաց ու կոծ անելու ժամանակը չէր, գոնէ հօրդ փրկէի... Երանի կուրծք չվերցնէր, երանի չփրկուէր ու էդ ժամանակ գնար աշխարհից եւ ոչ թէ դառնար քսանութ տարեկան, չինարի ծառ ու պատերազմից ետ չգար: Քա չէ, ինձնից դուրս, ինչ

կը խօսեմ: Եթէ հերդ՝ իմ միմունարը էդպէս բարուր մեռնէր, դու չէիր լինի ու տոհմիդ վերջնամիւրը կը կտրուէր, չէր շարունակուի:

Ձագարածն քարից դէպի արեւելք, դէպի ցուլանման քարը վահագնը հինգ խոշոր քայլ չափեց:

«Փափուկ էր հողը սալաքարերով, սատանայի սուր եզունգաքարերով, ծառի ճիւղերով, մինչեւ լոյս բացուելը փոս փորեցի, պապիդ արիւնաշաղախ դիակը քաղեցի եւ, հօրդ գրկած, ցերեկները քաֆնուելով, ննուզապաշար, սինձ, թթուաշ ուտելով, գիշերները նամբայ կտրելով եկայ, եկայ...»:

Պապի գերեզմանի տեղը նշան անելու կարիք չկար, որովհետեւ տարիների ընթացքում քամիներն ու անձրեւները տարել էին շիրիմաքմբի հողի մի մասը, իսկ մնացածն էլ նստել էր ու կանաչների մէջ նշմարելի փոս էր երեւում: Լոյսով մարդկանց աչքերի առջեւ փորփորել պէտք չէր: Յետոյ՝ ժամանակն էր հիւրանոց վերադառնալու:

Կէսգիշերն անց նորից ներքեւ իջաւ: Դռնապանը բնած էր բազմոցին: Զգիտէր ինչպէս արթնցնէր. աղմկալի ետ ու առաջ քայլէ՞ր, թէ ուղղակի ձայն տար:

Մութը լոյսից պարտուել էր, կծկուել, երբ վահագնը, կիսով չափ լցուած պարկը թելի տակ, մտաւ հիւրանոց եւ ֆոկաց բնած պահակի գլխավերելու: Միջահասակ մարդը աչքերը բացեց:

— Յանցագործութիւն է՝ ձեր այս հրաշք երկրում, անանձրեւ պարզկայ գիշերին, մարդ դրսում այնքան մօտ աստղերը չհաշուէ՞, ոսկեփայլ ազօքարանով չհիանա՞յ: Քնել, մեռնել, — ժպտաց, — երբ ասես կը հասցնենք, միշտ չէ՞, խելացի ու բարի աչքերով մարդ...

— Այդ ի՞նչ է, — հետաքրքրուեց պահակը:

— Հէջ, դատարկ բան: Բայց դուք մի գարմացէք, բարի հրաշալի մարդ: Բարձրանանք իմ սենեակը եւ ես ցոյց կը տամ ձեզ, թէ ինչ է այս: Յետոյ էլ՝ ձեր չարշարանքի համար, ի հարկէ մազաբիչը կայ ու կայ:

Սենեակում, երբ վահագնը բացեց

պարկի բերանը, թուրքը գարմանքից կզակը վեր ցցեց, աչքերը չոնց:

— Փլատակներում քափուած էր, հաւաքեցի:

— Ինչ է, ձեզ մօտ ոսկորներ չկա՞ն, — ծիծաղեց թուրքը:

— Չկան, — ժպտաց վահագնը: — Այսինքն կան, թէ ես... ես փորձագէտ եմ... իսկ դուք... դուք, — եւ վահագնը պահարանից մի տափաշիչ հանեց եւ մտցրեց թուրքի գրպանը. — հրաշալի խմիչք է, իսկ այս ոսկորների համար կարիք չկայ ուրեք մէկին որեւէ բան ասել:

Տատը կախուել էր յաղթանդամ թռուան պարանոցից:

— Կեցցես, կեցցես ասլանս, խօսքիդ տէրն եղար, բերիք պապիդ, բերիք, բերիք... — ու պառաւի ձայնի ուրախ ելեւէջներին հեծկտոց խառնուեց: Յետոյ նա ձեռքերն ազատեց թռուան պարանոցից, քայլեց դէպի նամարուկը, բացեց կափարիչը, կռացաւ ոսկորների վրայ ու սկսեց ձայնով լաց լինել. — վաթսուն տարուայ կորած եկար, եկար, եկար... — Եւ ինչ որ միտք նրան ոտքի հանեց, տարաւ դէպի բազմոցը, բարձրացրեց բազմոցի վրայ, ու նա պատից իջեցրեց գորգը, փոքեց յատակին, նամարուկի ոսկորները շուռ տրուեց գորգի վրայ... Ու լացի միջից մի ուրախ ճիչ արձակեց. — հա՛ էլի, ինքն է որ կայ, էս նրա լայն ճակատը, էս հաստ բիւլակները... Երկար ներմակ ձիով, սեւ փափախով, սեւ չուխայով... Երկար ձիկ կանգնեցրիք մեր դրանը... Եկար ինձ ձիուդ թամբին դրիք տարար, տարար... — ու ընկաւ ոսկորների կուտոցին: Առժամանակ մնաց, — յետոյ գլուխը բարձրացրեց. — մի բան պիտի խնդրեմ, վահագն ջան:

— Ասա, տատ:

— Կը խնդրեմ պապիդ ոսկորները էսօր-էգուց չթաղես:

— Իսկ ինչո՞ւ համար, տատ:

— Ասա, տատ:

— Կը խնդրեմ պապիդ ոսկորները էսօր-էգուց չթաղես:

— Իսկ ինչո՞ւ համար, տատ:

— Ասա, տատ:

— Կը խնդրեմ պապիդ ոսկորները էսօր-էգուց չթաղես:

— Հենց էնպէս, վահագն ջան, կ'ուզեմ փոքր-ինչ ժամանակ սրանք իմ կողքին մնան:

— Թող մնան, տատ: Սակայն թռիկն երկար սպասելու

հարկ չեղաւ, յաջորդ օրը առաւօտեան, երբ նա արթնացաւ, քնից ու մտաւ տատի սենեակը, նկատեց, որ տատը, գորգի վրայ լցուած ոսկորների կողքին անշարժացել էր:

ՆՈՐ ԿԱՏԱՐԱԾՈՒՆ



Ամբան օրերին գիւղը նման է հնձած, փոցխած արտի. ի՞նչ կը մնայ էնտեղ: Հացատուն չէ, թէկուզ գոմ փլուի, թէկուզ դպրոց փլուի ո՞վ կայ կանգնած: Էդ տնաշէնի կարնիկ, կադ Ամոլն էլ՝ կատարածուն, մինչեւ լընգ-լընգ լուր հասցրեց գիւղի մօտակայ դաշտում աշխատող տղամարդկանց, թէ հասէք, Միմասի հացատունը փլուեց՝ Նոյեմբարն էլ մէջը:

Նոյեմբարի յուղարկաւորութեան հենց նոյն օրը, արեւպատոցից յետոյ, տնտեսութեան նախագահը բացեց գրասենեակի դուռն ու.

— Ախշի, հերիք է լուսամուտների տակ ֆոֆոռա ու ներս չմտնես:

Ամուլը շեմից հագիւ երկու քայլ առաջ գնաց ու գլուխը կախ, անձայն կանգնեց: Նա Միմասի կնոջ մահուան մէջ ինչ-որ չափով իրեն մեղաւոր էր զգում:

— Արի կ'եղնի, — սեղանի մօտ տեղաւորուեց նախագահը, — էգուցուանից քեզի ուրիշ գործի դրկեմ: Գնա՛ ոչխար կքէ... կամ թէ չէ՝ թոյնանոցում խօսաւ ու միւր գարի-մարի տալ կը կարողանա՞ս:

— Ուր կ'ուզես, էնտեղ էլ կ'երթամ:

— Ոչխարի կաքը շատացել է, գնա՛ կնկտանց օգնէ:

— Առաւօտ կանուխ կ'ելնիմ կ'երթամ, նախագահ ջան, — ու գլուխը կախ դէպի դուռը քայլեց Ամուլը...

Յետոյ, երբ գրասենեակը կամաց-կամաց լցուեց դաշտից եկած հնձուորներով, նախագահը խօսք բացեց գիւղի կատարածունին փոխելու մասին:

Եւ այսպէս. շատ դրին վերցրին, մէկը միւսին հաստատեցին, մէկը միւսին մերժեցին եւ վերջապէս կանգ առան վանոյի վրայ:

— Ա՛յ, էդ եղաւ, — հիացական հաւանութեամբ քրջաց հնձուորներից մէկը, — հերիք է, որ վանոն բոյն առնի ելնի գրասենեակի մօտի ցից ֆարին...

— Ու գոմշի նման բոռա՛, ձեռքով էնէ, — ծիծաղեց մէկ ուրիշը:

— Եղաւ, — ճաղատ գլուխը տըմբ-տըմբացրեց նախագահը, — էգուց, ազօքարանը բացուելուն պէս, ֆարափի տակի ֆաղուորներից դու ու դու՛ Աւետիս ու Հմայեակ, երկուսիդ էլ լեզուբերանով մարդիկ էք, ելէք սար, գիտեմ՝ պիտի յամառէ, համոզէք թող իջնի սարէն:

Երան երկու կատարների արանքից, ասես հսկայ հնոցի միջից, դեռ լքիւ դուրս չէր պրծել կարմիր արիւր: Ու այդ արեւի մէջ, կարծես շիկացած կրակի մէջ, մահակին յենուած, իր հսկայ հասակով կանգնած էր վանոն: Նա ձիաւորներին շուռ էր նկատել, սակայն համբերանով սպասեց, սպասեց: Ինչ

էս է կը վերջանայ: Աղջիկ ունէի նշանելու, տղայ... կնիկս էլ ջահել... Շունը դունչը մօտեցրեց արեւոյ ընչացփին ու բարձր վնգստաց: Նշան էր, որ տէրը չլռի:

Բացօթեայ փարախում նստած ոչ-խարները մի պահ որոնները թողեցին, խլշկոտած դարձան դէպի հողիկը:

Շան մելամաղձոտ կաղկանձն ասես բողոքի աղաղակ լինէր: Առանց դադարի, տարածում ու տարածում էր կիրճերի վրայ, լեռների, դաշտերի վրայ ու խաղաղ, պարզկայ երկնքով գնում. գնում ծաւալում էր ողջ աշխարհի վրայ:

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ




Մեզնից մէկը մնաց հեռուում,
Ո՞վ էր, ասա, ո՞վ,
Թէ այստեղից չի երեւում
Անխար տագնապով:

Նա՞ է գալու, քէ մե՞նք երթանք,
Եւ ո՞ր, ասա, եւ ո՞ր,
Եւ մինչեւ երբ մեր նօսքը տանք
Այս պարապին ի գուր:

Որ ինչ լինի, որ ինչ փոխուի
Հերթով ասա, հերթով,
Թէ մոխիր է, միայն մոխիր
Եւ... մեզանից յետոյ:

ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ



*
*
*

Ինձ վրայ շատ լաւ տպավորութիւն թողեցին Արարատ Մկրտումեանի ներկայացրած երեք բանաստեղծութիւնները: Ամէնից գնահատելին ինձ համար այն է, որ այդ բանաստեղծութիւնների մէջ կայ իսկական բանաստեղծական տրամադրութիւն, հազիւ յսկի նուազի ու երաժշտութեան պէս մի բան, որ համակում է:

Փակիր աչքերդ, բացիր արեւը, յիշիր երազը,
Երէկն անցեալ է, այսօրը՝ կիսատ, իսկ վաղը՝ հեռու,
Մի քիչ արտաք է, մի քիչ հեփիաք է, եզրը այս է:
Գու շփոթում ես, նա ճանաչում է, երրորդը՝ ներում:

Այո՛, կայ տրամադրութիւն, կայ ինչ-որ տաք, մտերիմ հնչերանդ, որ ինձ դուր է գալիս: Բանաստեղծութեան շարունակութեան մէջ կան նաեւ ընդդժուելու արժանի տողեր:

Կողպիր բառերը, բացիր աչքերդ, նայիր աղջկան,
Եւ դեռ մերկ է նա, եւ դեռ նման է տաք ելեւէջի...

«Տաք ելեւէջը» ինձ շատ է դուր գալիս, բայց այս ամէնը չի նշանակում, թէ բանաստեղծութեան մէջ առարկելու բան չկայ: Կայ, եւ նախ՝ լեզուական: «Բացիր»ը «բացել» բայի հրամայականը չէ, մինչդեռ հրամայականի տեղ է դորձածուած: Հրամայականը կր լինի «բաց» կամ «բաց արա», որ աւելի ճիշտ է: Բայց դա՛ իմիջիայլոց: Հիմնական առարկութիւնս նոյնն է, ասելիքը յստակ ու որոշակի չէ: Բանաստեղծութեան մէջ ամենեւին դէմ չլինելով անորոշ, խորհրդաւոր մշուշին, դա նոյնիսկ համարելով ճշմարիտ բանաստեղծութեան նախանշաններից մէկը, այնուհանդերձ գտնում եմ, որ այնտեղ ամէն ինչ պիտի ներքին ճշգրտութիւն ու նենայ, այո, բանաստեղծութեան պէս վերացական երեւոյթը մաթեմատիկական թաքուն ճշգրտութիւն պիտի ունենայ, այնքան երեւոյթը մաթեմատիկական թաքուն ճշգրտութիւն պիտի ունենայ, այնքան թաքուն, որ աննկատելի լինի: Մինչդեռ Արարատ Մկրտումեանի բանաստեղծութիւնները եւս, թէեւ աւելի քիչ չափով, դերժ չեն կամայականութիւններից ու խրթնարանութիւններից: Օրինակներ չեմ ուզում բերել: Կարծում եմ, որ

ինքը կ'որոնի ու կը պանի այդ օրինակները: Կը ցանկանայի, որ Արարատը
բանաստեղծու թիւները դրելիս անսահման անկեղծ լինէր նախ ինքն իր հետ,
պարզէր, թէ ի՞նչն է, որ կեանքում ամէնից աւելի անհանդստացնում իրեն,
ինչի՞ց է սիրտը ցաւում, ի՞նչն է, որ կ'ուզէր ասել իր ամենահարազատ ու մտե-
րիմ մարդուն: Այդ ղէպքում արդէն միաքր խճողելու կարիք չէր ունենայ:

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ՍԻՐԱՇԱԲԹԻ

Եւ կար երկինքը, եւ կար երկիրը եւ արեւը կար,
Եւ դրախտն ի դուրս արդէն ցնդում էր հրաշքը գոյի,
Եւ տաք մի մեղք էր արդէն տրոփում բառերում տկար,
Որոնք շուրթերից պիտի կախուէին շէկ երեկոյի:

Եւ փշափաղման մի գոլ ֆամի էր ֆրֆրում անձայն,
Եւ Ադամն ի ներս արդէն մղում էր ետքը գոռոցի,
Եւ ֆանի անգամ պիտի կրկնուէր ամէնն այս դարձեալ,
Մինչ խնձորենին իր պտղած ցաւը ընծայէ օձին:

Եւ լինելութեան ճեփ-ճերմակ էջին կաթում էր նոր գոյն,
Եւ Եւան ի շուրջ արդէն ծաղկում էր լոյսն առեղծուածի,
Եւս մի ցոլանք, եւ պիտի տրուէր մեղքին թողութիւն,
Եւ կաթիլ-կաթիլ պիտի մզանար իմաստն եղածի:

Եւ կար երկինքը, եւ կար երկիրը եւ արեւը կար,
Եւ երկուսն ի մէջ արդէն ճողփում էր հրճուանքը գոյի,
Եւ արահետը մինչ կատարուածի հրաշքը կը զգար,
Նրանք կորել էին պէծ-պէծ ցոլֆերում շէկ երեկոյի:

ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

ԱԼԼԵՆ՝... ՀՈՊ

Նորից բարձրանում, նորից իջնում է լեզենդը Նոյի,
Ցուրտ-ցուրտ ճօնում է տապանը դէմքին լուսաբացի.
Եթէ մի բան կայ դեռ այս օրերում իմ նախահօրից,
Ինչ է կոչուելու ծեր անպապարի ժպիտից բացի:

Ալլէէ՛... հոպ

Փակիր աչքերդ, բացիր ափերդ, յիշիր երազը,
Երէկն անցեալ է, այսօրը՝ կիսատ, իսկ վաղը՝ հեռու,
Մի ֆիչ ափսոս է, մի ֆիչ հեֆիաթ է, եղածը այս է.
Դու շփոթում ես, նա ձանձրանում է, երրորդը՝ ներում:

Օրերն ի գուր են, էլի ի գուր են իրար վազանցում,
Ցաւը ցնդում է, յուշը յոգնում է, գինին է ապրում,
Մութը սենեակ է, երգը խոպոտ է, օդը՝ տարփածու,
Դու ֆրֆոյում ես, նա հեռանում է, երրորդը՝ հարբում:

Ոչ ոք չի ասի, թէ դա նման է ցաւին Յիսուսի,
Ոչ ոք չի ասի, թէ այդ ամէնը եղել է եւ կայ,
Մէկին դու ես պարտք, իսկ մէկ ուրիշը պարտք է իր յոյսին,
Մի ֆիչ անցեալ է, մի ֆիչ երազ է, մի ֆիչ էլ՝ ներկայ:

Ալլէէ՛... հոպ

Կողպիր բառերը, բացիր աչքերդ, նայիր աղջկան.
Եւ դեռ մերկ է նա, եւ դեռ նման է տաք ելեւէջի,
Ուրիշ հնչիւններ այս երգ աշխարհում չեն լինի, չկան,
Վերջին երգն է սա, վերջին աղաղակն ու դարձը վերջին:

Նորից բարձրանում, նորից իջնում է լեզենդը Նոյի,
Ցուրտ-ցուրտ ճօնում է տապանը դէմքին լուսաբացի,
Եթէ տաք յուշ կայ դեռ այս օրերում իմ նախահօրից,
Ինչ է կոչուելու ծեր անպապարի վախճանից բացի:

Ալլէէ՛... հոպ

Ալլէ՞...
Հո՞պ...

ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ



**

Սիրտս ցաւում է
 Եւ այս փշերի համար.
 Այնպէս են խմբուել
 Ամայի դաշտում.
 Ասես խմբաբանդակ է՝
 Անյուսուրբեան
 Պատկերով...

Հ. ՏՕՆՈՅԵԱՆ

**

Այդ ես եմ,
 Որ թէպէտ մտօք,
 Սակայն բարձրացայ
 Լեռն Արարատ,
 Խոստովանեցի ծնկած
 Վիհերի առջեւ,—
 Հազորդուեցի արեւածագի
 Գոյներով շոայլ
 Եւ բացուող օրուայ հետ
 Գալիս եմ ահա ղեգ:
 Դիմաւորի՛ր, սիրելիս,
 Այդ ես եմ գալիս՝
 Ձեռքիս նոնեմու նիւզեր,
 Ես, որ ղեգ համար
 Բոց աչքունմով
 Վահագն եմ մի օր ծնելու,
 Եւ ազգիկ մի՝
 Անունը՝ Աստղիկ,—
 Վարսերը մէջքն ի վար հոսող սարսուռ,
 Շուրթերը՝ ծաղկաթերթեր...

**

Կարծում ես
 Շա՞տ բան փոխուեց
 Մեր բաժանումով:—
 Պարգապէս տերեւներն
 Այլեւս լոյսի ծուկներ
 Չեն թում
 Եւ ոչ էլ անձրելը՝
 Բանաստեղծութիւն:—
 Պարգապէս սիրտս՝
 Դեղնած մի տերեւ,
 Քամին առել ավերի մէջ
 Ու տանում է
 Զգիտեմ թէ ուր:

**

Ինձ համար
 Նոան ծառ նկարիք,
 Լսո՞ւմ ես,
 Երբ հեռու լինես,
 Եւ ես մենակ մնամ,
 Անսահման մենակ,
 Կը փաթաթուեմ ծառին,
 Թափուող ծաղկաթերթերը
 Երազանքների նման
 Կ'օրօրեն հոգիս,—
 Քո ձայնը
 Կը ցոլայ իմ մէջ,
 Եւ երբ բացեմ աչքերս,
 Սիրելիս,
 Մենութիւնս լցուած կը տեսնես
 Հասուն նոներով...

ՀԱՅԿԱՆԻ ՏՕՆՈՅԵԱՆ

Լաուրա, քնքուշ ու բարի, Ֆրանսու՜նու նրբամուտու թիւն, բայց եւ շիրակցու կող ու նեցուղ մեր բոյր: Ասում էիր՝ միշտ ուսանող մնանք, որ յսենք իշխանեանին եւ թամբազեանին: Հէշտ մերժեցիր ձեռքդ խնդրող տղաներին, որովհետեւ նրանք Երևանից էին, իսկ դու անպայման պիտի թո՛ւնայ վերադառնայիր, թո՛ւստանը, իսկ ոչ մի տղայ չէր ուզում... տնփեսայ գայ: Դու թաքցնելու բան չունէիր՝ ասանց Լենինական, ասանց մօրս մէկ օր չեմ ապրի:

Աչխատում էիր «Բանուոր» թերթի խմբագրութիւնում: Հազար գործերի հետ սրբութեամբ այցելում էիր մեր կուրսի առաջին գոհի՝ Ստեփան Քարտաշեանի մօրը, միտքարում: Դու դու կի ձայն էիր լսում, լաց լինում ու պօսեպնդում:

Մի քանի տարի առաջ եկար մեր՝ «Հայրենիքի» ձայնի խմբագրութիւն: Վարդան Միլիտոսեանի հետ էիր:

— Էս ո՞ր քամին է բերել, — գարձացայ, ուրախացայ: — Դու ակնարկներդ ծրարած ես ուղարկում, երկտողով՝ համեցէք Լենինական, Շիրակի գաշտ:

— Վարդանին գիտես, — ասացիր, — Եւրիկ Վարդանեանին գիտես ու գիտես: Հիմա մեր քաղաքում մի նոր ՄՍԵՐ է լոյս աշխարհ եկել: Իսրայէլ Միլիտոսեան: Լուսանկարն եմ բերել, մի երկու էջ յօդուած: Տպագրէք, թող Սփիւռքում իմանան, որ քաջագունները մեր սոհմը գեւ շատ պիտի հիացնին...

— Չօրանաս, կր ապագրենք: Մնա՛, երեկոյան հին ընկերներով կը հաւաքուենք, կը յիշենք, կը գրուցենք: Մեր տանը կը մնաս...

— Ա՛յ, չեմ մնայ: Պիտի չուտ քաղաք հասնեմ, որ յաջորդ համարի նիւթերը հասցնեմ... Արի, չուտ չուտ Լենինական արի: Միայն լաւ մարդիկներ չէ, որ ունենք: Լաւ գրողներ ունենք, նկարիչներ, ճարտարապետներ: Իսկական հին արուեստի ու արհեստի քաղաքը նոր ծագկում է ապրում: Քաղաք որ ասում են՝ մեր Գիւմրին է: Արի, տես, ինքզ կը գրիր, որ յետոյ մի տեղ թաքուն շատես՝ կուրսեցիս լուր պրզնում է... — Ժիծաղեցիր, սիրելի Լաուրա, ծիծաղեցիր:

Ապրում էիր թո՛ւն ու նոր ուստանի առողջ դիմագծերով: Լրագրողին, թերթի աշխատաբջին բաժին բնկած գծուար ու վե՛ր բախտ:

Աչնանք զանգ տուեցիր: «Ե՛րբ գամ Երևան, որ գնանք Ռադիկի գերեզմանին, միտքարենք Անահիտին: Նրա երեխաների համար Մոսկուայից լաւ նուէրներ եմ գնել»:

Տուն էիր ստացել, Սեղային խնդրել էիր, որ կուրսեցիներին, նաեւ, սիրուած դասախօսներին հաւասարենք ու մի օր լինենք թո՛ւնի բոյ:

Պարնանք կը գանք, սիրելի Լաուրա, որ փնտուենք թո՛ւն շատ շատերի գերեզմանները:

Լրագրողների սերը մնում է մարդկանց մօտ եւ այս գծուար հոգում:

Որբ ու վայրի ծագիկները հենց գարնանն են փնտուում որբ շիրիմներ: Գտնում կամ չեն գտնում:

ՀՐԱՉԵԱՅ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Հ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

ԷԼԻ ԳԱՐՈՒՆ ԿԸ ԳԱՅ

ԳՆԱՔ ԲԱՐՈՎ

Ընկերուհու՛ Լաուրա Բաղդասարեանի եւ զոհուած բոլոր լրագրողների յիշատակին:

Կուրսեցիներ էինք, համալսարանականներ: Լաւ—վատ ապրեցիք մեր ուսանողական տարիները: Հասցրեցինք սիրել, սիրահարուել ու սիրահարուածի նման էլ մտանք կեանք՝ լրագրութեան աշխարհը: Մարդկանց մասին, հենց նոյն մարդկանց երեւի բան ունենանք ասելու: Ազնիւ լինենք՝ մեր ստորագրութիւնը նրանք են յիշելու:

ՄԻ ՆՇԽԱՐՔ ԽՈՒՆԿ՝
ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ԶՈՀ ԳՆԱՑԱԾ
ԳՐԶԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ ՇԻՐԻՄՆԵՐԻՆ



Ի՞նչ մեղք... անլուր ռեիր գործուեց մեր դէմ:
Բայց այսօրանից յետոյ ես դեռ դարձեալ
Մտածում եմ՝ ինքս մեղք չգործեմ...
Որպէս անուղղելի հաւատացեալ:

Իսկ մեղքն իմ գործելիք այն է, որ ես
Փորձ եմ անում մտնով իմ անցկացնել՝
Բիւր գոհերի միջից, մէկիկ—մէկիկ
Ձեք անուններն ու ձեզ առանձնացնել:

Ձեզ՝ իմ բնկերներին՝ կրտսեր, աւագ,
Երագների թելով ճախրողներիդ,
Որ չկարողացաք, սակայն, աւա՛ղ,
Մահուան ուստայնը մուր չբնկնել գերի:

Ընկա՛ք, բնկա՛ք, բնկա՛ք... աչքերդ բաց,
Եւ թանձրացաւ ցաւը... եւ թանձրացաւ,
Բայց թոււմ է՝ հենց դուք չէիք ուզի
Բիւր—բիւրերից լինել առանձնացած:

Բիւր—բիւրերից՝ անմեղ մայր ու մանուկ,
Բիւր—բիւրերից, ջարդուած մումերի պէս.
Անգուր ջարդոտուելով ձուլուեցիք դուք՝
Ցագեցնելու մահին, փրկելու մեզ:

Օրհնա՛նք շիրիմներիդ, խունկ ու օրհնա՛նք
Եւ յո՛յս սփռեցիք ձեզ առյաւելտ...
Կեանքը չի՛ ընդհատուել. ապրում ենք, կանք
Եւ ձեք երագներն են ապրում մեզ հետ:

ԵՐՈՒԱՆԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Նորից եկել հին ցաւերն են մեզ խոցում:
(Խուլ տնօրէն եմ լսում հեռու Դեր-Չօրից):
Եւ մեզ վրայ մահն իր ուժերն է փորձում,
Եւ դողում են մահուան ձեռքերը նորից:

Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու,
(Բեռու կանչն է լսել Դաւիթը նորից):
Թէ մեռնել կայ, հայերէն ենք մեռնելու,
Ինչպէս մաքուր ցորենի հունդը հողում:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ԱՊՐԵԼ, ՔԱՆԻ ՄԻ ԱՓԱԶԱՓ ՀՈՂ ԿԱՅ

... Չհաշուել ու չհամակերպուել. յաղթահարել երակներու մ փշրուած ապակի դարձած այս ցաւն ու ապրել... Ապրել՛, քանի որ թէկուզ մի ափաչափ հայրենի հող կայ, հայրենի մի ափաչափ երկինք ու... սգի:

«ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ...»

Սառն ու անհաղորդ վիճակազրու թիւեր ժամանակ անց ամէն ինչ ստոյգ կը ճշգրտի՝ այսօր քան զիւր ու քաղաք, այսօր ան արուած ու կիսաւեր շինութիւն, այսօր վերաւոր ու զոհուած: Վիճակազրու թիւեր զիտու թիւն է, յոյզին ու ապրումին անտարբեր է վիճակազրու թեանն ի՞նչ, որ փյառտակների տակ դէտ Լրեխանէ՛ր կան՝ անօգնական, փրկութիւն հայցող ու չնշող... Մարդիկ կան, որ ազլախ առաջին հարուածից հրաշքով փրկուել են, բայց... կը փրկուեն, արդեօք... Անվերջ վշախ ու անօգնական ցաւի այս օրերին բառերն իմաստազրկուել են, յոյսի, սփոփումի, կարեկցանքի, մխիթարութեան խօսքերը ասուած են, բայց մնում կիսատ, մնում դժուար ու զամուած շուրթերին, շարժումներին, հողուն... Ի՞նչ անելը դատնում է ճիշդ ու կանչ, ինչո՞վ օգնել, ինչպէ՞ս դիմանալ... Աշխարհի տարբեր մասերից Հայաստանի սիրուն են թոշում ինքնաթիռներ՝ սարքաւորումներով, հագուստով, սնունդով, արիւնով... Իր դարաւոր պատմութեան ամէն պտոյսին ու թալանախնային արիւն տուած հայ ժողովուրդին հիմա արիւն են ուղարկում, ցաւակցական ու մխիթարական անկեղծ հեռագրերի հոսք ու հեղեղ է, բայց նաև կեղծ խօսքեր ու կեղծ խոնձր, որ արդար ընդվզման են մղում: Յարգել մեր սուրբ և մեր համազգային ողբերգութիւնը չզարձնել և ժամ քարոզչութեան անարկայ, սաայօղ, ոչ իսկական ինտերնացիոնալիզմ ցուցադրելու միջոց: Սիւլիս կապուտիկանի այս խօսքերի տակ ողջ ժողովուրդը կը ստոյգի և կ'աւելացնի նաև, որ 1915 թ. յետոյ գաղթական շունեցած ժողովուրդը, որ 1988 թ. նորից ապրեց 1915-ը իր բարբարոսութեամբ ու դաղթով, մի ժողովուրդ, որ զրպարտութեան, վերաբառանքի, սաղթանքի ու յանցաւոր անտարբերութեան օգակ-օգակ հանդուցում ողջ ժողովուրդին երբեք չզղթայուեց և իր հպարտ հողին պահեց հացի ու հոգի պէս մաքուր, ահա այս ժողովուրդին իր անբուժելի Անիով ու վերաշինուած Գառնիով, հարազատ Արցախից օգնութեան հասած կոտորածներով ու շինարարներով կարող է հաստատուել ու հաստատուել, որ ապրելու է, յաղթահարելու է, յաղթելու է ու ապրելու է...

Մեր ակննդներում օգնութեան ճիշդը երկա՛ր կը մնան, շտապ օգնութեան մեքենաների կանգնել ու մահուան միջուկում հնչող ազդանշանները երկա՛ր կը վայեն, մեր փակ աչքերի առաջ դէտ երկա՛ր ծանօթ ու անծանօթ մարդկանց զիւր-զիւր-զիւր-զիւր կը լինեն, երկա՛ր, բայց յիշողութեանը պէտք է՝ ապրելու՛ համար: Ճրանսիայից ու Իտալիայից Եկած մասնագիտացուած խումբն աշխատում է Անիի նախափորումը, Սպիտակում: Կիրովականում են Անդրիայից, Գեմալից, Շուկոյարիայից եկած փրկարարները... Հնարաւոր է և հարկ կա՞յ որոշարկել՝ որ ազգութեան ներկայացուցիչն է փրկում՝ մարդիկ են, մարդկանց են օգնում... Ամբողջ աշխարհն է փոքրիկ Հայաստանին օգնութեան ձեռք մեկնում, մեր երկրի ղեկավարը՝ Մ. Ս. Գորբաչովը ընդ հատեց պաշտօնական այցն ու ազլախ վայրը եկաւ, բայց... Հասանարար արեւրային ազլան ահա որ է նաև իր կուրտութեամբ, մարդկանց բնկնելու ու ճղմելու իր տարերային սոժով, որ ամէնից առաջ խուճապ է ծնում ու անդօրութեան յուսահատ կաշկանդում է: Եւ անարժանացող մարմնի հետ անշարժանում է հողին...

Աշխարհի տարբեր բանկերում բացուած հաշիւները, հայկական եկեղեցիների կամարների տակ անվերջ հնչող սպոյ պատարագները, Սփիւռքի ողջ հայութեան, աշխարհի ողջ ցաւակից մարդկութեան բարի կամքը թող ուժ ու սատար լինեն մեզ... Կուլ տալ կոկորդիլի կառչած այս հեղձուկը, որ խեղդում է, չհաշտուել ու չհամակերպուել, յաղթահարել երակներում փշրուած ապակի դարձած այս ցաւն ու ապրել... Ապրել՛, քանի որ թէկուզ մի ափաչափ հայրենի հող կայ, հայրենի մի ափաչափ երկինք ու... սգի: Ապրել, որովհետև մենք թիշ ենք ու օրեցօր աւելի ենք ջշանում, բայց մեզ հայ են ասում... «ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ», 1988, Թի. 6


Հայրենի գրող Գրիգոր Զանիկեանի քարգամնութեամբ ընթերցողին մատուցուած այս փոքրիկ գրութիւնը ունի աւելի քան տասնհինգ տարիներու վաղեմութիւն: Անոր առընթեր տրուած բանաստեղծութիւնը եւս կու գայ նոյն ժամանակներէն: Այլ երկուքն ալ կը յուզեն ու կը հաստատեն այն խորունկ ապրումը, որ յատուկ է իրենց երակներուն արիւնը անխարար պահած անհատներուն.— պատկանելիութեա՛ն ապրումը, մասնաւոր վայրի մը, մասնաւոր յիշողութեան մը կապուած մնալու անդիմադրելի բնագոյր:

Տարբեր լեզուներով եւ տարբեր մշակոյթներու մէջ ծառայելու իրականութիւնը ընդհանրապէս ընտրութեան կամ ուրացման հետեւանք եղած չէ մեր մէջ, այլ եղած է մեր նակատագրին մէկ դժբախտ բերումը, գոր կըրցան հակառակ կողմէն օգտագործել ումանք, ցեղային մեր ընդունակութիւններուն ի հաշիւ, վաւերակա՛ն տաղանդները, Սարոյեան, Ազնաւուր, ուրիշներ, ապրելով հանդերձ այդ ճակատագրին ողբերգական երեսները:

Վարսունական քուակներէն սկսեալ աշխարհահոշակ անուն էր Շարլ Ազնաւուր, Երզնիչ, բանաստեղծ, դերասան, մնայուն ներկայութիւն մը փրանսական թէ աշխարհի այլ բեմերուն, բայց կը կարծենք, որ թէ՛ աշխարհի եւ թէ մեր իրականութեան լայն խաւերուն մէջ այնքան չէր թափանցած, որքան կըրցաւ թափանցել Դեկտեմբեր 7ի առիթով գրուած «Քեզի համար, Հայաստան» անուն համատարած իր երգով: Նոյն առիթով, ինչպէս կը պատահի յաճախ գտարիւն ծնունդներուն, Ազնաւուր ապրումներու նոր բիրտեղացում մը գգաց իր հոգիին մէջ ու յայտարարեց իր գգացածը, նշանաւոր «Փարի մաշ» ի էջերուն, «Փարի մաշ» ի «Ինչպէս զիմաւորեցիք այս աղէար» հարցումին տրուած պատասխանով:

«Յարց միչտ կ'ըսէի, թէ եւ ծագումով Հայ Փրանսացի մըն եմ: Մական աղէալն եաք, անդրադարձայ, որ ծագումով միայն Հայ էր»:

Ի՛նքն է, Ազնաւուրը, իր արեան ձայնին հաւատարիմ խառնուածքը, պարտի գգացումներով տազնապող արուեստագէտը, ա՛ն՝ որ ի տղայ տիոց կը զգար ու տասնհինգ տարիներէ ի վեր գիտէր, թէ օր մը արժանին պիտի մատուցանէ իր արժանաւոր ժողովուրդին, ինչպէս կը վկայեն բովի պատիկ գրութիւնը եւ անոր ընկերացող պատիկ բանաստեղծութիւնը...



Շ. ԱԶՆԱՒՈՒՐ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Մենք մօտաւորապէս եօթանասուն հազար ենք: Եօթանասուն հազար Հայ, որ վերջնականապէս հաստատուել ենք Պրանսիայում: Մօա կէս դար է, որ մենք այստեղ ենք: Երբեք Պրանսիայում եւս ինձ օտար չեմ զգացել, բայց միաժամանակ երբեք չեմ մոռացել, որ ծնունդով Հայ եմ: Մի քանի ասարի առաջ եւ այցելեցի Երևան՝ իմ նախնիների օրրանը, եւ այնտեղ ինձ զգում էի իմ հարազատ ասանը: Հայրենակիցներս ինձ ընդունեցին այնպէս՝ ինչպէս թափառական որդուն են ընդունում եւ ազգային սովորութեամբ մի զէր

տրջաւ մորթեցին ոտքերիս առջև: Եւ յանկարծ, ընդամէնը մի երեկոյի ընթացքում Երևանը այնչափ մօտեցաւ Ալֆորվիլին ու Իսի-Լէ Աուլիոյին, այն երկու գլխաւոր քաղաքներին, որակց հաստատուել ենք մենք՝ Փրանսահայերս: Ուրեմն, ոչինչ մոռացուած չէ: Ի հարկէ, մենք ամբողջ էութեամբ նուիրուած ենք Պրանսիային: Ես չեմ կարող առանց կսկիծի յիշել Մանուչևանին, որը յաճախ էր մեր տուն դալիս, երբ եւ փոքրիկ տղայ էի, եւ որին գերմանացիները զնչակահարեցին 1944 թուականի ձմռանը: Արակոնը շատ զեղեցիկ է գրել նրա մասին, շատ աւելի զեղեցիկ, քան թէ կարող էի անել ես...

Բայց միաժամանակ մենք մնում ենք Հայ եւ մեր տեղը ունենք Փրանսիական մշակոյթում՝ ժան Գաոգուով, Հանրի Թրուայայով, Հանրի Վերնէօյով, Ալիս Սափրիչով, Ռոզի Վարդով, Ռոզի Արմէնով եւ ուրիշ շատ հոշակաւոր անուններով, որոնք թերեւս այդ ձևով գոյութիւն չունենային, եթէ թուրքերը 1915 թուականին չկոտորէին իմ ժողովրդին՝ հազարաւոր հայերի սափակելով բունել աքսորի ճամբան:

... Ես չըջեմ եմ ողջ աշխարհը: Եւ երբեք չեմ մոռացել, որ Հայ եմ: Մենք Ուլայի Հեա ամուսնացանք ժան Գուօն Փողոցի հայկական եկեղեցում եւ պսակող քահանան մեր գլխին գրեց այն խաչով թագը, որ ժամանակին գրել էր իմ ծնողներին ու նրանց ծնողների գլխին: Իմ տղան՝ Գատրիկը, յաճախել է Սեւրի հայկական դպրոցը: Նիւ Եորքում լինեմ, թէ Մոսկուայում, երբ մի անձանօթ Հայ է մանում իմ օթեակը, հարկ չունի ներկայանալու: Մա իմ եղբայրն է: Ես ինձ մի քիչ մեղաւոր եմ զգում իմ ժողովրդի տոջն: Ես նրան զեռ ոչ մի երգ չեմ նուիրել, չնայած շատ եմ մասձել այդ մասին: Գիտեմ, որ մի օր նրան արժանին կը մատուցանեմ երաժրշտութեամբ, բայց ուղում եմ, որ այդ երգը լաւը լինի, դրա համար էլ չեմ շտապում: Ես գիտեմ, որ այդ օրը կը գայ ու հպարտութեամբ կը գոռամ աշխարհով մէկ, որ Հայ եմ («Գրական թերթ», 1972, թիւ 18):

Շ. ԱԶՆԱՒՈՒՐ

ՔԱՂԱՔԻՑ ՔԱՂԱՔ

Շաա քաղաքներ տեսայ, անցայ, Ու ազգիկներ տեսայ բիւր, Հանդիպումներ շատ ունեցայ, Տեսայ ե՛ւ սէր, ե՛ւ համբոյր, Դեռ քսանըս չբոյորած՝ Ողջ աշխարհը ման եկայ, Կանաչ-գարունս սլացաւ ձամբաներով հեռակայ:

Եւ ամէնուր տեսայ քանի Հրապոյր ու քանի սէր. Մինչ բերեցի Երեւանին Մատաղ կեանքը իմ նուէր: Ու իմ անցած ամէն նամբայ Մի թել թողեց իմ հոգում, Երեւանի սիրով սակայն Այրուեց սիրտս մորմոխուն:

Ինչպէս սիրած ազգկայ մօտ Կորցրեցի խելք ու միտք, Ու Երեւանը արեւոտ Արբեցրեց ինձ ընդմիշտ: Երգը շուրթիս անցնում էի Փողոցներով ցնծագին. Եւ գեփիւր մեզմիկ-մեզմիկ Փայփայում էր իմ հոգին:

Մի իզձ ունեմ. եթէ մի օր Մահը չոքի իմ դրան, Ամբողջ հոգով կը ցանկամ որ իմ դին տարուի Երեւան, Թող որ հանգչիմ նրա գրկում, Նրա սրտում յաւիտեան:

Թարգմ. ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ

Թարգմ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԿԸ ԼՌԵՄ ՎԵՐՔԸ ՔԱՐԻՆ

Սիրտը նման է էն փլած տներ,
 Կտրե՛ր գերաններ, խախտե՛ր են սներ,
 Բուն պիտի դնեն մէջ վայրի հաւեր.
 ...Տօ՛, լա՛ն տուներ...

ԿՈՄԻՏԱՍ

I

Կը գրես տենդը աղբիւրներուն ահաբեկ եւ կը լռես վեր-
 քր քարին: Քարին բեկումէն աստղեր կը վիժին, եւ երկիրն այս
 քար, մարմին խոշտանգեալ, կը պարզէ շուար արեւը մութին:
 Ծանր է մեղեդին խամրող աստղերուն՝ կրանիթ ինչպէս, Հա-
 յաստանին չափ ծանր է մեղեդին անկումներուն քար եւ վարդը
 լոյսին — սիրոյ յայսմաւորք — հողին սգաւոր կ'իյնայ թեւա-
 բեկ օրերն իր կարմիր՝ երազներ խոցուած, օ՛, դողեր շուար:
 Կը դառնաս անձայն շնչող շիրմաքար եւ լուռ կ'օրօրես տենդը
 մայր հողին: Երկնի կապոյտէն աստղ մը կը գայթի իր ան-
 դունդն ի վար եւ կը քանդակէ նիչերն արփիին՝ մարմնիդ նո-
 րաբաց էջերուն վրայ:

Բիբեր կը լռեն անկումը լոյսին եւ կ'արձակեն քեզ
 աղեղներն արեան տարտարոսներու մթին քամիին: Քար եւ
 միացող ներքին խոցերէ եւ տարածութեան պաստառին վրայ
 դառնօրէն ծաղկած տենդահար խաչքար:

Բիբեր կը գոռան անկումն արեւուն եւ կ'արձակեն քեզ,
 եւ կ'արձակեն քեզ, եւ կ'արձակեն քեզ լուսաստուերներու
 կարմիր խունապին: Սիրտ եւ քարացած անսիրտ խոցերէ եւ
 ժամանակի պաստառին վրայ նենգաբար խաչուած թեւաբեկ
 խաչքար:

Սպիտակ արեւ, իմ գի՛ր կաթնագոյն, կը շալկեմ ժամն
 այս ահաբեկ ու նենգ եւ կ'ըլլամ բիբը քարին բեկանեալ:
 Չաստուածներ կու գան յարալէզներու խունապով անդէմ եւ
 մարմնիդ դալուկ մագաղաթներուն կ'ասեղնագործեն անուն-
 ներ տխուր: Քաղաքներ հանգած, իմ հրդեհ ու ձայն, ես ինչ-
 պէ՛ս խեղդեմ վերքն իմ բազմաձայն, քերթուածն այս անձայն...

II

Եղեամն ես արեան: Կը պաշարեն քեզ, կը կողոպտեն քեզ
 գայլեր արնախում՝ սրբապղծելով տառապանքդ մեծ: Կ'օրօ-
 րեմ մահն իմ, որ արեւ ծնիմ, որ գեփիւռ խօսիմ եւ դառնամ
 դալար երազը հողին: Բայց ինչպէ՞ս խօսիմ եղեամը լոյսին, երբ
 մանգաղները խաւարին, բոցին, ուրուականներու բիբերէն
 ժայթքած բուերու նման՝ կը հնձեն մանուկ երազներդ ամէն:
 Ըսե՛մ արեւին, թէ հարսանիքն իր փշրեցին յանկարծ խոստու-
 մէն առաջ: Ըսե՛մ գեփիւռին, թէ նիզակները փայլեցան մահ-
 ւան աչքերուն նման եւ խոշտանգեցին կանչեր արձակող ծիլե-
 րը հողին, տեսիլը լոյսին:

Երկի՛ր իմ դաժան, օրրան արիւնի եւ տառապանքի,
 ինչպէ՛ս կը բանաս անկումներն արեան խաւարներուն դէմ,
 խաւարներուն դէմ, խաւարներուն հետ՝ խաւարնե՛ր հազար,
 երբ դէմփիդ վրայ դեռ կը պսպղան աստղեր խոստացեալ՝
 բիւր-բիւր երգերով եւ հազար-հազար մարմանդ խաղերով:

Աւեր է չորսդին
 եւ ւերները քարտէսն են բիբիդ:

Կ'արթննաս դանդաղ ծաղիկն անկումին եւ ազոանե-
 րու փոթորիկներուն սեւ խօսքին դիմաց կ'ըլլաս դողացող ծի-
 լեր այսահար: Ճիշդ արցունքին պէս, որ կարօտներու բոյնը կը
 հիւսէ գիշերուան անգոյն յիշողութեան մէջ, երբ բոյրը հողին
 աղբսանք է վառ՝ ձգուած ցնորքի ափերէն կարմիր մինչեւ
 հեռագոյն սահմանը վերջին, անկումէ անկում, անկումէ ան-
 կում՝ անկում մը անտուն...

Բիբն ես ւերին
 եւ ջարդուփշուր հայեացքը լոյսին:

Կը դիտես ւեր քերթուածը մահուան փոթորիկներուն
 եւ կ'ըլլաս հազար անուններ տխուր: Չայնե՛ր կը քակեն դուռ-

ները հողին եւ ժամանակի պարիսպներն ի վար կանչեր մարմրոզ, նիշեր յուսահատ կ'երկարին կապար՝ իբրեւ անկումիդ սգերգներ յամառ:

Անկումէ անկում կը բացուիս դժուար: Քարտէսն եւ մթին գիծերու համայն եւ գորշ գիրերու ուղին ցոյց տուող դաւադիր մատեան: Անկումէ անկում շարժումն եւ քարին, որ բոց կը միայ իր կարծրութենէն եւ ինչպէս մշուշ վերին տենդերէ՝ կ'իջնէ յամրաբայլ իր երազներուն սպիտակ ու ցուրտ դիակին վրայ:

III

Ձիւնը կը ծանրանայ սարսափի պատուհաններուն խաւ-խաւ անձկութիւն եւ հայեացքդ արնագոյն կը յամենայ կապոյտ թռչունին վրայ, որ կը մեկնի շարժումներով սգաւոր կոտտանքներու ֆառսին: Ձիւնը կը տեղայ թախիծ մը սպիտակ բառերուդ վրայ, որոնք ծառերուն եւ բաց աչքերուն սարսափը սանձող պահապաններ են եւ կը պաշտպանեն քեզ քու էութեան մթին շարժերէն:

Աստղ մը կը գայթի աստղ աչքիդ պղտոր փոթորիկներուն եւ կը կտրատեն գիծեր անորոշ մարմինն երազին: Կարծես թէ վազուց դուն կը սպասէիր մենութիւնն այս ծանր՝ աշուն մը ինչպէս, ձմեռ մը ինչպէս՝ այս մեռելային տենդով ահաւոր, կամ մահուան դաժան արքայութեան դէմ մահըդ կ'երգէիր՝ ինչպէս թեաքեկ թափահարումը կապոյտ թռչունին: Մինակ եւ հիմա քու մենութենէն նոյնիսկ աւելի, եւ ձեռքերդ յոգնած, որոնք երկինքի աստղերուն վնիտ սիրերգ կ'երգէին, յիշողութեան բոց դաշտերէն ամէն հիմա դուրս կու գան եւ կը բարձրանան բարտիներ տժգոյն՝ իբրեւ սգոյ գոյն:

Գիտէիր արդէն, թէ պահն է դժուար՝ նոյնիսկ ծնունդիդ ժամէն աւելի: Գիտէիր հաստատ եւ ես գիտէի, թէ կ'ուզես սանտրել անտառները տօն մահուան գոյներէն, բիրբերն քու մաքուր՝ անկեանք մշուշէն, արտերբ բուրբան՝ իրենց միացող ծեր արմատներէն եւ սիրտըդ յոգնած՝ անկումներ յուշող խարուած աստղերէն:

Ի՞նչ ժամանակ է ժամն այս ֆառսին: Ձեռքերդ կարծր են՝ ցուլի մը յամառ կոտոշներուն չափ, իսկ ոտքերդ անուժ ֆայլերն են կատրած ձիւն մը վայրի, որ բաց դաշտերու մեկ-

նող իր ուղին կ'որոնէ հիմա՝ օդակ առ օդակ ծաւալող մահուան տափ հողին վրայ:

Կ'անցնիս դառնութեան դաշտերէ անվերջ եւ սրտիդ մէջ սիրտ բիւր վերքեր շալկած՝ կ'աղօթես անձայն՝ ինչպէս վնասնիստ սիւնը կիսաքանդ հայոց տաճարին: Ոչ մէկ ձայնաւոր նշոյլ կը հասնի բիրբերուդ կանչին եւ տարբերներու խաղին դէմ դաժան կ'ըլլաս փուլ եկող տխուր երգարան:

Օ՛ր, ո՞ր ոտքերը պիտի յարդարեն ճանապարհը քու եւ ո՞ր ձեռքերը պիտի արարեն անջրպետները լոյսին խոստացեալ: Մոռացումն եւ դուն եւ չես իսկ յիշեր, թէ ինչպէ՛ս լսիկ հրնուանքով մը դուն կ'ըլլայիր հսկում անտառներուն կոյս եղանակներուն եւ ինչպէ՛ս հպարտ կը սանձէիր սեւ ձիւնը մահուան՝ շարժեր փոթորկող, շարժեր փոթորկող:

Գիտեմ եւ հաստատ՝ ապաստանած ես հիմա դուն արդէն մոխիրի ծառին դեռ տափ երակին հոսքին մէջ կանաչ, կը գնես մէն մի շարժում եւ բեկում, մինչ աչքերդ լոյս տերեւ առ տերեւ կ'իյնան ծանրաշուփ եւ երկիրն այս սուրբ, որ վէմն էր կեանքիդ, ոտքերուդ տակ մութ շարժեր կը գոռայ:

IV

Աւեր է չորսդին
եւ աւերները խօսքն են գալիքին:

Մեկնիմ ձորերն եւ միացող եւ ծառերուն տափ վերքերը մաքրեմ ձեռքով ու նեկտարով, որ տառապեալ հողին կանաչ բոցը շողայ հազար-հազար երանգներով: Գգուեմ ծառերն իմ բոցահար եւ մոխրացած ոստերն ամէն ցնցեմ, ցնցեմ՝ անորոշին ուղղուած սիրոյ եւ հաւատքի գիրեր իբրեւ: Սիրեմ թռչունն իմ վիրաւոր եւ իր փափուկ վիզէն կախեմ բոժոժ մը ձոյլ՝ սիրոյ ոսկի, եւ արձակեմ գայն երկնքի կապոյտ բոյնին, որ իր կեանքի երգը չերգած եւ ակամայ շանթահարուած բանաստեղծին ֆերթուածը տօն տեղայ, տեղա՛յ աւերներուն՝ մոխիրներուն եւ վերքերուն սուր խոցերը բալասանող եւ կիսաքանդ շէնքերն ամէն իրենց նախկին շէն պատկերին առաջնորդող իբրեւ դարման կենսաթրթիւն եւ գոյութեան աւետարան:

Վազեմ շուար եւ տեղահար մանուկներուն, որոնց արին աչքերուն մէջ դեռ կը միսան բիւր դիակներ եւ կառոյցներ կը տապալին դժուարօրէն, որ վարդենին լոյսին ծաղկի իրենց կեանքի գոյներն ամէն: Եւ ծնրադրեմ լերան դիմաց իմ վշտահար, գեներն իրենն ոտքերն ի վար ազանիները ձիւն-

րուն, որ քար դարձած ձիւնը անբիծ կարկաչ հոսի եւ փափկանայ վիշտը ներմակ գարնանային պատարագով, որ քարացած երկնի խիղճին քարեր նստած արեւն այս որք մերկանայ իր բիւր ցաւերէն ու մեծ սուգէն, ըլլայ կեանքի տօնահանդէս եւ շողերով մաքրամաքուր տեղայ, տեղա՛յ լուսածիծաղ հողին վրայ արիւններու եւ դաւերու:

Պիտի պարեմ ես այս գիշեր մոխիրներուն դեռ չհանգած բոցին վրայ՝ բոցը սիրոյ եւ ծնունդի, պիտի պարեմ ամպերուն հետ մերկամարմին եւ երկնքի կոյր շանթերէն սառույց դարձած գետերուն հետ մահահանգոյն, որ շարժումներն հողին հայոց ծաղկին հպարտ, ծաղկին գուարթ, լոյսը շոյէ փսփսուիք առուակներուն, մանուկները մերկ ու բոպիկ մետաքս խոտին յանձնեն իրենց խայտանքը բորբ, մեղուները թիթեռներուն պատմեն բուրեան նոր հեփիաթներ, սոխակները սիրերգ կանչեն նորաբողբոջ նշենիին ու արեւուն եւ մերկանամ իմ վիշտերէն հայելիին մէջ ջուրերուն արծաթափայլ, հայելիին մէջ ջուրերուն իմ ձիւնափայլ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, գաղտնիքները քու գետերուն, որ ծագէ ծագ ես կարկաչեմ հարսանեկան երգերն ամէն: Տո՛ւր ինձի, Տէ՛ր, անկաս երթը հովին, գետին, որ արձակեմ նժոյգները ես քարացած դէպի մաքուր եւ կենսուրախ հորիզոններ: Տո՛ւր ինձի, Տէ՛ր, գորութիւնը ձայնիդ հզօր, կեանքի ոսկին արեւներուն եւ թափանցիկ սրբութիւնը լոյս հովերուն, որ ձիւնհալի խանդով եռուն իջնեմ, իջնե՛մ Արարատի գագաթներէն եւ տառապեալ հողէն հայոց միլիոն-միլիոն Արարատներ լո՛յս արձակեմ:

V

Բայց աներ է շորտդիս
եւ աներները գիրն են իմ կեանքին:

Ջառանցանքն իմ կը ծնի ծառեր հրկիզեալ, քարեր արիւնոտ, դիակներ անդամահատ, փշածաղիկ ու մահ եւ ես կը դառնամ յուշակոթոց անթարթ:

Տառապանքի եւ պայքարի կրկեսներէն դափնի քաղած լուսանակատ իմ Արտաւազդ, մորմոքներու հողէն արի երկինքն ի վեր դարձիր սլացք ու ծառացում արմենական, փշրէ՛ բոլոր փակ դուռներն ու դարպասները սեւ ու վերին սագրանքներու, որ շողերը էութեանըդ անհունէն ներս երամ-ե-

րամ միշտ թափանցեն աւետաբեր ծիծեռնակներ: Անցի՛ր հաստատ մորմոքներու տաք ափերէն դեռ մխացող եւ աչքերուդ մշուշը լոյծ ցօղուէ՛ արծաթ ջուրին երգով ու ծիծաղով, որ Արաֆսի խոր խորերէն դարձեալ յառնեն շեշտ գիծերը Ամարասի լոյս տանարին եւ կիսաքանդ Աստուածամօր սրբավայրին քարերը սէր արձագանգեն լուսածիծաղ ղօղանջներուն իմ Անիի:

Տե՛ս, աղմուկ մը աներեւոյթ կ'անցնի հողին դեռ արնածոր շրթունքներէն՝ կանչեր սիրոյ եւ ծնունդի, նժոյգները խրխիւնջն իրենց կը տարտղեն հեռաստանէ նոր հեռաստան, կանթեղները կատարներուն Հայաստանի նորոգ լոյսեր լուռ կը վառեն եւ աստղերը թեւերն իրենց կ'ուղղեն ոչ թէ դէպի երկինք, այլ՝ վիրաւոր ակունքներուն իմ հայրենի:

Պահն է լոյսի եւ ծնունդի:

Ու պահ մը քեզի այնպէս կը թուի, որ քամիները կ'օրօրեն հիմա ծառերը բոլոր՝ շարժում առ շարժում, արտոյտները կեանք կ'արթնան նորաբողբոջ հողին հեւքով, լեռները ծանր ու սգաւոր լանջերն իրենց կը վերածեն լուսահանդերձ նոր թեւերու, կը բարձրանան ամպերն ի վեր, որոնք գուարթ շարժումներով, օ՛ր, կը կանգնեն երջանկութեան ու բարիքի հազար գոյներ, հազա՛ր-հազա՛ր ոսկի ձայներ ու կը տեղան երկինքն ի վար հողին վրայ կարծր ու դժխեմ, որ ձայները միահիւսւին առուակներու կարկաչներուն եւ արիւնի խուլ նիշերէն եանա՛-եանա՛ իմ խենթացած կակաչներուն:

Կրնա՞ս արդեօք չլսել դուն երգն այս հզօր՝ ճակատագրի սեւ շեշտերէն ալ գօրաւոր, որ կ'երփնագրէ երկիր-երկինք լինելութեան ծիծաղով, որուն մաքուր ու թափանցիկ նոր գոյներէն հասակ կ'առնեն կապուտաչեայ վարդ մանուկներ եւ կը մաքրեն տուներն ամէն սարսափներու գորշ գոյներէն ու ծանր օդէն այս սգաւոր, որ փարատի տագնապն այս խուլ, տագնապն այս քար ու փափկանան քար վիշտերը հայոց հողին տագնապահար:

Հասկերն ահա կը ծնրադրեն հողին բուրեան հազար կարօտ ու բիւր խոստում եւ արտոյտներն տօն կը դառնան գոյներուն մէջ համայնական: Հովերն ամէն սէր կ'երկարին ծագէ ի ծագ եւ բիւրաւոր երդիքներէ կը բարձրանայ անուշ բոյրը սիրահացին: Ու կը ծաղկիմ թունիրին հետ արե՛ւ հացեր, ծիծա՛ղ հացեր, ու կը հոսիմ սեղաններուն ինչպէս սիրոյ կարմիր գինին, որ եղէգներն արծաթաձայն սիրերգ կանչեն մայ-

բամուտէ մինչ արշալոյս եւ երկիւղած արեւին հետ ցորեն ու նուռ տեղամ գինով մահիճներուն նոր հարսներուն, որ լո՛յս դառնամ, անձրե՛ւ դառնամ, ցորե՛ն դառնամ ու գեղգեղեմ երդիճներէն, օ՛, ծնունդի հագար-հագար ոսկի նիչեր...

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, գաղտնիքները մեր գետերուն արծաթաձայն, որ ծագէ ծագ եւ կարկաչեմ հարսանեկան երգերն ոսկի: Տո՛ւր ինձի, Տէ՛ր, գուարթ երթը լոյսին, հովին, որ արձակեմ եւ քարացած նժոյգները Արտաւազդին դէպի պայծառ եւ կենսուրախ հորիզոններ: Տո՛ւր ինձի, Տէ՛ր, արտասուքի պէս մաքրափայլ գորութիւնը ձայնիդ հօօր, կեանքի ոսկին արեւներուն եւ թափանցիկ սրբութիւնը լոյս հովերուն, որ յարութեան խանդով եռուն՝ Արարատի սուրբ լանջերուն արե՛ւ ծաղկիմ, ցորե՛ն դառնամ, խաղո՛ղ դառնամ ու գեղգեղեմ սեղաններուն հարսանեկան պտղաբերման եւ բարութեան հրա՛շք գինին...

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Պէլրուք, Յունուար-Մայիս, 1989

Ե. ՏԷՄԻՐՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ...

Կրթական մշակ ու ազգային ու հրապարակագրական մարդկունքն մէջ գործած ու գործող երուանդ Տէմիրճեան, Դեկտեմբեր 7-ի Երկրաշարժային ծանօթագրութիւն գրեթէ անմիջապէս նախ, ի շարս այլոց՝ գործու գուկցու Հայաստան եւ առիթ ու նկատմամբ ծանօթանայու հայրենի պատկան մարմիններուն, մտաւ որպէս թեան թէ ժողովրդային իսկերու ապրումներուն, մասնումներուն ու դժուարութիւնները դիմադրուող անոնց կորովին:

Վերագործին՝ երուանդ Տէմիրճեան գրի առաւ իր ապաւորութիւնները, որոնց մաս կը կազմէ որոշ յանգու ու մեղրով ներկայացող հետազայ հատուածը:

Հայաստանի մէջ, 7 Դեկտեմբեր 1988ի կէսօրուան ժամը 11.41էն սկսեալ իւրաքանչիւր օրուան քսանչորս ժամը քիչ մը Երկրաշարժ է, փլատակներու աակէն հանուած ողջերու եւ մեռելներու ողբերգութիւն, քիչ մը Ղարաբաղ է ու Ղարաբաղի կոմիտէ, քիչ մը Հայաստանի Առաջին հանրապետութեան ողբերգում է, Մայիս 28, քիչ մը Երեւանի դրօշի պահանջ է ու քիչ մը՝ Աղբրեջան:

Ու բոլոր «քիչ»երը շատ են, մեծ, իրենք իրենց մէջ խորու նկ, անձայրածիր, ամբողջակա՛ն:

Վայրկեանները կազմուած են մա՛նաւանդ ու էապէս՝ ընդհանրական հարցերով:

Այսպէս, Հայաստանի առօրեան լեցու ն է ո՛չ միայն անտուն ազգականներու կամ Աղբրեջանէն Հայաստան ապաստանած հայերու կեցութեան տագնապայից խնդիրներով, բարեկամներու փնտտուքով, մեռածներու ցանկազրումով, սուգով, ընդհանուր կորուստներու սարսափազդու գնահատանքով, անգերեզման մնացած սիրելիներու անտանելի յաճախանքով, այլ մա՛նաւանդ՝ բողբոջով, դժգոհութեամբ, պահանջատիրութեամբ, դէպի պաղտաբարական արմատներ դարձով, ընդվզումով, հաւատքով, վրդովումով, վերապրելու տենդով:

Հայոց համար սուրբեր են յատկապէս անոնք՝ որոնք մեռելներուն վրայ ու վիրաւորներուն ու փլատակներուն ի տես՝ Հայաստանին հետ լացին, ինչպէս Միացեալ Նահանգներու նախագահի ձորճ Պուշի տղան, ձոն եւ, մա՛նաւանդ՝ Ռիժեով, Խորհրդային Միութեան վարչապետը:

Արտասահմանեան անհատնում եւ անսպասելի օժանդակութեան ի լուր, Երեւանի բոլոր ճաշարաններուն թէ տուններուն մէջ հետաքրքրութեան նիթ են Ամերիկան, Անգլիան, Ֆրանսան, Իտալիան, արտասահմանի հայութիւնը, աշխարհը:

Ու բոլորին ջով՝ անպայման խորհրդային ջոյր հանրապետութիւններ ու... լեզի Ազրբեջան:

Կլասսիցիստներն ու փերեսթրոյֆայէն ետք, խորհրդային Միութեան ամբողջ տարածքին, ոմանք, դարնան գոմէն նոր դուրս ելած ցուլերու պէս՝ կը վազեն ճառագայթներու ետեւէն, ուրիշներ, արեւու լոյսէն շլացած՝ տակաւին փակ կը պահեն իրենց աչքերը:

Հայաստանի մէջ, փաստօրէն, հոգեշարժը կանխեր է երկրաշարժը:

Ու աշխարհաքանդ երկրաշարժն անգամ չէ կրցած սառեցնել եռացող լաւան:

Հոգիները կը շարունակեն մխալ:

7 Դեկտեմբեր 1988ի կէսօրուան ժամը 11.41էն սկսեալ, Հայաստանի մէջ մարդիկ մէկ կողմէ մարդ կը թաղեն, միւս կողմէ՝ յարութիւն կու տան անթեղուած կայծերու:

Ամբողջ երկիրը հրապարակային ասուլիս է, վիճարանութեան կլոր սեղան:

Ու հարցը այն է, որ դատաւորը իրենք են, վիճողները...

Այսու հանդերձ, բոլորը համաձայն են, որ 1988ի փետրուարեան ժողովրդային առաջին ցոյցերը ուղղուած չէին պետութեան դէմ: Անոնք կը միտէին ջոյր հանրապետութիւններու ուշադրութիւնը հրաւիրել Հայաստանին վրայ եւ շահիլ անոնց համակրանքը: Անոնք՝ ժողովրդային առաջին ցոյցերը, պարզապէս ղէպի Կեդրոնական կառավարութիւն արձակուած կոչ էին, արդարադատութեան խնդրանք, ահագանդ:

Ցոյցերը ո՛չ միայն պետութեան դէմ չէին, այլեւ, կարելի է ըսել, պետական էին:

Ճեղքը բացուեցաւ, երբ Հայաստանի մէջ կուսակցութեան նշանակած թեկնածուները երեսփոխան չընտրուեցան ու երեսփոխան ընտրուեցան ժողովուրդի՛ն կողմէ նշանակուած թեկնածուները:

Այս, ամբողջ խորհրդային Միութեան մէջ եզակի դէպք էր:

Առաջին ճերմակ յեղափոխութիւն մը:

Բոլորը համաձայն են նաեւ (պետութիւնն այլ), որ կառավարական մակարդակի վրայ գոգութիւն կայ, կաշառակերութիւն կայ, անբարոյութիւն կայ, անկաղճակերպուածութիւն կայ, մափիա կայ:

Բոլորը համաձայն են, որ Ղարաբաղը պէտք է կցուի Հայաստանին:

Բոլորը համաձայն են, որ Եռագոյնը ազգային գրօջ է եւ Առաջին հանրապետութիւնը պէտք է այլեւս իր արժանի տեղը գտնէ պատմութեան էջերուն մէջ:

Բայց համոզումները բոլորովին հակոսանայ են:

Ոմանք կը պնդեն, որ կարելի է ուժեղացնել բարեփոխել ու այդ մեծագոյն յոյսը կը նկատեն Կորպաչովը:

— Կորպաչով խելացի, թաւիչէ ձեռնոցներով Ստալին մըն է պարզապէս. թագաւորին լաւը չկայ: Թագաւորը թագաւոր է, — կը հակաճառեն ոմանք:

Ուրիշներ անխախտելիօրէն կը հաւատան, որ Կորպաչով փրկիչ մըն է, որուն հակառակորդները, նոր Ստալիններ, կը փորձեն խանդարել անոր գործը:

Յանկարծ մէկը կը պոսթկայ.

— Կորպաչով ըսաւ՝ կրնաք խօսիլ: Ուրեմն՝ կը խօսինք: Թող ըսէ, որ լուենք՝ կը լուենք: Իսկ եթէ պիտի խօսինք, պիտի խօսինք ո՛չ թէ ստամոքսի, այլ՝ ազգային հարցերու մասին: Ինչո՞ւ կարգ մը խնդիրներու գծով կարելի է արտայայտուիլ, կարգ մը կացութիւններու գծով՝ ոչ:

Ուրիշներ կը պնդեն, որ ամէն ինչ կարգի կը դրուի կամաց-կամաց:

Ոմանք հարց կու տան, թէ ինչո՞ւ Կորպաչով երկրաշարժէն ետք Լենինական գնաց: Կրնար աղէտէն առաջ այցելել Երեւան եւ լուծել Ղարաբաղի հարցը: Ինչպէ՞ս կարելի է ղեկավար նկատել մէկը, որ հետոն նստած, իրարու տարակարծիք երկու կողմերուն այ իրաւունք կու տայ: Եթէ ազերիներուն ըսէր՝ «լուցէ՛ք», կը լուէին: Եթէ հայերուն ըսէր նոյնը, կը ստացուէր նոյնը: Զուգեց արդարութիւն ընել, որովհետեւ կ'ուզէր, որ հարցերը հարց մնան...

Ուրիշներ կ'ընդվզին Կորպաչովի հաշուոյն:

— Ի՛նչ լաւ մարդ է. ձգեց Ամերիկան, եկաւ Հայաստան: Թելազրեց պարզապէս, որ քիչ մը համբերենք:

Ապա, Չղայնացած, «Կորպաչովաւէր»ները հարց կու տան.

— Տեղի՞ն էր, որ մեռելներուն առջեւ, փլատակներուն դիմաց, մարդիկ անոր հայհոյէին, պողոտաներէն անցած ատեն՝ կոնակ դարձնէին անոր, կամ կրկնէին ու կրկնէին. «Ղա՛-րա՛-բա՛ղ... Ղա՛-րա՛-բա՛ղ...»: Տեղի՞ն էր:

— Հապա տեղի՞ն էր, կը վայելէ՞ր, որ մեռելատան մէջ, փոխանակ ամօքի խօսքերու, յուսադրող արտայայտութիւններու, ընկեր ղեկավարը մաղձ թափէր, — կը հակադարձեն ուրիշներ, ապա կ'աւելցնեն.

— Ինչո՞ւ կը մոռնաք Կորպաչովի այն մեղադրանքին դէմ, թէ այսքան աւերի դիմաց՝ ի՛նչ Ղարաբաղ, ինչո՞ւ կը մոռնաք հայ գեղջու կին պատասխանը:

«Ընկեր Կորպաչով, ոչ թէ այսքան մեռելի դիմաց, այլ եթէ մէ՛կ հատիկ հայ էլ մնայ, էլի՛ պիտի գոչի Ղարաբաղ»:

— Մինչեւ Կորպաչով ստրուկներ էինք, — կը ճշան մարդիկ:

— Ստրկութենէն տակաւին չենք ազատագրուած, — կը յամառին ուրիշներ:

— Ղարաբաղը ո՛չ քեզի, ո՛չ միւսին չի կրնար ըլլալ, — կը զայրանան ոմանք:

— Այս առժամեայ կարգադրութիւն է, Ղարաբաղը պիտի կցուի Հայաստանին, — կը հաւատան ուրիշներ:

Շաա են Կորպաչովը սիրողները, սակայն շատ են նաեւ անոնք՝ որոնք կ'ըսեն.

— Դէպքերու բարձրութեան համապատասխան մարդը չելաւ:

Այս հաստատումը կ'ընեն նաեւ ոուսեր, որոնք Երեւանի մէջ երբ հայ բարեկամներով վոտֆա կը խմեն, կը խոստովանին.

— Ղարաբաղի հարցին մէջ բոլորի համակրանքը հայերուն կողմն է: Հակառակ երկրաշարժի առիթով աշխարհի ակնբախ վշտակցութեան, աշխարհի անհաւատալի առատաձեռնութեան, այս իրողութիւնը տակաւին չէ ըմբռնած ընկեր Կորպաչով, զոր, ի դէպ, շատ կը սիրենք:

— Հայկական լոպիմ անկասկած հրաշք գործեց 70 աստիներու ընթացքին: Զուր չանցան Ապրիլ 24երու նուիրում հաւաքները, ցոյցերը, բացատրողականները, պահանջատիրութիւնը: Զուր չանցան Հայ Դատի գծով տարուած աշխատանքները: Մարդոց ենթագիտակցութեան մէջ տեղ գրաւեցին ցեղասպանութիւնն ու ոճիրը: Մերկացաւ ոճրագործը, սիրուեցաւ զոհը: Ու թէեւ դժբախտ, սակայն երբ պատեհ առիթը ներկայացաւ, ահաւասիկ Հայաստանին համար օժանդակութիւնները մրցումի կլան իրարու հեա:

— Արեւմտեան երկիրներու օժանդակութիւնները Հայաստանին՝ միայն մարդասիրական չէին, — կը մեկնարանեն ոմանք:

— Կովկասի Հրէաստանն է Հայաստան, — կը հաստատեն այցելուներ:

— Քաղաքացիական պատերազմ, — վախժխելով իրարու կը փսփսան օտարներ:

Երրորդ Համաշխարհային պատերազմը կրնայ Հայաստանէն ծագիլ, — կը խորհրդածեն ծանր մարդիկ, միշտ օտար:

Ու բոլորը կը կրկնեն իրենք զիրենք.

— Կորպաչովը, Հայաստանի գծով, կացութեան պահանջած մարդը չեալաւ:

Նոյն անտաճանաչու մը կ'ընեն Հայաստանի կառավարական մարդոց մասին՝ թէ՛ երկրաշարժի կազմակերպչական աշխատանքներու, թէ՛ վարչական ամէն տեսակ հարցերու գծով: Տիւմար պիտոկրաթիզմ:

— Եթէ բնութեան շարիքին դէմ կարելի չէր բան ընել, անկասկած կարելի էր բան ընել մարդու շարիքին դէմ: Առնուազն կարելի էր շարիքը կանխարդիւել: Դիտելէ՛ք: Ճիշդ է, պաշտօնները հեղինակութիւն են, սակայն մեր պատօնատարները այդ հեղինակութիւնը կ'արժեզրկեն: Այս՝ արդէն մեր երկրին համար երկրաշարժէն աւելի մեծ դժբախտութիւն է: Յոյց տուէք մեր կառավարութեան մէջ օրու ան պահանջքին գոհացում տուող մարդը: Ժողովրդական հերոսը: Չկայ: Այս օրերուն Արամ Մանուկեան մը պէտք էր: Ո՞ր է: Ո՞ր էն...

Կը պոռան հանրային պարտեզներու մէջ, հրապարակներու վրայ, հրասայլերու գիմաց, այս խենթացած, անհակակշիռ կամ սրտերնին այրած հատաքի տղաքը:

Ճիշդ է, որ հաստատուած է պարետային ժամ, այլևս ցոյց չկայ, մի-թինկ չկայ, հրասայլերը պաշարեր են Երևանի բոլոր կեդրոնական հրապարակները (Անինի, Օփերայի), Երևան բերդ-տանող բոլոր ճամբաները: Սակայն ցուցարարները ցրուած՝ նոյն կարգախօսները կ'արձակեն ոչ իբրև խումբ, այլ՝ այս անգամ իբրև անհատ:

Իրաքանչիւր ոք ջղադրգիտ, այլ կարգապահ ամբոխ մըն է:

Մարդիկ փողոցներէն կը քալեն անժպիտ, մոռալ, երբեմն՝ իրենք իրենց հետ խօսելով: Փոխադրակառքերու մէջ նախկին բարձրաձայն շատախօսութիւնը չկայ: Դէմքերը անձիւնած չեն, հագուստներէն տխրութիւն կը հոսի: Երկիրը իր ամբողջութեան մէջ ցոյց է, հոգիներու մէջ շարունակուող երկրաշարժ:

Այս արդէն հաւաքական ցոյցէն շատ աւելի ուժեղ բան է:

Արեւամուտին, մէկ-երկու աղջիկներ, թոռուցիկ կը բաժնեն աջ ու ձախ, ու արեւուն հետ կ'անհետին:

Մեծ ու պզտիկ, մտաւորական թէ աշխատաւոր, գիտնական թէ խուլի-զան՝ կը խօսին միայն ու միայն հայրենիքի մասին: Հոս է, Հայաստանի մէջ, այս օրերուն, որ մայրերը կը ստիպեն իրենց ամուսնոյն, իրենց գաւակներու ն՝ գնալ...

«Խուլիզան»ը հին բառ է այլևս: Հայաստանի մէջ խուլիզան չկայ, գող չկայ: Ազգային ջիղը մաքրեր է ամէն ազտ:

Պանդոկին մէջ կին մը այցելուներու ն ճոճագոյն կը բաժնէ ու բարձրաձայն կը հեզնէ.

— Երբ ձերբակալութիւնները սկսին, առաջին անգամ զիս պիտի տանին...: Արտասահմանի հանդէպ հաւաք կայ: Խնդրանք ու թիւադրանք կայ, որ Ռամկավար, Հնչակեան, Դաշնակցական իրարու հանդէպ հասկացողութիւն ցոյց տան: Ներդաշնակ գործեն: Իրարու միանան:

Կայ մա՛նաւ անդ մի սը, որուն համար կարծէք կ'աղերսեն.

— Մի՛ վախնաք մեզի համար: Մեզմով մի՛ մտահողուիք: Մենք այլևս կորսնցնելիք չունինք: Հաւա՛ր փրցուցէք, աշխարհը ոտքի՛ հանեցէք: Սու մ-գայիթը վկայ, որ այսպէս շարունակուի՛ Հայաստան չկա՛յ:

Ու գերագրգոռուած՝ կ'աղաչեն, կ'երգնուն.

— Գրեցէ՛ք մեր թերութիւններուն մասին ու գիտցէ՛ք սուրբեր են Ղարաբաղի տղաքը: Որ այդ կոմիտէն չըլլար՝ ժողովուրդը շատոնց սովետի դէմ կ'ըլլէր...: Ղարաբաղի կոմիտէն որ չըլլար՝ ազգամիջեան բախումները շատոնց սկսած կ'ըլլային:

— Ղարաբաղը՝ այո՛, սակայն Ղարաբաղի կոմիտէն սխալ գործեց, — կը մեղազրեն ոմանք:

— Ղարաբաղի կոմիտէն կը ձգտի կառավարութեան տեղը անցնիլ, — կ'ամբաստանեն ուրիշներ:

— Ղարաբաղի կոմիտէի բոլոր անդամները պաշտօնապէս երգում ըրած են, որ ո՛չ մէկ ժամանակ իշխանութեան գլուխ պիտի գան, — կը հաւատիացնեն լաւատեղեակներ:

Այսպէս կ'ըսեն, այսպէ՛ս կը պատասխանեն, կը փոխադարձեն, կը վիճին, գլուխ կը պատօնեն Հայաստանի մէջ, հայաստանի հայերը:

Բայց, կրկին, համաձայնութեան եզրերը չեն պակսիր: Բոլորը միաձայնութեամբ համաձայն են, որ Ղարաբաղ կոմիտէի ոչ մէկ անգամ պէտք է բանտարկուի կամ բանտարկուած մնայ: Այդ պիտի ըլլայ ո՛չ միայն ակնբախ անարդարութիւն, գրողիչ միջոցառում, այլև՝ կառավարութեան ինքնավրտահոթեան պակասի փաստ:

Այս վէճին մէջ, դարբարացիին ձայնը լեռներէն կը լսուի.

— Եթէ Հայաստանը մեզ լքէ, ինքզինք լքած պիտի ըլլայ: Մենք Արարտեան դաշտի շնչառութիւնն ենք: Առանց մեզի՝ Արարտեան դաշտը կը մեռնի:

— Կրնայ ըլլալ, — կը շարունակէ ձայնը, — որ Հայաստանը օր մը ըստիպուած ըլլայ լռելու: Արտասահմանը սակայն պէտք չէ հրաժարի հայրենի այդ իրաւունքէն, հայրենի այդ սրբազան պարտքէն:

Սփիւռքը այս օրերուն կրկնակ նշանակութիւն ունի: Մէկը բարձրաձայն կը խորհրդածէ.

— Սփիւռքահայութիւնը մեր պապենական հողերը պահանջեց թուրքիայէն, իսկ Խորհրդային Հայաստանի հայութիւնը ահա արդարութիւն կը պահանջէ սովետէն, որուն մաս կը կազմէ: Պէտք էր այս վերջինը աւելի արագ ու զիւրին ըլլար:

Ուրիշ մը կը շարունակէ.

— Իսկ պահանջատէր այս մթնոլորտը մէկ օրէն միւսը շտաեղձուեցաւ: Անոր մէջ դեր ունեցան մեր գրողները, մեր ճարտարապետները, ուսուցիչները, գծագրիչները, քանդակագործները, գիտնականները:

Գերի Արարա՛տը:

Հոն դեր ունեցան Միծեռնակաբերդը, Սարգարապաւը, Չուարթնոցը, Մայր Հայաստանը, միւս յուշարձանները: Հոն դեր ունեցան էրիկմա՛րդ մարգիկը. ահա անոնց գլխաւորներէն մէկը, Սէրգէյ Համբարձումեանը, որ Մոսկուայի մէջ, խորճաւ, պատասխան կու տայ Կորպաչովին՝ ու Սէրգէյի հաշուոյն ամբողջ Խորհրդային Միութիւնը կը դողայ.

— Դո՛ւք, ընկեր Կորպաչո՛ւ, կրնաք ինձի դաս տալ՝ քաղաքականութեան մէջ, սակայն ջարդի մասին՝ ինձի՛ հարցուցէք. ջարդը անցած է ջիզերուս, արեանս: Հոն ձեզմէ սորվելիք չունի՛մ...

Ահա Վիկտոր Համբարձումեանը, կրկին Կորպաչովի դէմ-յանդիման, սղառնացայա-

— Կ'երթամ Կրեմլին եւ հացադուլ կը յայտարարեմ ու աշխարհ կը ցնցուի...

Ամէն անգ, 24 ժամու վրայ 24 ժամ, վէճ է: Ու ամէնէն յաականչականը ա'յն է, որ գրեթէ չէզոք չկայ Հայաստանի մէջ:

Միակ գէշը, մեծ իժը, որ կայ առայժմ, ա'յն է, որ փետրուարեան բիւրեղ միութենէն ետք, հաւաքական կասկածամտութեան ալիք կը կազմուի օդի մէջ:

Պատնարան է Հայաստանը:

Երբ Գէորգ Էմինին այցելեցի, ցոյց տուաւ իր թոռնիկը-

— Ասիկա կատու շատ կը սիրէր: Ոնորեց ու խնդրեց, որ հատ մը ճարենք: Չեզա: Վերջապէս, օր մը երբ կատու կը փնտուէինք, չուն մը գտանք ու բերինք տուն: Թէեւ ուրախացաւ, սակայն չմոռցաւ իր առաջին պահանջը, կատուն:

«Ու օր մը երբ հարցուցինք իրեն, թէ՛ «Բալիկ ջան, ի՞նչ գնենք շան անունը», անմիջապէս ու պարզապէս ըսաւ՝ «կատու»:

«Հիմա մեր շան անունը...կատու է:

«Հիմա Հայաստանի մէջ ո՞վ է ճիշդ, ո՞վ է սխալ, անկասկած պատմութիւնը ցոյց պիտի տայ:

«Կորպաչովեան փերեսքոյֆան եւ կլաքնոսքը ո՞ր յեղափոխութեան կամ եղափոխութեան գուռը պիտի բանան եւ ուրկէ՞ պիտի սկսի բուն շարժումը:

«Երեւանէ՞ն, թէ... Մոսկուայէն:

«Պատմութիւնը շատ բան ցոյց պիտի տայ»:

Յամենայնդէպս, անվիճելին ա'յն է, որ Հայաստանի մէջ հայ ժողովուրդը հին քարտէսներ ունի սրտին մէջ, իրաւ ու մեծ պատմութիւն, Եռագոյն գրօշ:

Ներկա՞ն: Ա՛յս: 24 ժամ՝ 24 ժամու վրայ:

Ապագա՞ն:


Այդ մասին խօսեցաւ նաեւ Ռազմիկ Դաւոյեանը, իր տան մէջ, որ ըսաւ .

— Ես կը հաւատամ Սասնայ Դաւթի երրորդ գարկին. առաջին երկուքը պարապ անցան: Երրորդ գարկը մեկ կը փրկի...

ԵՐՈՒԱՆԻ ՏԷՄԻՐՃԵԱՆ



Ջաջու: վնասուած քանդա-րանից հանում են Մինասի կտաները...



Մինաս Աւետիսեանի տուն-քանդարանը՝ երկրաշարժէն վնասուած վիճակի մէջ. Ջաջու:

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Յիշատակի խօսք)



Էդգար Էյրակեան

Սովետահայ թատրոնն անգառնալի մի կորուստ եւս ունեցաւ: առմիշտ հետագայ Էդգար Էյրակեանը՝ մարդկային առաքինութիւնների ու արուեստագէտի այդ ներդրումները, նրա արտիստական խառնուածքը, էութիւնը լցուած էր գուարթ հնչիւններով, անսպաս հումորով, հազուադէպ բարութեամբ, ու այս ամէնը յորձանքում էր, փոխանցում նրա բեմական կերպարներին: 1976ին Վիլիամ Մարոյեանը, «Իմ սիրտը լեռնե-րում է» պիեսի առաջին ներկայացումից տասնհինգ տարի անց, զիանց նրա թատերախաղը մեր մայր թատրոնի բեմում եւ յայտնեց իր տպաւորութիւնը՝ «Վար-

դան Անէմեան իմ պզտիկ երագէն մեծ գործ մը ստեղծած է»: Աճէմեանական այդ «մեծ գործի» մասնակիցներից էր և էդ. Էյրակեանը. ո՛չ հիմնական, ո՛չ նոյնիսկ երկրորդական գերակատար, այլ պարզապէս մասնակից, որ բեմ էր մտնում մի խումբ մարդկանց հետ՝ առանց խօսքի, բեմում եղած միջոցին երգում էր Առնօ Բարաջանեանի յորինած հողեպարար մեղեդին: Այդ երեկոյ համեստ ճաշկերոյթի սեղանակիցներն անհամբեր սպասում էին, թէ ինչ կ'ասի մեծ գրողը, ինչպէս կը գնահատի իրենց արուեստը:

— Ան ո՞վ կ'երգէր «Իմ սիրտը լեռնե-րում է» երգը, — հարցրեց Աարոյեանը:

Պատանեկան շիկնանքը դէմքին՝ ոտքի կանգնեց յիսունամեայ Էդգարը:

— Կը խնդրեմ նորէն երգէ, — ասաց Մարոյեանը և փոքր դադարից յետոյ ասելացրեց, — միայն այն ատեն, երբ հոգիդ պատրաստ ըլլայ:

Իր բեմական կեանքի ընթացքում Էդ. Էյրակեանը երբեք բեմ չբարձրացաւ անպատրաստ հոգով: Եւ սա ո՛չ միայն բեմական թանկ տուեալների շնորհիւ, այլև՝ ողջամիտ արուեստագէտի տքնութեան: Պարզ, անդարդ արտաքին կեղևի մէջ իրօք ապրում էր գերզգայուն, նրբամիտ արախտը: Այս էր նրա հմայքի ակունքը թէ՛ իրրև գերասանի և թէ՛ մտրդ անհատի:

Ինստիտուտն ասարակուց յետոյ, 1950ին բնդունուելով Պատանի հանդիսատեսի թատրոն, ասելի քան մէկ տասնամեակի ընթացքում Էդգարն ստեղծեց ամենատարբեր բնոյթի ու ծաւալի դերեր՝ երիտասարդ սիրահարներից մինչև իրենց մայրամուտին հասած ծերունիներ: Գրանց չղթայից անկարելի է շտանձնացնել Գողոյի Խլետակովին, որն իսկական

երևոյթ եղաւ սովետահայ բեմում: Հայ բեմը Խլետակովի փայլուն գերակատարներ շատ է ունեցել՝ Գ. Աղամեան, Գ. Արաքսեան, Իս. Ալիխանեան, Բ. Գարրի-էլեան, Վ. Վաղարշեան և այլք: Էյրակեանի Խլետակովը եղաւ իր նշանաւոր նախորդների լաւագոյն տանգների օրինաւոր ժառանգորդը մեր օրերում: Աննախաղէպ էին գերասանի ներքին ու արտաքին պլաստիկան: Էդգարը կատարելապէս տիրապետում էր գերասանի իր «գործիքին», մա՛նաւանդ՝ ձայնին, որը թէևս զօրաւոր չէր, բայց զարմանալիօրէն հարուստ էր հնչերանդներով, բարձրանում էր մինչև կոլորատուրայի մատոյցները:

1962ին Էդգարը տեղափոխուեց մայր թատրոն: Պարզապէս անակնկալ էր Աունդուկեանի Գիքոյի գերակատարութիւնը, որը գերասանի ստեղծագործութեան կիզակէտը դարձաւ: Գիքոյի մէջ հանդուցաւորուեցին Էյրակեանի արուեստի բիւրեղեայ անկեղծութիւնն ու անմիջականութիւնը, կերպարի սուր զգացողութիւնը, ապրումի արտայայտման, վերամարմնաւորման հմտութիւնն ու վարպետութիւնը: Հողերանական անցումների նրբազգայնութեամբ Գիքոն կոնցերտային հնչեղութիւն ունեցաւ, ընկալուեց որպէս բարութեան ու արդարամտութեան մարմնացում: Էդ. Էյրակեանի բարձրարուեստ կերպարներից էր Սուխոփօ-Կորիլինի Տարելկինը գերակատարումը: Մանր, նեղճակատ շինովնիկի կերպարին գերասանը հաղորդեց դրամատիկ հնչեղութիւն, հասնելով սոցիալական ընդհանրացման վերին սահմաններին: Տարելկինը եղաւ տիպականացման արուեստի հոյակապ մի դրսեւորում:

Նշանակալից էր և Թոփաղը Մ. Պանոյի նոյնանուն դրամայում: Սա այն հաղադէպ գերերից է, որի մէջ ապրում են երկու անյարիր բնաւորութիւններ. երէկուայ աղքատ, անօգնական, թշուառ ու սուցիչը բախտի բերմամբ դառնում է ազդեցիկ, մեծահարուստ ու դաժան տիրակալ: Էդգարը Թոփաղի առաջին ետիտուայտանքները պատկերում էր խորունկ դրամատիզմով և ապա նուրբ արուեստով դժուր անցումը երկրորդ

սահին: Այս փոխկապակցութիւնը գերասանը պատկերում էր տպաւորիչ ցնցող գոյներով:

Էդգարը մեր բեմի այն գերասաններից էր, որը զիտէր անկրկնելի ակնթարթ պարզեւել հանդիսատեսին: Ժորա Յարութիւնեանի «Խաչմերուկ»ում խաղում էր պարզ աշխատաւոր մարդու՝ Մուշեղի ոչ ծաւալուն դերը: Լսում էր բանաստեղծի տողերը:

Անց եմ կեցում, շուրջս մարդիկ, Շուրջս դէմքեր հազար-հազար:

Հրճուանքով դիմում էր ընկերոջը. «Գասպար, իդա մեր Չարենցն ի, Չարենցը»: Բանաստեղծի անուան արտաբերման մէջ Էդգարը ներդնում էր այնքան լոյս ու ջերմութիւն, որ, ասես, ժողովրդի համապարփակ հաւաքական սիրոյ խտացումն էր արտայայտում: Ականատեսների մտապատկերում անջինջ կը մնայ Էյրակեան-իլի կերպարը Գիւրեն-մաթի «Մեր կնոջ այցը» պիեսի հեռուստատեսային ներկայացման մէջ:

Անձուկ էր մեր կինոգործիչների տեսագաշտը: Բայց, այդ ուհանդերձ, եկողները կը հաղորդակցուեն Էդգարի անխառն արուեստին «Ջրիտրի մօտ» հեռուստատեսային կինոնկարի շնորհիւ, որ անձնաւորեց զլիաւոր հերոսի՝ Հայ գեղջուկ Բաղդասարի կերպարը: Այստեղ գերասանին ու այդ կերպարին անջատող սահմանը գտնելը պարզապէս հնարաւոր չէ: Հազուադէպ կինոկերպար, հողեղէն և միեւնոյն ժամանակ աստուածային, անբիծ հողով: Նրան հանդիպելը կինոպաստառի վրայ կամ բեմում դիտողի երջանկութիւնն է: Ոչ մի պայմանականութիւն, հնարածին բան: Այդ նախակիրք մաքրութեան շնորհիւ է, որ գերասանի կերտած կերպարը հնչում է իրրև բողոքի ճիչ՝ ընդդէմ մարդկային անբնական յարաբերութիւնների, ընդդէմ պատերազմների: Կը սահի ժամանակը, կը մեղմանայ, կ'անցնի վիշտը, և Հայ թատերասէր մարդիկ մեր թատրոնի տարեգրութեան էջերում հպարտութեամբ կը կարգան աքառուչելի գերասանի, մեծ հողու աէր Էդգար Էյրակեանի չխամբող անունը:

ԳԷՈՐԳ ԱՐԱՔՍԵԱՆ



ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

Արձակագիր, թատերագիր և թագմանիչ Հրանտ Հրահան (բուն անունով՝ Հրանտ Նազարյան), ծնած է 28 Փետրուար 1898ին, Քուրքիոյ Առապագար քաղաքը: Նախնական կրթութիւնը կը ստանայ ծննդավայրի Ռուբինեան վարժարանին, իսկ միջնակարգ կրթութիւնը՝ Ազգ. Կեդրոնական ինստիտուտին: Մեծ Եղեռնի ժամանակ կ'ապաստանի Քլոթաճիա քաղաքը, ուր 1919-21 կը պաշտօնավարէ քաղաքի հայկական վարժարանին մէջ: Ապա կ'անցնի Գուլկարիա և կը պաշտօնավարէ Գրովգիկ քաղաքի արտադրական ագարակի մը մէջ: 1956ին կը ներգաղթէ Խ. Հայաստան:

1931ին սկսեալ՝ Հրանտ Հրահան գրչանունով կը հրատարակէ ինը հատորներ, որոնց գլխաւորներն են՝ «Արցունք եւ ժպիտ» «Բալկանների լանջերում», «Իմ կեանքի վէպը» և «Խօսում եմ անմահները»:

Կը մահանայ 1988ին:

ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

Վախճանուեց Հրանտ Հրահանը, որն արձակագիր էր, թատերագիր, թարգմանիչ, լրագրող ու հոկտոր: Ի հարկէ, երբ նա սովորում էր ծննդավայրի՝ Տոնիկաչէնի (հետագայում թուրքերը Աղարագար կոչեցին) Ռուբինեան վարժարանում և Ազգային կեդրոնական լիցէում, չդիտէր, թէ ինչ ճակատագիր է սպասում իրեն: 1915ը սովորական տարեթիւ էր թւում... Հրանտ Հրահանը տեսաւ, ապրեց այն ամէնը, ինչը հետագայում կոչուեց ցեղասպանութիւն՝ բնորոշում, որը չկարողացաւ լիովին արտայայտել տեղի ունեցածը: Մարդկային պատմութեան մէջ լինում են ողբերգութիւններ, որոնց հանդէպ բաներն անգամ անգոր են դառնում: Կոտորածներից յետոյ Հրանտ Հրահանն ապաստանել էր նախ Քլոթաճիա, ապա Էսկիշէհր քաղաքներում, ուր ամէն օր բոնի մահճակականացուած որբեր էին հաւաքուում ու աղօթքի պէս կրկնում միայն մի նախադասութիւն. «Ես հայ եմ»: Գրողը ուսուցիչ դարձաւ: Նա մայրենի լեզու էր սովորեցնում նրանց, իսկ գիշերներն անքուն տքնանքով դրի առնում որբերի պատմութիւնները:


Տարագիրների մի վտիտ քարաւանով Հրանտ Հրահանը Բուլղարիա հասաւ: Նա մասնակցում էր առաջին համաշխարհային պատերազմի ստեղծմանը, իսկ գիշերները թղթին յանձնում տեսածը, զգացածը, ապրածը: Չարմանալի է, թուզթր դիմանում էր: Այդ պէս ծնուեցին, լոյս տեսան նրա «Հերոսի մը նամակահին», «Համբուրէ գիս», «Հրաշագործ միութիւն», «Խղճի խայթեր» գրքերը: Արեւմտահայ գրողը դարձաւ սփիւռքահայ գրող: Նա շատ բան արեց պոպոզի-

վահայ դադութի համար, սակայն հայեացքը դէպի Սովետական Հայաստանն էր ևւ երբ ներգաղթն սկսուեց, առաջին քարաւանով հայրենիք եկաւ: Միշտ կրկնում էր, որ դա իր կեանքի ամենայնարժան իրողարձութիւնն է եղել: Այո՛, հայրենիք վերադառնալը երջանկութիւնն է, դա հաւանարար հայ մարդուն տրուած ամենամեծ երջանկութիւնն է, բայց քիչ չէին նաև դժուարութիւնները: Գրողը, որը կէս դար արդէն խօսել, մտածել, գրել էր արևմտահայերէն, ճակատագրի՛րբումով պիտի սկսէր արևելահայերէն ստեղծագործել: Հրանտ Հրահանը յաղթահարեց նաև այդ դժուարութիւնը: Սփիւռքահայ գրող էր, դարձաւ սովետահայ գրող:

Նա, ով տեսել ու ապրել է մեր դարի ամենադաժան ոճրագործութիւնը, բնական է, չի կարող գրել ուրիշ բանի մասին: «Իմ կեանքի վէպը» երկհատոր գիրքը, «Արցունք եւ ժպիտ», «Բալկանների լանջերում», «Խօսում եմ անմահները»՝ հայրենիքում հրատարակուած բոլոր գրքերը 1915 թուականի ևւ դրան յաջորդող իրողարձութիւնների մասին են: Հրանտ Հրահանը համեստ անձնաւորութիւն էր, իր արածը չնչին էր համարում այն ամէնի դիմաց, ինչ աուել էր իրեն հայրենիքը: Նրա համար հայրենիքում ապրելը ինքնին մեծ երջանկութիւն էր, այդ զղացողութիւնը նրան չլքեց մինչև կեանքի վերջին ակնթարթը: Գժամեայ գրողը, նախօրօք պատրաստած դամբանականում, որ խնդրել էր կարգալ իրեն հողին յաճնելու ժամանակ, միայն մի ցանկութիւն է յայտնել.

Թող հայրենիքս անսասան մնայ
Ու յաւերժ՝ անմահ... («Գրական թերթ», 1988, թիւ 17):

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ



ՀՐԱԶԵԱՅ ՂԱՓՂԱՆԵԱՆ

Բեմադրիչ, թատերագիր և թարգմանի: Հրաշ-
այ Ղափրանեան ծնած է 14 Նոյեմբեր 1923ին, Ջա-
լալջղլու (այժմ՝ Ստեփանաւան) շրջանի Գյառոցյան

գիւղը: 1942-46 կը ծառայէ խորհրդային բանակին
մէջ: 1953-57 կը գործէ Երևանի Պատանի Հանգի-
սատեան թատրոնին մէջ, նախ՝ իբր գերասան, ապա՝
իբրև բեմադրիչ: 1957-60 կը գործէ Երևանի Գ.
Սունդուկեանի անուան թատրոնին մէջ՝ իբրև բե-
մադրիչ, ապա՝ 1960-61 կը գասնայ Պատանի Հան-
գիսատեան թատրոնի անօրէն և զխաւոր բեմադ-
րիչ, 1961-64՝ Այ. Սպենդիարեանի անուան օֆե-
րայի և պալատի պետական ակադեմիական թատ-
րոնի զխաւոր բեմադրիչ, իսկ 1964-68՝ Գ. Սուն-
դուկեանի անուան թատրոնի բեմադրիչ:

1968-73 կը վարէ Երևանի Դրամատիկական
թատրոնի գեղարուեստական ղեկավարի պաշտօնը,
1968էն սկսեալ՝ Հայկական թատերական Ընկե-
րութեան նախագահութիւնը, 1973-79՝ Գ. Սուն-
դուկեանի անուան թատրոնի անօրէնի, իսկ
1979-85՝ Դրամատիկական թատրոնի գեղարուես-
տական ղեկավարի պաշտօնները, զորս կը վարէ
մինչև իր մահը՝ 1988:

35ամեայ իր թատերական գործունէութեան ըն-
թացքին, Հր. Ղափրանեան կը բեմադրէ բազմաթիւ
թատերադրանքներու գործեր, հայրենի և խորհրդա-
յին դանազան թատերաստիներու բեմերուն վրայ:
Նաև՝ բեմ կը հանէ իր թատերախաղերը, ինչպէս՝
«Նիւրնրուրգեան վերջաբան» (Նեղինակակից՝
Վաղդէն Մնացականեան), «Ոսկէ դղեակի բնա-
կիչները», «Մարդ, որ ուզում էր Աստուած դատ-
եալ» (Նեղինակակից՝ Գ. Աղարափ), «Պատուաւոր
փեսացուն», և այլն:

Հր. Ղափրանեանի թատերախաղերն ու մանրակ
կը գանձեն թատերախաղերու ժողովածուներու մէջ,
իսկ 1981ին կը հրատարակ «Ռեժիսոր. ներկայա-
ցում, հանդիսատես» հատորը:

ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ինչպիսի՞ն է վիճակն այժմ: Ես յոտեանս չեմ և ընտ հանդում չունեմ
թերազնահաակու ևղածը, արուածը, ստեղծուածը: Հասումները արուեստի
մարդում էլ մեծ են, յորջ և հանրօրէն ճանաչուած: Ու հենց նուածուած
բարձրունքն էլ հնարաւորութիւն և տախթ է ապիս առաջ, հեռուն նայելու և
նկատելու այն տարածութիւնը, որ ղեռ պիտի անցնենք ցանկալիին, իսկակա-
նին հասնելու, մեր արուեստը դարաշրջանի բարդութեանն ու վեհութեանը
համազօր դարձնելու համար:

Ներկայիս իրավիճակը սթափ դիտելիս նկատում ես հենց չափանիշների
իջնաման տխուր հետևանքները, որոնց մասին բարձրաձայն խօսելը աներկ-
բայ անհրաժեշտութիւն է, քաղաքացիական պարտք, ղեղարուեստական նոր
բարոյականութեան պահանջ:

Չափանիշները, գանազան օրյեկտիւ ու սուրյեկտիւ պատճառներով,
աւելի յաճախ, այսպէս կոչուած, կորիկտիւ անտարրերու թեան ու հանդուրժո-

զականութեան հետևանքով, իջել էին այնքան, որ, օրինակ, թատրոնում դրե-
թէ ջնջուել էին սահմանները, ասե՛նք, դրամային ու մելոդրամային, կոմե-
դիայի ու գուելտախաղի, ծիծաղի ու հրոհրոցի միջև: Եւ թատրոններն էլ
հանդիսատեսի ետևից էին գնում, փոխանակ առջևից քայլելու, նրան ղէպի
բարձրը, վեհը տանելու:

Իրօք, քիչ չեն այժմ ներկայացումները, որոնք դիտելիս մարդ չի բարձ-
րանում, մաքրում, ազնուանում (որ ճշմարիտ արուեստի կոչումն է ու ան-
դհահատելի արժանիքը), այլ ստես իջնում է, դառնում «կենցաղային» մարդ՝
պարզուստի ու ծանծաղ բնկալումներով, սահմանափակ, նեղըրկ պատկերու-
ցումներով:

Այո՛, բարդ, հակասական և խորախորհուրդ է մեր ժամանակը, մեր
կեանքը, և այդ ժամանակի, այդ իրականութեան արտացոլումը արուեստում
նոյնքան բարձր ու խորունկ պիտի լինի:

Բայց մի ճշտում. բարձր, մեծիմաստ անյարիր չէ պարզութեանը,
մատչելիութեանը, տպաւորչութեանը, անմիջական ընկալման կատարելու-
թեանը: Բայց՝ ճշմարիտ պարզութեանը, ճշմարիտ մատչելիութեանը: Իսկ
մենք յաճախ տեսնում ենք այդ հասկացութիւնների կամայ թէ ակամայ նեն-
դափոխում: Պարզ է համարում պրիմիտիւ, դիւրամարտը, էժանաղինը, իսկ
բարդ՝ արհեստական խճողումը, տեխնիցիզմը, անմիտ մահահարանքը, մո-
ղայիկ ծամածուանքը, աղմուկը: Եւ ի հարկէ, բանը ժանրերը չեն. ժանրը կամ
տեսակը ինքնին չի կարող բարձր կամ ցածրի շափանիչ լինել: Ասե՛նք, մի լաւ
երգը աւելի արժէ, քան մի ամբողջ վատ օպերան կամ սիմֆոնիան, ուրախ ու
իմաստալից մի կաաակերգութիւնը շատ աւելի դահահատելի է յաւակնոտ, բայց
անիմաստ ու հնարոյր որոշ «դրամաներից»: Ժանրով, տեսակով չի կարելի քո-
ղարկուել, այնպէս, ինչպէս որ անկարելի է գործի փշութիւնը, անիմաստու-
թիւնը ծածկել մողայիկ պաճուճանքով, յաջող կամ անյաջող նմանակումով:
Իրողութիւնը վաղ թէ ոչ պարզում է: Յաւօք, հանդիսականի, ու նկնդրի,
արուեստի նման ղեղձումներով խարուող շատերի, յատկապէս երիտասար-
դութեան ընկալումների ու ճաչակների, ղեղարուեստական բնտելութիւն-
ների վրայ բնաւ էլ ոչ վաղանցուկ հետք թողնելուց յետոյ:


Չափանիշները պէտք է բարձրացնել այնքան, որ այսուհետև մերժուի
նման պրակտիկան, արուեստի իւրաքանչիւր օճախ, իւրաքանչիւր արուես-
տագէտ իր կոչումը տեսնի հանդիսականին, ու նկնդրին ճշմարիտ, վե՛հ գոր-
ծերով ղէպի վեհը, բարձրը, գեղեցիկը առաջնորդելու մէջ և ոչ թէ նրան հա-
ճոյանալու, էժան-դիւրընկալ կամ խարու սիկ յօրինուածներով հրապուրելու
մէջ:

Չափանիշները պէտք է բարձրացնել այնքան, որ հանդիսականը,
ու նկնդիրն ինքը պատասխանատուութիւն պայ կենտրոնանալ, մտածել,
ջանք թափել ստեղծագործութեան իմաստն աւ գեղեցկութիւնը լիովին բմ-
բոշխնելու, հեղինակի նուիրական պաղափարներով ու պայացողութիւններով
համակուելու համար:

Վերջապէս, բարձր չափանիշներով պիտի մօտենայ հենց այդ հանդիսա-
կանի ղեղարուեստական բնկալու նակութեանը՝ շթերազնահատելով և չղե-
բազնահատելով այն:

Այլ կերպ ասած, մեր չափը չափազանցը չպէտք է լինի, այլ չափի ղզա-
ցումը, ղեղարուեստական տակտը: Եւ արուեստում քաղաքացի լինելու կամ-
բը: («Սովետական արուեստ», 1986, թիւ 2):

ՀՐԱԶԵԱՅ ՂԱՓՂԱՆԵԱՆ



ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բանաստեղծ, թատերագիր և թարգմանիչ Միքայել Յարութիւնեան ծնած է 27 Հոկտեմբեր 1918ին, Շուշի քաղաքը: 1941ին կ'աւարտէ Երևանի համալսարանի բանասիրական ամպիոնի հայոց լեզուի և գրականութեան բաժինը: 1942-44 կը վարէ Ազրբեջանի գրողներու միութեան Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի պատասխանատու քորտուլարի պաշտօնը: 1944-46 իրրև գրական աշխատող կը պաշտօնավարէ «Սովետական Ղարաբաղ» օրաթերթին, ապա՝ 1946-50՝ Լեռնականի «Բանուոր» թերթի մէջ: 1951-70 կը պաշտօնավարէ «Հայաստան» հրատարակչութեան մէջ՝ իրրև աւագ խմբագիր, 1970-71՝ ՀՍՍՀ մամուլի ոլետական կոմիտէի գրապայտահին մէջ՝ իրրև գիտքարտուղար, իսկ 1972-83 մաս կը կազմէ «Հայկական սովետական հանրագիտարան»ի խմբագրութեան՝ իրրև գիտխմբագիր:

1940էն սկսեալ՝ Միքայել Յարութիւնեան հրատարակած է աւելի քան 20 բանաստեղծական հատորներ և գրքոյկներ, որոնց յլխաւորներն են՝ «Լեռնագրիւր», «Պատիւ», «Օրեր եւ խոհեր», «Ղարաբաղեան նուագներ», «Հաւատամք» և «Մինչեւ ալստեղ»: Անգրկուկասի թատրոններու բեմերուն վրայ բեմադրուած են իր «Նրկու հանգիպում» և «Ժամանակի ստուգում» թատերախաղերը:

ՃԱՔ ՔԱՐ

1. Լեռը փլուել է, բայց չի կորցնու՝
Գրկած պահում է թափուած քարերը.
— Ճաք քար,— նայում են, ասում են, անցնում,
Ոչ ոք չի հարցնում՝
Ինչո՞ւ կամ ինչպէ՞ս,
Թափուած քարերը
Ասես գրքեր են՝
Դեռ չկարդացուած, չբացուած գրքեր,
Կարդա՛, իմացիր
Եւ լերան նման ցաւին դիմացիր:
2. Անտառն ուզում է նաք քարը ծածկել,
Լերան վերքերը սաղարթով փակել.
Վիրակապել է անտառը ուզում,
Եւ սակայն ի գուր.
Կանաչ հեղեղը գալիս է, հասնում
Եւ նաք քարի մօտ կանգնում է անգօր,
Հող չկայ արդէն, որ ծլարձակի,
Ի՞նչ արած, պիտի որ քարը ծաղկի...

3. Լերան տխրութիւն,
Ես ինչո՞վ պիտի քեզ մխիթարեմ.
Գիշեր ու ցերեկ նայում ես տրտում,
Եւ ոչ թէ քարեր՝
Թուչնաձագեր են, որ բնից ընկել
Եւ չեն կարող ետ բոյնը գնալ:
Ժայռածերպերից արցունք է հոսում,
Ամէն քար ասես անգին մի մասունք,
Սրբազան մասունք,
Շուրջը լուկեաց անդունդներ, վիհեր,
Հովերն անտարբեր գալիս են, գնում,
Լեռը մնում է ինքն իր ցաւի հետ:
Կրնում է, լինում,
Այսքան լեռներից մէկն էլ թող նաք տայ,
Լեռները էլի լեռներ են մնում:

ԱՐԱՔՍԻ ՀԵՏ

Արաքսի հետ, Արաքսի հետ,
Արաքսի հետ գրուցելով,
Դարերի գիրքն հազարաթերթ
Մի վայրկեանում ընթերցելով,

Մերթ բացուելով Արաքսի պէս,
Մերթ նեղուելով խոր ձորերում,
Գնում էի ես էլ կարծես
Արաքսի պէս դէպի հեռուն:

Խօսում էի Արաքսի հետ,
Եւ Արաքսն էր հոսում անձայն,
Տեսնում էի քանի լեզերնդ,
Քանի մարած շանթ ու կայծակ...

Եւ Տղմուտն էր արնակարմիր
Մեր պատմութեան սրտից ծորում,
Գալիս զարկում քարը քարին,
Արաքսի հետ լուռ մտորում...

Դարերի գիրքն հազարաթերթ
Մի վայրկեանում ընթերցելով,
Գնում էի Արաքսի հետ,
Արաքսի հետ գրուցելով...

ԴԱՇՈՅՆ

Քեզնից դողում էր արնախում արքան,
Բայց զինուեց քեզնով, ու դարձար չարիք,
Նա կտրել ուզեց լեզուն հանճարի
Եւ դահիճն ահեղ այ շորեր հագաւ:

Այնքան յղփացաւ տիրակալը ժանտ,
Քեզնով զարդարեց գորգերն իր շքեղ,
Արդարութիւնը գլխատում էր դեռ
Ու դեռ ցնծում էր դահիճը դաժան:

Դեռ խաչածեւուած աշխարհի գլխին
Երկու դաշոյն կայ՝ չարի ու բարու:
Մէկը սփռում է աւեր ու արիւն,
Միւսն արարում փրկութեան ուղին:

Բանաստեղծութիւն, դաշոյն ես եւ դու,
Զարիքը պիտի ընկնի քո առաջ:
Պատեան չես մտնի սուրբ գործը չարած՝
Այս մեծ, այս փրկիչ արդարամարտում:—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՒ ԵՍ

Դու ուժեղ էիր, ես՝ միայն արդար,
Ես գորեղ՝ թէկուզ ես գոհ, դու դահիճ...
Ծանր ոտքերով պարտէզն իմ մտար,
Եւ ծաղիկներս կուչ եկան ահից:

Դու ուժեղ էիր, ես՝ միայն արդար,
Գլխատում էիր, ես՝ կրկին ծաղկում,
Սպանում էիր, ես՝ յաւերժ կենդան,
Ես անհատների արմատ ու ակունք:

Եւ հիմա իմն են հորիզոնները,
Ես՝ տնօրէնը ամենաարդար,
Կենդանացել են իմ մէջ գոհերը,
Ակունքս՝ ծով է, արմատս՝ անտառ...

ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՅՈՎԱԿԻՓ ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍԻՄԷՈՆ ՅԱԿՈՒԵԱՆԻՆ



ՄԱՆ.— Այս նամակը պահուում է Վիեննայի Միթթարեանների զիւտ-
նում: Հրատարակութեան թոյլտուութեան համար շնորհակալ եմ Աբրահայր
Գերպայժաո Գրիգորիս Մանեանին եւ գիւանապետ Հ. Օգոստինոս Սեքուլ-
եանին:

Սիմ. Յակոբեանը եղել է նախկին դաշնակցական, «Արեգ» հանդէսի
հրատարակող-խմբագիրը:

Այս նամակը կարելի է մեր պատմութեան համար:

ՄԱՐՏԻՐՈՑ ՄԻՆԱՍԵԱՆ
ԺՆԵՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թաւրիզ, 29/VI, (19)22 թ.

Սիրելի Սիմոն! Վազուց ու գում էի քեզ գրել, սակայն չը գիտէի ո՞ւր ես.
վերջերս միայն լուր եկաւ, որ Վէննա՞ւ ես, որ հրատարակում ես «Արեգ»² թեր-
թը, որ կուսակցութիւնից հեռացել ես. պատահաբար տեսայ եւ քո աշխատու-
թիւնը նւիրած Դուրեանին, կարողացի միայն յառաջարկել: Ոչինչ մեզ
յայտնի չէ, գոնէ ինձ, ի՞նչ պայմաններում, ի՞նչ պատճառներով հեռացել ես
կուսակցութիւնից³, եւ նոյն իսկ դա փաստ է, թէ սոսկ մի անհիմն լուր. չը գի-
տեմ ի՞նչ վիճակում ես: Յուսով եմ, այս տողերս ստանալուց, մանրամասն կը
գրես քո մասին:

Ի՞նչ վերաբերում է ինձ, շատ հեռուն կը տանէր, եթէ մանրամասն գրէի
վերջին երեք տարւոյ մեր գլխով անցածները. այնուամենայնիւ համառօտակի-
կը գրեմ. դա մի ամբողջ ողբերգութիւն է, ո՛չ միայն իր արտաքին պատահաբ-
ներով, այլ եւ հոգեկան ապրումներով... Կեանքի ու մահուան պայքարի մի
չարան, տնհատական զգացմունքների, յուղիչ փորձութիւնների մի անվերջ
պատմութիւն, հասարակական-քաղաքական քաօսական վիճակից բղրած
հայեացքների սուր բաղխումներ, բարոյական լքումն՝ ահա՛ այդ ողբերգու-

Թեան բովանդակութիւնը մի երկու խօսքով, բայց դառնանք փաստերին, իրադարձութիւններին:

Քեզ հետ բաժանեցինք Եկատերինոգարում՝ 1918 թ., կարծեմ, նոյեմբերին թէ ղեկտեմբերին: Ամբողջ տարի աշխատեցի զաղթակ. գործում, թէ իրբեւ «Իանիական կարմիր խաչի» ներկայացուցիչ, թէ Ռոսսոպի Հայկ. Կ-ի⁵ (յետոյ ուս. կարմիր խաչի անւան աակ) ներկայացուցիչ, իսկ քիչ յետոյ էլ Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչ: Գործը շատ յաջող գնաց մինչեւ 19թ. աշունը. բոլշեւիկները յաջողութիւնները, 'իենիկինի'⁶ նահանջը, դրամի կատարեալ սպառումը, ստիպեց լիկվիդացիայի⁷ ենթարկել եւ հետանալ. ո՞ւր. ի հարկէ, դէպի ազաա Հայաստան: Չէ՞ որ մեր ամբողջ կեանքի բնթացքում գտտանցել էինք տեսնել մի օր Հայաստանը ազատ, նւիրել նրան, գործել նրա համար, զոհել նրա համար... Ահադին դժուարութիւններ յաղթահարելով, ճանապարհաց արինք Նովորոսիյսկից⁸ դէպի Բաթում (հաղորդակցութիւնը կտրւած էր), երեք նաւ վարձեցինք եւ Նովորոսիյսկում կուտակւած զաղթականներին ու փախսականներին փոխադրեցինք Բաթում, ինչք էլ իմ աշխատակիցներով ու ընտանիքով հասանք Թիֆլիս, ապա Երեւան: Այստեղ ընտրեցի Երեւանի գաւառի, գեմատոյական⁹ ինքնավարութեան նախագահ եւ նւիրեցի ամբողջ Թափով նոր գործի կազմակերպութեան... Սիրում եմ նոր ու անկախ գործունէութիւնը... Մարդուս հոգեկան բոլոր կարողութիւնները յարում են ստեղծագործական աշխատանքի մէջ. միաժամանակ որպիսի՝ խոր բարոյական բաւարարութիւն եւ զգում, երբ տեսնում ես, որ քո գործ դրած ջանքերը տալիս են իրա¹⁰ պտուղները, պսակում յաջողութեամբ... Իմ կեանքի երջանիկ շրջաններից, թէեւ ցաւ օք սրտի շատ կարճատեւ, ընդամենը 9 ամիս, — մէկն էր այդ ժամանակամիջոցը... Մանր էր աշխատանքը, ո՛չ միայն շնորհիւ¹¹ երկրի ծայրաստիճան քայքայման, միջոցների պակասութեան, այլ եւ այն պատճառով, որ մեր կառավարութիւնը անհաշա աչքով էր նայում տեղական ինքնավարութիւնների վրայ եւ ձգտում էր իշխանութեան կենտրոնացման... Ինչ եւ է՝ պայքարում էինք եւ աշխատում... Ծուտով վրայ հասան սեւ օրեր՝ Ղարսի¹² ու Ալէքսանդրապոլի¹³ ողբերգական անկումը, ղեկտեմբերի¹⁴ յեղաշրջումը, բոլշեւիկների իշխանութեան հաստատումը Հայաստանում...

Այդ ութ ամսայ ժամանակամիջոցը, պիտի խոստովանեմ միայն քեզ, սոսկ իրբեւ անձնական բարեկամի, հիասթափումների մի շրջան էր: Չէի ճանաչում ու աչքերիս չէի հաւատում, թէ որչափ արագօրէն մեր լաւագոյն բնկերները բարոյապէս լքուում են... Չկար մեր «սուրբ» կուսակցութիւնը. կային սոսկ անհատներ, որոնք տարւած են սոսկ մի հոգսով՝ ստանալ լաւ պաշտօններ եւ ապահովել իրենց նիւթապէս... Կային, ի հարկէ լաւ բացատրութիւններ, բայց մթնոլորտը ընդհարապէս այդպէս էր... Եւ ես արդէն օգոստոսին որոշեցի հեռանալ Երեւանից Պարսկաստան, եղբորս մօտ այն ազօտ յոյսով, որ գուցէ կարողանամ յետոյ գցել ինձ արտասահման... Բայց պատմական տխուր ու ծանր դէպքերը արգելք հանդիսացան, եւ նորից վիճակեց ճաշակել բոլշեւիկեան ուժի մը... ճիշտ է, ես այլ հայեացք ունէի դէպի Պորհր. իշխանութիւնը, քան իմ բնկերների մեծամասնութիւնը, եւ ես չէի համարում զա մի դժբախտութիւն, մանաւանդ, որ համոզւած էի, որ բոլշեւիկներին կը յոջողի յետ վերցնել տաճիկներից՝ Ղարսն, Արտասան եւ Նախիջևեան, ապահովել ժողովրդի Ֆիզիկական գոյութիւնը թէ արտաքին թշնամիներից եւ թէ սովից, բարոքելով նրա տնտեսական վիճակը Ռոսսաստանի օժանդակութեամբ... Սակայն յետագայ փաստերը ապացուցեցին, որ ես եւ ինձ նման փոքրաթիւ մտածողները չարաչար սխալւած ենք... Մի ամիս շանցած, սկսեց կարմիր տեռորը¹⁵, բացի այդ ո՛չ մի շինարար աշխատանք, ո՛չ մի օգնութիւն Ռոսսաստանից, ընդհակառակը՝ եղած պետական պաշարի ու հարստութեան մի չը

Դեպի, 29/VI, 22թ

Արթուր Արմաւ! Հաշտ պատերազմի հոգի
անկողն չե գտնուի մեր-Սոցիալ Դեմոկրատ
հար ի-հար, այդ վիճակիս, որ կոտորածներ
„Գերի-Գերի“ թիրք, որ հասակցութեանց կրկնուի
պատմութեան քրեանց եւ ինչ կոտորածներ
ձեռքով յարձակման, խոչնդով յարձակման
թանգ: Կշիւն ինչ յայտնի չէ, ցարժ ինչ,
ինչ պայմաններում, ինչ պայմաններում իր
յիւ իս հասակցութեանց, եւ ինչ իմ զա
խառն, ինչ սակ մի անկողն լո-թ-ՆԾ
գտնուի ինչ վիճակում իս: Դաւանի, այլ
դաւան պատմական, խառնուած իս ցոյց
իս Դաւան:
Ինչ վիճակներում ինչ, զա կրկնուի
դաւան, ինչ խառնուած ցոյց լո-թ-ՆԾ
պայման մի գլխով անկողններում. պայմաններ
ճանապարհի իս ցոյց. Կ-ս մի անկողն
նշի իս Կ-ս ինչ, ոչ միայն իս պայմաններ

Յ. Գ. Լաւ է՛ եւ աւելի ապահով, եթէ գրեւ Առաջնորդարանի Հասցէով՝ (Փրանսերէն. Մ.Մ.) Հայկական առաջնորդարան, յանձնելու ինձ:

Յ. Գ. Նամակս շատ ուշացայ, որովհետեւ Հասցէդ միայն այժմ կարողացայ գտնել: Ձերմ ողջոյններով՝ գրիւր:

Քո Յովսէփ

3/VIII22 թ.

Ծանօթագրութիւններ

1. Վէճնա = Վիեննա (Ա. ստրիպոյմ):
2. «Արեգ», գեղարուեստական, գրականագիտական եւ քաղաքական ամսագիր ու երկարաթափերթ, որ 1922-1924 թթ. Վիեննայում-Բեռլինում-Վիեննայում հրատարակել է Սիմէոն Յակոբեանը:
3. Կուսակցութիւնից. Հ.Յ. Գաղանկցութիւնից:
4. Եկատերիմոզար. այժմեան Կրասնոզարի նախկին անունը, մինչ 1920:
5. Կ-ի = Կոմիտէի:
6. Գեներալի Անտոն Իվանովիչ, 1872-1947 (ԱՄՆ), 1918-1920 թթ. ուսական քաղաքացիական պատերազմում հակայեղափոխական պիւնում ուժերի հրամանատարներից. 1920-ի ապրիլի 4-ին Լրիմում հրամանատարութիւնը յանձնել է Պ. Վրանգելին ու մեկնել Կ. Պոլիս:
7. Լիկվիդացիա. ոուս. բառ՝ «լուծարք»:
8. Նովորոսիյսկ. Կրասնոզարում Սեւ ծովի ափին ուսական նաւահանգիստ:
9. Ձեմնովայական. ոուս. գեմնովա բառից, որ նշանակում էր «տեղական ինքնավարութիւն», որ դադարեցրեց սովետական իշխանութիւնը:
10. Իրա. «իր», բարբառային, հնացած:
11. Շնորհիւ. «պատճառով», որ միայն լաւ բաների համար է:
12. Ղարս. Արևմտահայաստանի Ղարս քաղաքի անուան թուրքական հնչում: 1920-ի հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը վերջնականապէս գրաւեց այս քաղաքը, եւ 1921-ի Կարսի պայմանագրով այն անցաւ թուրքիային:
13. Ալեքսանդրապոլ. Սոփ. Հայաստանի այժմեան Լեւինական քաղաքի նախկին անունը մինչև 1924 թ. յունուարը: 1920-ի զեկտեմբերի 2-ին այստեղ պայմանագիր է կնքուել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան պատուիրակութեան եւ թուրքիայի միջև, որ 1921-ին անվաւեր է համարուել, որովհետեւ այդ տարու այ զեկտեմբերի 2-ին արդէն խորհրդային կարգեր էին հաստատուել Հայաստանում, եւ այդ հայկական պատուիրակութիւնը ոչ մի լիազօրութիւն չուներ:
14. Գեկտեմբերի յեղաշրջումը. 1920 թ. զեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգեր էին հաստատուել:
15. Տնօր. ոուս. բառ՝ «հարեկում»:
16. Նարկոմպրոտ. «պարենաւորման ժողովրդական վարչութիւն» նշանակող ոուսերէն բառերի սկզբնատառերից կազմուած յայաւում:
17. Փետրուարի 18-ի ապստամբութիւն. 1921 թ. փետրուարին զաշնակցականների պիւստուրած հակախորհրդային ապստամբութիւն Հայաստանում: Ըստ սովետահայ պատմագիրների՝ զրդապատճառներից մէկը եղել է այն, որ «Ռախտելով ուղղական կոմիտէի սկզբու նքները, շատ զէպրում տեղական աշխատողները վերցնում էին ոչ միայն աշխատաւոր գիւղացիութեան պարենային աւելցուկը, այլեւ ամբողջ պաշարը, որը զժգոհութիւն էր առաջ բերում» (Հայ ժողովրդի պատմութիւն, հատ. 1, Երևան, 1967, էջ 137): «Ռոստարարները» 1921-ի փետրուարի 18-ին գրաւում են Երևանը:
18. Ապրիլի 2-ի յեղաշրջում. 1921-ի ապրիլի 2-ից սկսում է զաշնակցական «աւանտիբայի» պարտութիւնը եւ փախուստը Ջանգեզուր:
19. Որ. = «որով»:
20. Աւիս՝:
21. Րեմեզատ. ոուս. բառ՝ «զրթող, ուրացող»:

22. Աքարբեգեան Գէորգ, 1892-1925, 1921-ի փետրուարին «Կովկասեան ուղղափառութեամբ Սովետական Ռուսաստանի արտակարգ յանձնաժողովի (տիրահոշակ. Մ.Մ.) լիազօր Գ. Աթարբեգեանը, որի նախաձեռնութեամբ յայտնարբերում եւ ոչնչացում են զաշնակցականների միջաք զաղտնի կազմակերպութիւններ, ձերբակալում են զաշնակցական ակտիւ գործիչները» (Հայ ժող. պատմք. հատ. 1, Եր., 1967, էջ 139):
23. Ապրիլի 2-ից (1921 թ.) Կարմիր բանակի զօրամասեր գրաւում են Երևանը զաշնակցականներից:
24. Ֆրոնտ. ոուս. բառ՝ «ուղղափառ»:
25. Ալագեագ. Արագած լեռան թուրքական անունը:
26. Վերստ. երկայնութեան ոուս. հին չափ՝ 1,067 կիլոմետր:
27. Ասկեար. բնդ հանրապէս «գինու որ» նշանակող թուրք. բառ, յատկապէս «թուրքական գինու որ» (արհամարհական):
28. Ներման մասին որոշում. խորհրդային Հայաստանի Յեղկոմի «Ներման մասին» որոշումը հրապարակուել է 1921-ի ապրիլի 10-ին:
29. Գերուստի. այժմ Գերուսի, ՀՍՍՀ Գորիսի շրջանում փոքրիկ քաղաք:
30. Գիմնագիւ. հնացած ոուս. բառ՝ «հանրակրթական միջնակարգ դպրոց»:
31. Սոցիալ. ոուս. բառ՝ «հասարակական»:
32. Կուլտուրական. «մշակութային», ոուս. կուլտուրա «մշակոյթ» բառից կազմուած ածական:
33. Կրիգիս. ոուս. բառ՝ «ճղնաժամ»: Նկատելի է այս նամակից անգամ, որ յեղափոխութիւնից առաջ էլ ոուսերէն օտար բառեր առատ են եղել արևելահայերէնում:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ



Վերջապէս, անհրաժեշտ է պատմական օրյակ-տիւնութեան զիրենքից՝ առանց միտումնաւոր կերպով նսեմացնելու կամ արհեստականօրէն գունագարդելու, վերագնահատել եւ պատմութեան մէջ տեղ սայ նաեւ այն գրողներին, որոնք մինչեւ այժմ իրենց քաղաքական զիրենքիցի պատմառով արհեստականօրէն դուրս են հանել գրական ընթացքի ֆննտրութիւնից:

... Ներկայացնել հայ գրականութիւնը իր «Բնաշխարհիկ» եւ «տարաշխարհիկ» թիւերով միասին, «մէկ յարկի տակ», սա մի խնդիր է, որն իրականացուելու է առաջին անգամ:

Ճիշտ է, վերջին տասնամեակում հայ գրականութեան «Բարտեզը» ղնալով աւելի ու աւելի ցրիւ է դառնում, գրական ուժեր եւ հրատարակութիւններ են երեւան գալիս աշխարհի նորաւոր ծայրերում: Սակայն դրա հետ միասին շատ ցիւրկայնօրէն, քան նախորդ փուլում, քաղաքացիութիւն է ստանում «մէկ ազգ-մէկ գրականութիւն» սկզբունքը:

Ազգային նկարագիրն ու լեզուն հայկական Սփիւռքում կարող են պահպանուել այնքան ժամանակ, քան իրենց մարդիկ իրենց գիտակցում են իրեն: Կայ ժողովրդի ամբողջական մի մասնիկ՝ զէք հոգեբանօրէն կապուած մայր հայրենիքին հետ:

Արեւմտահայերէնը կը պահպանուի եւ պէ՛տք է պահպանուի իբրեւ ո՛չ միայն խօսակցական, այլեւ՝ գրականութեան լեզու: Դա հայ ժողովրդի եւ նրա գրականութեան պատմական իրաւաստութիւնն է, նաեւ հարստութիւնը, որից չպէտք է հրաժարուել:

Լատիները կը լինէր այն, որ Հայաստանի եւ Սփիւռքի հեղինակաւոր եւ ի հարկէ, լայն լիազօրութիւններով օժտուած ներկայացուցիչները համատեղ մշակելու միասնական ուղղալու-թեան սկզբունքներ: Դրանք պէտք է կառուցուեն փոխզիջման եւ մերձեցման հիմունքով, ընդունելի ու պարտադիր լինեն բովանդակ հայութեան համար:

ԷԴՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ

Հետագայ ԼՂերուն տրուած սկստակներու հղուարդ Զրբաշեանի յօգուածը սաացած էնք աւելի քան երեք ամիս առաջ, անցեալ տարուան Նոյեմբերի կէսերուն, բայց մեր կամքէն բոլորովին անկասկա պատճառներով միայն ներկայ թիւով կարելի եղաւ հաղորդել յայն ընթերցողին:

Զրբաշեան կը խօսի Հայ գրականութեան բոլոր ժամանակներուն ու բոլոր հասանքներուն պատմութիւնը համազօրելու կոչուած երեք հատորնոց ձեռնարկի մը մասին, որ, բոտ պարզուած անկողմնակալ ոգիին, պիտի բլլայ եզակի գործ մը:

Մեզի կը մնայ ողջունել այս ձեռնարկը եւ ստիճիկ պատճեն համարելով անցած մը եւս ընդգծել, որ Հայ գրականութիւնը Հայ ժողովուրդին պէս մէկ է ու միասնական, եւ արեւելահայ ու արեւմտահայ անուանու մները քաղաքական մեր բախտին հետեւանք վերնադիրներ եղած են աւելի, քան հոգեբանական տարբեր շերտաւորումներու բերում:

Արտաքին խոչընդոտներու ու անոնց ծոցին մէջ շողախումբ անհանդուրժողութիւնը նիւթական միջոցներու, ժամանակի ու կորովի ահագին մոխուր արժեք մեզի մօտիկ անցեալին, այլ երևոյթները ցայց կու տան, որ մութ ապրիլները կկա՞ծ ու միջին ծրագիրներու միտող ու բացումները, անտեսու մներն ու ստիպողական կուրու թիւները վճռական զեր պիտի չկատարեն այլեւս մեր շարժանիքներուն մէջ:

Այդ ոգիին շօշափելի մէկ գրեւորումն է հղուարդ Զրբաշեանի յօգուածը, զոր ջերմօրէն կը յանձնարարենք ընթերցողին, հակառակ անոր, որ ցարդ երևած խորթութիւնները պատճառարանող բաժիններուն մասին լուրջ առարկութիւններ չեն պակասիր մեզի...

ԷԴՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ

20ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՒՐԱՅԱՏԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Մարդկութիւնը մօտենում է 20րդ դարի վերջին: Եւս մէկ տասնամեակ, եւ կ'աւարտի մեր բուն, անհանդիստ, մեծ մղումներով ու յոյսերով, հերոսական մաքառումով, բայց նաեւ ողբերգական հակասութիւններով ու՝ կորուսաներով լեցուն դարը: Նրա հետ կ'աւարտի նաեւ մարդկութեան յետ քրիստոնէական պատմութեան երկրորդ հազարամեակը, եւ մենք ոտք կը դնենք նոր՝ երրորդ հազարամեակի նախաշեմին: Յիրաւի մեծ տարեթուեր, որին ականատես կը լինեն այսօր ապրող սերունդներից շատերը: Խորհելով այդ մասին, ակամայից յիշում ես այն կրքոտ տողերը, որոնցով աւելի քան քսան տարի առաջ Պարոյր Սեւակը դիմում էր մեր դարին եւ նրա մարդուն.

Դու՛ քրտաւերորդ եւ, անտարակոյս, յոբելեանական,
Դու՛ հիւլէական,
Կարծես էական
Եւ աւելի քան կարծես բանական,
Բայց նաեւ նոյնքան խելագար դարի
Ո՛վ քաղաքացիդ անգօր ու հօգօր,
Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան անդարման ցաւով...

Մօտեցող դարավերջը մեզ առիթ է տալիս խորհելու նաեւ 20րդ դարում Հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին, հանրադուժարի բերելու հողեւոր մշակոյթի տարրեր ընդաւառների հիմնական արդիւնքները: Մասնաւորապէս, Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի գրականութեան ինստիտուտը արդէն այժմուանից ծրագրում է սկսել եւ մինչեւ դարի վերջը աւարտել մի մեծ աշխատութիւն (Հայ անարար՝ բողոքացած երեք հատորից), որի մէջ պէտք է վերլուծարար ներկայացուի Հարիւր տարուայ ընթացքում Հայ գրականութեան դարդացման համայնապատկերը:

Անհամար խնդիրներ են ծագում այդպիսի մի բարդ, նախկինում իր նմանը չունեցած աշխատութեան բուն իսկ մտայնացման ընթացքում: Եւ ամէնից առաջ այն հարցը, թէ ի՞նչ ազգային իւրայատկութիւն ունի 20րդ դարի Հայ գրականութիւնը, ինչո՞վ է կապուում եւ ինչո՞վ է առանձնանում համաշխարհային գրական ընթացքի մէջ: Ահա այդ հարցին կամ, աւելի ճիշտ, նրա մի քանի կողմերին է նուիրուած ներկայ դեկուցումը:

20րդ դարը Հայ իրականութեան մէջ եւս սկսուեց մեծ յոյսերով եւ ուղա-

նակի արեւմտահայ գրականութեան որոշ երեւոյթներ (յատկապէս այսպէս կոչուած «հեթանոսական ուղղութեան») մասին ասուած մի քանի աննպաստ խօսքերից: Ռեակցիա, որը զգալի չափով շարունակուած է մինչեւ այսօր:

Այս բոլորով հանդերձ, 20րդ դարու մ հայ գրականութեան զարգացման առաջատար միտումներից մէկը պէտք է համարել ոչ թէ նրա երկու հատուածների իրարմէն ու խորթութիւնը, այլ ազգային-զազափարական միասնութեան ձգտումը, որն իր համար ճանապարհ է հարթել հակառակ քաղաքական եւ գեղարուեստական կեանքի բոլոր աննպաստ պայմաններին: Դեռ դարասկզբին հայ գրականութեան լուսավոյն գործիչները այդ միասնութիւնը համարում էին ազգային մշակոյթի զարգացման անհրաժեշտ հիմք ու նախապայման: Յովհ. Թումանեանը մեր գրականութեան երկու ճիւղերի փոխադարձ վատ իմացութիւնը համարում էր «մի անբնական ու աննորմալ երեւոյթ, որը վերացնելու առանձին հոգ պէտք է ունենանք»: Որովհետեւ, շարունակուած էր բանաստեղծը, միմեանց աւելի լուս ճանաչելու շնորհիւ միայն «մեր առջեւ կը բացուի ազգային հարստութեան մի նոր գանձարան, մեր դիմաց կը յառնեն մեզ ծանօթ, բայց աւելի շատ՝ անծանօթ տաղանդաւոր գրողների դէմքեր, եւ մենք աւելի հարուստ, աւելի ուժեղ եւ աւելի հպարտ կը գգանք մեզ...»:

Ազգային գրականութեան ներքին միասնութեան հաստատումն ու ամրապնդումը շատ է մտահոգել նաեւ Աւ. Իսահակեանին, Ե. Չարենցին, Գ. Սեւակին եւ շատ ուրիշ նշանաւոր գրական գործիչներին: 20րդ դարի հայ գրականութեան նախապատրաստող պատմութիւնը պէտք է ցուցադրի հենց այդ միասնութիւնը՝ չանտեսելով, ի հարկէ, ո՛չ զազափարական եւ ոչ էլ գեղարուեստական բնոյթի ներքին տարբերութիւնները, երբեմն եւ հակասութիւնները:

Մեզ թւում է, որ, ելնելով գրական-պատմական իրական ընթացքից, ճիշտ կը լինի այդ պատմութիւնը բաժանել երեք մեծ փուլի, որոնք իրարից բաժանուում են քաղաքական եւ գեղարուեստական զարգացման էական շրջադարձերով:

Նախ, առանձնանում են մեր դարի առաջին երկու տասնամեակները (1901-1920), երբ հայ ժողովրդի եւ նրա գրականութեան զարգացումն ընթանում էր նշուած երկու ճիւղերով՝ հիմնականում Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնների սահմաններում: Դա մեր գրականութեան (ե՛ւ Արեւմտահայ, ե՛ւ Արեւելահայ) ամենարարժք զարգացման շրջաններից մէկն էր, որն առերեւոյթ կարծէք թէ չի համապատասխանում ազգային մասնատուածութեան, եղեռնի ու տնտեսական քայքայման պայմաններին: Բայց այստեղ, մեր խորին համոզմամբ, որեւէ հակասութիւն չկայ: Ազգային գրականութեան, ինչպէս նաեւ արուեստի միւս տեսակների բուռն զարգացումը դարասկզբին ժողովրդին հոգեւոր ու ժերի գերագոյն լարման արդիւնքն էր, ապրելու եւ յարատեւելու կամքի արտայայտութիւն, որը պէտք է ուժ ներշնչէր ժողովրդին՝ ժամանակի արհաւիրքներին դիմագրաւելու համար:

Դարասկզբի հայ գրականութիւնը, որի քննութիւնը կը կազմի ապագայ աշխատութեան առաջին հատորի բովանդակութիւնը, աչքի է ընկնում գեղարուեստական միջոցների ու եղանակների (ուղղութիւնների եւ հոսանքների, ոճեր եւ ժանրեր) աննախադէպ բազմազանութեամբ: Այդ ամէնի գիտական ուսումնասիրութիւնը եւ գնահատականը այսօր մեր գրականագիտութեան կարեւոր եւ անյետաձգելի խնդիրներից է: Մա՛նաւանդ՝ որ գիտական մտքի զարգացման այսօրուայ աստիճանն ու պայմանները մեզ հնարաւորութիւն են տալիս շատ աւելի մերձենալու պատմական ճշմարտութեանը, քան երբեւէ նախկինում:

Վերջենք, օրինակ, հայկական սիմվոլիզմի խնդիրը, որը մինչեւ այժմ բազմակողմանի քննութեան չի ենթարկուել, թէեւ դարասկզբի գրական պրոցեսում նրա նշանակելի տեղն ու դերը պարտաւորեցնում են աւելի լրջօրէն դրադուել նրանով: Այնինչ մինչեւ այժմ մեր գրականագիտական աշխատանքներում հայկական սիմվոլիզմը մեծ մասամբ կա՛մ ամօթխածօրէն լռութեան է մատնուել, կա՛մ փորձեր են արուել մի կերպ «արդարացնելու նրա գոյութիւնը»: Բայց գրականութեան պատմութեան իրական փաստերը թելադրում են այլ կերպ մօտենալ եւ աւելի լայնախոհ հայեացքով քննել սիմվոլիզմի խնդիրը հայ գրականութեան մէջ: Չէ՞ որ սիմվոլիզմի հետ մեծ կամ փոքր չափով եւ տարբեր ուղիներով առընչուել են մեր գրականութեան շատ նշանաւոր դէմքեր՝ Լ. Շանթն ու Աւ. Ահարոնեանը, Միսմանթոն եւ Ինտրան, Մ. Մեծարեւնցը եւ Վ. Տէրեանը, երիտասարդ Չարենցը եւ շատ ուրիշներ: Այս եւ մի շարք ուրիշ գրողների ժառանգութիւնը մենք ճիշտ հասկանալ եւ գնահատել չենք կարող՝ առանց հաշուի առնելու նրանց կապերը սիմվոլիզմի գեղագիտութեան եւ ստեղծագործական սկզբունքների հետ: Եւ այդ ամէնը պէտք է բացայայտել սիմվոլիզմի նկատմամբ նոր, աւելի օրյեկալի եւ արդարացի մօտեցմամբ, որն այժմ հաստատուում է մեր գրականագիտութեան մէջ:

Նոյնը պէտք է ասել դարասկզբի միւս գրական հոսանքների մասին, ինչպէս ռեալիզմն ու ռոմանտիզմը, նատուրալիզմն ու ֆուտուրիզմը, որոնք նոյնպէս ինքնատիպ դրսեւորումներ գտան հայ գրականութեան մէջ: Վերջապէս, անհրաժեշտ է պատմական օրյեկալի ու թեան դիրքերից՝ առանց միտումնաւոր կերպով նսեմացնելու կամ արհեստականօրէն գունազարդելու, վերագնահատել եւ պատմութեան մէջ տեղ տալ նաեւ այն գրողներին, որոնք մինչեւ այժմ իրենց քաղաքական դիրքորոշման պատճառով արհեստականօրէն դուրս են հանուել գրական ընթացքի քննութիւնից: Խօսքը վերաբերում է այսպիսի հեղինակներին, ինչպէս Լ. Շանթը, Ն. Աղրայեանը, Աւ. Ահարոնեանը, Համաստեղը, Մուշեղ Իշխանը եւ ուրիշներ: Դաշնակցական կուսակցութեան հետ նրանց ունեցած առընչութիւնները այսօր այլեւս չեն կարող արգելք լինել ճիշտ գնահատելու նրանց իրական դերը հայ գրականութեան զարգացման մէջ:

Գատմութեան երկրորդ փուլն սկսում է 1920 թուականից ու տևում է մօտ քառասուն տարի՝ մինչեւ 1950ական թթ. վերջը: 1920 թուականը Հայաստանում նոր սովետական իրաւակարգի հաստատման, միաժամանակ նաեւ հայ գրականութեան նոր փուլի սկզբնաւորման տարեթիւն է: Առաջացաւ եւ իր զարգացման ուղին սկսեց հայ սովետական գրականութիւնը, որի շուրջ 70ամեայ ուղին քննուել է բազմաթիւ մեծ ու փոքր աշխատութիւններում: Բայց այժմ մեր առջեւ շատ աւելի բարդ եւ տարողունակ խնդիր է կանգնած: Անհրաժեշտ է ո՛չ միայն նորովի կարդալ եւ մեկնաբանել Յետհոկտեմբերեան գրականութեան շատ էջեր, այլեւ միասնական պատմութեան մէջ ներառնել նաեւ մեր ժողովրդի գրականութեան բոլոր միւս արժէքաւոր դրսեւորումները աշխարհով մէկ տարածուած Սփիւռքում: Ընդամին հասկանալի է, որ ամենեւին ընդ ունելի չի կարող լինել հայ սովետական եւ Սփիւռքի գրականութեան արհեստական միաձուլումը, նրանց որակական գծերի անտեսումը: Չէ՞ որ մէկ եւ միւս դէպքում երեւան են գալիս տարբեր զազափարական ազգայներ, տարբեր կենսական եւ գեղարուեստական միջավայր, որոնք եւ պայմանաւորում են այդ գրականութիւնների զարգացումը: Սակայն միաժամանակ չի կարելի նաեւ մեր գրականութեան պատմութիւնը շարադրել նրա երկու հատուածների ուղղագիծ հակադրման սկզբունքով, պէտք է ցոյց տալ նրանց ներքին կապերն ու միասնութիւնը, որ հանդէս են գալիս նաեւ այս դէպքում՝ շնայած գրողներին բաժանող վիթխարի տարածութեանն ու թեմատիկ-գա-

զափարական տարրերու թիւներին: Այդ միասնութեան հիմքը ժողովրդի ոգու եւ պատմութեան կապերն են, ազգային գեղարուեստական աւանդոյթներէ ընդհանրութիւնները, մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ որդիական սէրն ու կարօտը, որ եղել են Սփիւռքի գրականութեան առաջատար գաղափարական-գեղացմունքային գծերը սկզբից մինչեւ այսօր:

Անհրաժեշտ է աւելի յստակ գիտական բացատրութիւն տալ այն հարցին, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում սփիւռքահայ գրականութիւնը: Երբեմն այն գիտուել է իբրեւ Արեւմտահայ գրականութեան ուղղակի ժառանգորդն ու շարունակութիւնը նոր պատմական հանգամանքներում: Զգալի չափով դա իրաւացի է Սփիւռքի գրականութեան առաջին տասնամեակների (20-30ական թուականներ) նկատմամբ, երբ գեո կենդանի էին եւ գործում էին արեւմտահայ գրականութեան «վերջին մոհիկանները»՝ Ա. Զօպանեանը, Լ. Ծանթը, Ե. Օտեանը, Վ. Թէքէեանը եւ ուրիշներ, երբ Սփիւռքի գրողների ստեղծագործութեան մէջ գերակշռում էին կորցրած հայրենիքի կեանքի եւ կարօտի մոտիւնները: Սակայն սկզբից եւեթ՝ Առաջին աշխարհամարտից անմիջապէս յետոյ, Սփիւռքի գրականութիւնն արդէն որակապէս նոր երեւոյթ էր: Իսկ իր աւանդական հայրենիքը կորցրած եւ աշխարհով մէկ ցրուած ազգային զանգուածների կենսապայմանների եւ հոգեւոր մղումների գեղարուեստական պատկերն էր՝ այստեղից բխող բոլոր ստեղծագործական հետեւանքներով:

20ական թուականներից առաջացան սփիւռքահայ գրականութեան մի քանի հիմնական օջախներ՝ մերձաւորարեւելեան, Փրանսահայ, ամերիկահայ, իրանահայ, եւ այլն, որոնցից ամէն մէկն էլ, շնայած ներքին բազմազան կապերին եւ փոխանցումներին, ունի իր որոշակի իւրայատկութիւնները: Այդ գրական օջախների եւ ընդհանրապէս սփիւռքահայ գրականութեան մասին Հայաստանում եւ արտասահմանում քիչ չի գրուել: Բայց ներկայացնել Հայ գրականութիւնը իր «բնաշխարհիկ» եւ «տարաշխարհիկ» թեւերով միասին, «մէկ յարկի տակ», սա մի խնդիր է, որն իրականացուելու է առաջին անգամ: Սփիւռքի առաջացուած ից յետոյ Հայ գրականութիւնն արդէն զարգանում է ոչ թէ երկու հարեւան պետութիւնների սահմաններում, այլ՝ աշխարհի այն բոլոր գօտիներում, ուր հայեր են բնակւում, — եւ այդ ազգային իւրայատկութիւնը պէտք է արասցուցուի 20րդ դարի Հայ իրականութեան պատմութեան մէջ:

Վերջապէս, այդ պատմութեան երրորդ մեծ փուլն սկսուում է 60ական թուականներից եւ շարունակուում է մինչեւ մեր օրերը: Այդ փուլին բնորոշ յատկանիշները, կարծում ենք, կը յարատւեն նաեւ մինչեւ դարավերջ:

Ի՞նչ հիման վրայ է առանձնացուում այդ նոր փուլը, ինչո՞վ է այն տարբերուում նախորդից: Բայց 50ական թթ. վերջին սովետական հասարակութեան մէջ կատարուած յայտնի փոփոխութիւններից, որոնք, բնականաբար, իրենց խոր կնիքը դրեցին նաեւ գրականութեան վրայ, այստեղ շատ կարեւոր է նշել «Հայրենիք-Սփիւռք» փոխարարներութեան մէջ կատարուած զգալի տեղաշարժերը: Բանն այն է, որ նախորդ փուլում (20-50ական թուականներ) Հայ գրականութեան սովետական եւ Սփիւռքի հատուածները զարգանում էին մեծ մասամբ մեկուսացած, առանձին: Պատճառը հանրայայտ է: Տարբեր քաղաքական համակարգ ունեցող պետութիւնների միջեւ այդ տարիներին տիրապետող թշնամական յարաբերութիւնները խիստ սահմանափակում էին գրական-գեղարուեստական արժէքների փոխանակութեան հնարաւորութիւնները, կոնտակտները, կապերը: Իսկ արտայայտուում էր նաեւ Հայ գրականութեան, նրա տարբեր մասերի առընչութիւնների մէջ, որոնք հասցուած էին նուազագոյնի: Այնինչ 50ական թթ. վերջից վիճակն էապէս փոխուեց, ու՝ ժողացան փոխադարձ կապերը, այսպէս ասած՝ ստեղծագործական ինտեգրա-

ցիան: Լայն ծաւալ ստացաւ սփիւռքահայ գրողների հրատարակութեան եւ ուսումնասիրման գործը Հայաստանում: Խորացաւ եւ ամրապնդուեց Հայ գրականութեան ազգային միասնականութեան գրոյթը, որը նախորդ փուլում չէր կարող լայն ճանաչում գտնել՝ աշխարհում տիրող գաղափարական անհաշտ հակամարտութեան պատճառով: Ճիշտ է, վերջին տասնամեակներում Հայ գրականութեան «քարտէզը» գնալով աւելի ու աւելի ցրու է դառնում, գրական ուժեր եւ հրատարակութիւններ են երեւան գալիս աշխարհի նորանոր ծայրերում: Սակայն դրա հետ միասին շատ աւելի լայնօրէն, քան նախորդ փուլերում, քաղաքացիութիւն է ստանում «մէկ ազգ-մէկ գրականութիւն» սկզբունքը: Չնայած աշխահագրական մեծ մասնատուածութեանը եւ տարբեր-թաց միտումներին, Հայ գրականութիւնը մնում է իբրեւ ազգային-գեղարուեստական միասնական երեւոյթ:

Բացատրենք այս միտքն աւելի հանգամանօրէն:

Այն ինքնատիպ իրադրութիւնը, որ Հայ գրականութեան մէջ գոյացել է եւ զնալով խորանում է այսօր՝ 20րդ դարի վերջին, էապէս տարբերուում է համաշխարհային գրականութեան մէջ յայտնի ուրիշ համանման երեւոյթներից: Յայտնի է, օրինակ, որ անգլերէն լեզուի լայն տարածման շնորհիւ տարբեր աշխարհամասերում գոյացել են մի շարք ինքնուրոյն գրականութիւններ, ինչպէս ամերիկեան, կանադական, աստրալիական, եւ այլն: Նոյնիսկ նախկին բրիտանական գաղութներում ասիական եւ աֆրիկեան որոշ ժողովուրդների գրականութիւնը երկար ժամանակ ստեղծուել է եւ այժմ էլ ստեղծուում է անգլերէն: Սակայն այդ գրականութիւնները, անշուշտ, չեն մտնում բուն անգլիական գրականութեան պատմութեան մէջ, ինչպէս որ Լատինական Ամերիկայի իսպանախօս ժողովուրդների գրականութիւնը չի կարող համարուել իսպանական գրականութեան մի մասը: Իրանք ինքնուրոյն գեղարուեստական միաւորներ են: Այնինչ Հայ գրականութեան հանգամանքը բոլորովին այլ բնոյթ ունի: Հայագիր, բայց ոչ-հայ գրականութիւն չկայ եւ չի կարող պատկերացուել, քանի որ արտասահմանում (ինչպէս նաեւ Սովետական Միութիւնում՝ Հայկական Հանրապետութիւնից դուրս հայաշատ վայրերում) ո՛չ հայկական ինքնուրոյն պետական միաւորումներ եւ ոչ էլ նոր ազգային ամբողջութիւն չեն գոյացել եւ հագիւ թէ երբեւէ գոյանայ: Ազգային նկարագիրն ու լեզուն Հայկական Սփիւռքում կարող են պահպանուել այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ իրենց գիտակցում են իբրեւ Հայ ժողովրդի տղային ամբողջականութեան մի մասնիկ՝ գէթ հոգեբանօրէն կապուած մայր հայրենիքի հետ: Հետեւ արար, մեր գաղութների գրականութիւնն էլ մնում է Հայ գրականութեան մի մասը եւ չի կարող համարուել ինքնուրոյն եւ առանձին գեղարուեստական երեւոյթ: Ահա թէ ինչու մենք ո՛չ միայն իրաւունք ունենք, այլևս պարտաւոր ենք 20րդ դարի Հայ գրականութեան պատմութեան մէջ լայնօրէն ներառել այդ ցրուած գրական ջոկատները, որոնք միասին կոչուում են Սփիւռքի Հայ գրականութիւն:

Այս կապակցութեամբ պէտք է առանձին քննութեան առարկայ դառնայ նաեւ արտասահմանի օտարագիր Հայ հեղինակների ազգային պատկանելիութեան խնդիրը: Ի հարկէ, միայն գրողի հայկական ծագման հանգամանքը գեո հիմք չի տալիս նրա ստեղծագործութիւնը Հայ գրականութեան պատմութեան մէջ ներառնելու համար: Այդ իմաստով այնպիսի հայազգի օտարագիր հեղինակներ, ինչպէս Արթուր Աղամովը կամ Անրի Թրուայան, կապ չունեն Հայ գրականութեան հետ (նոյնը վերաբերում է Սովետական Միութիւնում ապրող այն հայազգի գրողներին, որոնք ստեղծագործում են ուուսերէն): Սակայն լաւ յայտնի է, որ արտասահմանում անգլերէն, Փրանսերէն կամ իսպաներէն գրող մի շարք հայազգի հեղինակներ շարունակել են պահպանել եւ

Հայկական թեմատիկան, ե՛ւ ազգային հոգեբանութեան ու վերաբերմունքի կարեւորագոյն գծերը: Դա, առաջին հերթին, վերաբերում է Ռեիլեամ Սարոյեանին, զոնկ նրա ստեղծագործութեան մի զգալի մասին: Նոյնը կարելի է ասել այնպիսի գրողների վերաբերեալ, ինչպէս Լեւոն Սիւրմէլեանը, Վահէ Քաչան, Մայքլ Աուէնը, Ալիսիա Կիրակոսեանը եւ ուրիշներ: Ինչպէ՞ս վարուել այս եւ նման հեղինակների հետ, արգեօք մենք իրաւունք ունե՞նք նրանց ներգրաւելու 20րդ դարի Հայ գրականութեան համայնապատկերի մէջ: Այս հարցին կարելի է գրականօրէն պատասխանել, բայց անհրաժեշտ վերապահութիւններով: Կէտք է լրիւ հաշուի առնուեն նրանց ազգային գիմազծի իրայատկութիւնները, ըստ ամենայնի պէտք է բացայայտուի նրանց ստեղծագործութեան «Հայկական տարրը» եւ, ի հարկէ, օտարազիր հեղինակները պէտք է առանձնացուեն իրրեւ յատուկ գեղարուեստական Ֆենոմեն:

Ժամանակակից Հայ գրականութեան ազգային իւրայատկութեան կարեւորագոյն կողմերից մէկը առաջուայ նման մնում է լեզուական ինքնատիպ իրադրութիւնը: Հայաստանում եւ ընդհանրապէս Սովետական Միութիւնում Հայ գրողներն ստեղծագործում են արեւելահայ լեզուով, նոյնիսկ նրանք, ովքեր աւելի վաղ՝ արտասահմանում եղել են արեւմտահայ լեզուի կրողներ: Այնինչ Սփիւռքը, բացի իրանահայ գաղութից, հետեւում է արեւմտահայ լեզուին, թէեւ այստեղ էլ արդէն չի պահպանուում նախկին միատարրութիւնը: Այսօր արեւելահայ լեզուով գրողներ կան նաեւ ուրիշ գաղթօճախներում: Ղրանք իրանից կամ Հայաստանից տեղափոխուած, ինչպէս նաեւ հայրենիքում կրթութիւն ստացած հեղինակներն են: Չնայած այդ հանգամանքին, մենք ո՛չ հնարաւոր եւ ոչ էլ ցանկալի պիտի համարենք արեւելահայերէնի համատարած տիրապետութիւնը Սփիւռքում, ինչպէս երբեմն ոմանք անհետատեսօրէն առաջարկում են: Արեւմտահայերէնը կը պահպանուի եւ պէ՛տք է պահպանուի իրրեւ ո՛չ միայն խօսակցական, այլեւ՝ գրականութեան լեզու: Դա Հայ ժողովրդի եւ նրա գրականութեան պատմական իւրայատկութիւնն է, նաեւ հարստութիւնը, որից չպէտք է հրաժարուել:

Հայ ժողովրդի տարբեր հատուածների կուլտուրական մերձեցմանը էապէս խանգարող ցաւոտ գործօն է մնում ուղղադրութեան խնդիրը, որն զգալի տարբերութիւններ ունի Հայրենիքում եւ Սփիւռքում: Աւելորդ է ասել, թէ գա ինչքան կարեւոր հանգամանք է նաեւ գրականութեան ճակատագրի համար: Եթէ հարցին նայենք իրատես հայեացքով, ապա պէտք է խոստովանենք. այսօր ո՛չ հնարաւոր է, որ Սփիւռքն ընդունի մեր նոր ուղղադրութիւնը եւ ոչ էլ այն, որ Հայաստանում վերադառնան գրաբարեան ուղղադրութեան սկզբունքներին: Լաւագոյնը կը լինէր այն, որ Հայաստանի եւ Սփիւռքի հեղինակաւոր եւ, ի հարկէ, լայն լրագորութիւններով օժտուած ներկայացուցիչները համատեղ մշակէին միասնական ուղղադրութեան սկզբունքներ: Դրանք պէտք է կառուցուեն փոխգիջման եւ մերձեցման հիմունքով, ընդունելի ու պարտադիր լինեն բովանդակ հայութեան համար: Բայց սա արդէն առանձին մեծ խնդիր է, որ լուրջ քննութիւն է պահանջում:

Այսպէս է ներկայանում մեզ 20րդ դարի Հայ գրականութիւնը իր զարգացման ողջ ընթացքի մէջ՝ ներքուստ երկփեղկուած եւ նոյնիսկ բազմափեղկուած, բայց եւ միասնական: Իսկ թէ ինչպիսին կը լինեն նրա բաղադրամասերի վերլուծութեան ծաւալն ու չափերը, ապա հիմնական սկզբունքը պէտք է հետեւեալը լինի. գրական բազմազան երեւոյթները պատմութեան մէջ տեղ կը գրաւեն այն չափով, որը համապատասխանում է նրանց գեղարուեստական արժէքին, ժողովրդի հոգեւոր կեանքում նրանց ունեցած նշանակութիւնը: Դարավերջի բարձունքից մենք պէտք է կարողանանք զատել իսկական գեղարուեստական մեծութիւնը արտաքին կեղծ փայլի, պատեհապաշտ նկա-

տառումներով ստեղծուած երկերից, որոնք վաղ թէ ուշ խամրում են, կորցնում իրենց նշանակութիւնը: Ըստ այդմ էլ պէտք է որոշուի պատմութեան մէջ նրանց յատկացուող տեղն ու գնահատականը:

Այստեղ հնարաւոր չէ անդրադառնալ ապագայ աշխատութեան կառուցուածքի եւ բովանդակութեան բոլոր կողմերին, մա՛նաւանդ՝ որ շատ բան կը պարզուի ու կը ճշտուի բուն աշխատանքի ժամանակ: Ասենք միայն, որ պատմութեան երկրորդ եւ երրորդ փուլերում գերակշիռ տեղը, անշուշտ, պատկանելու է Հայ սովետական գրականութեանը, քանի որ այստեղ է կետրոնացուած մեր ժողովրդի նորագոյն գրական-գեղարուեստական նուաճումների մեծագոյն մասը: Այս կապակցութեամբ, բնականաբար, ծագում է նաեւ սովետական շրջանի Հայ գրականութեան ներքին ստորաբաժանումների (կամ պարբերացման) խնդիրը, բացի այն երկու մեծ փուլերից, որոնց մասին արդէն խօսուեց: Նոյնը վերաբերում է նաեւ Սփիւռքի գրականութեանը: Աւելացնենք, որ ներքին պարբերացումը, որը որեւէ երեւոյթի գիտական պատմութեան անհրաժեշտ նախապայմանն է, երբեմն կարող է նոյնը չլինել սովետահայ եւ Սփիւռքի գրականութեան համար, քանի որ նրանցից իւրաքանչիւրն ունի զարգացման իր ներքին տրամաբանութիւնը՝ կապուած քաղաքացիական պատմութեան եւ գեղարուեստական կեանքի կոնկրետ հանգամանքների հետ: Ժամանակակից Հայ գրականութեան երկու ճիւղերի պատմութիւնն, ըստ երեւոյթին, ճիշտ կը լինի շարադրել ո՛չ թէ միախառնուած, այլ՝ զուգահեռաբար, կողք կողքի: Կարեւորն այն է, որ միշտ յիշուի եւ նկատի առնուի Հայ գրականութեան ազգային ամբողջականութիւնը, նրա մասերի ներքին կապերն ու փոխազդեցութիւնը:


Մարդկութիւնը մօտենում է 20րդ դարի վերջին՝ բազմաթիւ կնճռոտ եւ չլուծուած հարցերով, ողբերգական կորուստներով, բայց եւ աւելի իմաստնացած, դէպքերի զարգացման կործանիչ ընթացքը կանխելու վճռականութեամբ տոգորուած: Ժողովուրդներին դիտակցութեան մէջ աւելի ու աւելի է հաստատուում այն համոզմունքը, որ գասակարգային եւ ազգային շահերից աւելի բարձր եւ առաջնային են համամարդկային շահերը, հասարակութեան բարոյական կատարելագործման, մարդկութեանը վերահաս ոչնչացման վտանգից փրկելու խնդիրը: Այդ նոր մտածողութիւնը հնարաւորութիւն է տալիս նաեւ նորովի ընթերցել ու վերագնահատել ազգային գրականութեան պատմութիւնը, վերահանել այն արժէքները, որոնք համահնչուն են մեր ժամանակի եւ մարդկութեան լաւագոյն ձգտումների հետ: 20րդ դարի Հայ գրականութեան պատմութիւնը պէտք է ստեղծուի այդ գիրքերից, եւ գա հնարաւորութիւն կը տայ շօշափելիօրէն ցուցադրելու, թէ մեր ժողովուրդն ինչպէ՛ս է անցել այս փոթորկոտ դարի միջով, ինչպէ՛ս է մասնակցել մարդկութեան հոգեւոր առաջադիմութեան մեծ գործին:

ԷԴՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



«CONTES ARMÉNIENS»



Փարիզի «Գիրք» հրատարակչատունը «Սփիւռք» մատենաշարով լոյս ընծայած է **Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեանի** «Հայկական հեքիաթներ — Contes Arméniens» **Ֆրանսերէն ժողովածուն**։

Փամանակի պահանջն մզումը՝ **Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեան** ձեռնարկած է այս աշխատանքին ո՛չ միայն սփիւռքահայ, այլև օտարազգի մանուկներուն ու պատանիներուն ծանօթացնելու հայ ժողովուրդի ձգտումները, հատապարհները և բարոյական-իմաստասիրական բարձրունքները, որոնք արտայայտութիւն կը գտնեն հայկական հեքիաթներուն մէջ։

«Կար ու չկար» խորագրով յոռաջարկ

բանին մէջ, **Ֆրանսահայ բեմադրիչ և գրագէտ Հանրի Վերնէյ (Աշոտ Մալաքեան)** այսպէս կը խօսի հայկական հեքիաթներու արժանիքներուն մասին։

«Եթէ նոյնիսկ խորքի եւ ձեւի տեսակէտէն շատ մը հանգիստութիւններ գոյութիւն ունին աշխարհի բոլոր հեքիաթներուն միջեւ, ինչ ալ բլլայ անոնց ծագումը, հայկականը սակայն յանդերձութիւնը ունի յաճախ դասակարգման շրջան կոտրելու եւ ընթերցողը կամ ունկրդիքը զարմացնելու անբացասելի ոստումով մը։ Օրինակ, մեր փոքրիկ Անահիտը՝ հակառակ աղբատ հովիտի մը աղջիկը ըլլալուն՝ վաշտկան գահաժառանգին ամուսնութեան առաջարկը ընդունելու համար, կը պահանջէ այս վերջինէն, որ արհեստ մը սորվի։

Եւ կը շարունակէ **Հանրի Վերնէյ**։

«Բախտաբեր սեւ օձը, երկու հագար քանն մէկ հարուածով սպաննող Քաջն Նագարը, աւերիչ պատերազմներու դուռ բացող մեղրի կաթիլը կամ Սեւանայ լճի ջուրերուն վրայ քայտող ծերունի կրօնաւոր Օհանը հեքիաթներ են, որոնք ազգային իւրայատուկ մշակոյթի մը բոյրը կը կրեն։

«Հայկական հեքիաթին հերոսները ընդհանրապէս աւելի մօտ են իրականութեան։ Անոնք ստեղծուած են միսէ ու ոսկորէ, կ'անօթեման, կը մսին եւ երբ կը կոուրին՝ լոյսի տաճարներ բարձրացնելու եւ տգիտութիւնն ու խաւարը յաւիտեանապէս փարատելու նպատակով է միայն»։

Հայկի պատերազմը Բելի դէմ կը խորհրդանշէ ազատութեան յաղթանակը, իսկ Արա Գեղեցիկի առասպելը լաւագոյն օրինակն է հայ ընտանիքը և անոր ընդ-

«ԲԵՐՔԱՀԱՒԱՔ»

Բ. ՀԱՏՈՐ
ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ

Վահի - Վահեան



Բ. ՀԱՏՈՐ

մէջէն հայ ազգը կանգուն պահող հաւատարմութեան և սրբութեան ազգականներուն։

138 էջոց այս գեղակազմ գիրքը կը պարփակէ 14 հեքիաթներ, ուր մեր նշանաւոր հեքիաթագիրներու ստեղծագործութիւններու կողքին՝ հեղինակը տեղ տուած է ժողովրդական դիցազներգութիւններու՝ հայ ժողովուրդի ծագումը և անոր դոյառուելու աննկուն կամքը աշխարհին ծանօթացնելու յատուկ նպատակով։ Այսպէս, այս շարքին մէջ կը հանդիպինք «Հայկ եւ Բել», «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ», «Սանասար եւ Պաղտասար», «Առիծ Միեր եւ Սասունցի Դաւիթ» առասպելներուն։

Միւս կտորները կը կրեն ստորագրութիւնը **Թու մանեանի, Աղայեանի, Սրբուանձաւանցի և Կուրաիկեանի, զորս Հանրի Վերնէյ կ'որակէ արժանի եղբայրները Անարբարի, Բերրոյի և Կրիմներու նման աշխարհահռչակ հեքիաթագիրներու։**

Շաքէ Տէր Մելքոնեան Թու մանեանէն ընտրած է «Աղաւնու վահեր», «Քաջն Նագար», «Մի կաթիլ մեղր», «Բարեկենդան» և «Ո՞վ է յանցաւոր» անուն հեքիաթները, **Աղայեանէն՝ «Անահիտ» և «Արեգնագան», Արուանձաւանցէն՝ «Փոքրիկն ու օձը», և Կուրաիկեանէն՝ «Լոյսի տաճարը»։**

Հեղինակին քրոջ՝ էլյօ Պուտաղեանի նկարագրող մները, որոնք իրենց մանկական անմիջականութեամբ և պարզութեամբ խաացած մէկ արտայայտութիւնն են գիրքի ողբին, հեքիաթները կը դարձնեն աւելի գրաւիչ և գիրաճաշկի։ Հեքիաթներու բովանդակութեանց հետ ատրնչուող պատկերներուն քովն ի վեր՝ էլյօ Պուտաղեան պատկերազարդած է նաև էջերու լուսանցքները՝ օգտագործելով հայ մանրանկարչութեան ասանդները։

Իր կարծ յոռաջարանի աւարտին՝ **Հանրի Վերնէյ** կը մաղթէ, որ Ուոլթ Տիգնի մը շարժանկարի վերածէ այս հեքիաթները և զանոնք արժանացնէ միջազգային ճանաչումի։

«Բերքահաւաք» ընդհանուր խորագրին տակ, 1987ին, Պէյրութի մէջ լոյս տեսաւ **Վահէ Վահեանի** գրական-գեղարուեստական քրոնիկներու հաւաքածոյին բ. հատորը, մեկենասութեամբ պարուն Գէրրոյ Արմենակ Մոմճեանի։

317 էջերու վրայ ծաւալող այս ստուար հատորին մէջ մէկտեղուած են շուրջ 60 յօդուածներ, որոնք կ'արձագանգեն սփիւռքահայ թէ խորհրդահայ, ազգային թէ միջազգային մշակութային եկանքը յուզող բոլոր երևոյթներուն։ Վահէ Վահեան օգտագործած է ամէն առիթ (յորբեկեանական հանդիսութիւն, ցուցահանդէս, մահ թէ հաւորի մը հրատարակութիւնը), բացայայտելու համար առեւալ գրագէտին կամ արուեստագէտին գեղագիտական ըմբռնումները, յատկանիշները, արժէքն ու անոր բերած նպաստը

մարդկութեան մշակութային, քաղաքակրթական եւ ընկերային կեանքի գարգացման հոլովոյթին մէջ: Ստեղծագործութիւններու պրիսմակին ընդմէջէն՝ անփորձած է պեղել արուեստագէտին ներաշխարհը, որոնել անոր հոգին արիւնդ տազնապները եւ անոր երեւակայութեան թեւ տուող իղձերն ու ձգտումները:

Գիրքը կը բացուի «Յառաջաբանի տեղ» վերնագրուած բացատրական կարճ գրութեամբ մը, ուր հեղինակը գրաքննադատական իր գործունէութեան բերքը հատորներու մէջ ամփոփելու որոշումը կը հիմնաւորէ հետեւեալ տողերով. «Այս հատորն ալ, նախորդին նման, իր հրատարակումին արդարացումը կը փորձէ գտնել այն համոզումին մէջ յատկապէս՝ թէ արտագրող միտքերը եւ անոնց արդիւնքները կը կարօտին նախնայութիւն, որպէսզի կարենան դառնալ շարժումն ու գործօն արժէք, հետեւաբար նաեւ բեզուն ազդակ՝ անոնց համար, որ հազորակցութեան կը մտնեն իրենց հետ: Կը հետեւի, ուրեմն, թէ ո՛չ միայն չեն աւելորդ՝ շատ երկրորդական սեռէ համարուած այս կարգի էջերը միջնորդի դերով, այլ կը ներկայացնեն անժխտելի կարեւորութիւն, եթէ ըլլան նոյնիսկ թերի կամ վիճելի իրենց կատարած յայտնագործումներով»:

«Բերքահաւաք»ի այս հատորը բաժնւած է չորս յստակ մասերու:

«Դէմքեր հայ մշակոյթի պարունակէն» ենթախորագրով առաջին գլուխին մէջ՝ հեղինակը համախմբած է հայ որագէտներու եւ արուեստագէտներու նըւիրուած հանդիսութիւններուն առիթով իր ունեցած ելոյթները եւ իր իսկ խմբագրած «Անի» ամսագրի էջերուն վրայ ստորագրած յօդուածներն ու դամբանականները: Թէքէեանի, Մեծարենցի, Զարենցի եւ մեր գասական միւս գրագէտներու կողքին, հեղինակի գրչին նիւթ հայթայթած են Հրաչ Զարդարեան, Փայլակ Միքայէլեան, Միրան Սեզա եւ ուրիշներ: Յօդուածներ նուիրուած են նաեւ վաղամեռիկ երգահան-խմբավար Գուրգէն Ալէմշահի, հայրենի օփերայի դերասանուհի եւ երգչուհի Հայկանոյշ Գանիկեանի, ինչպէս նաեւ նկարչութեան մար-

դին մէջ միջազգային հռչակ կերտած արուեստագէտներու՝ Գառուի, Սարուխանի...

Երկրորդ գլուխը, որ կը կրէ «Դէմքեր ազգերու գրականութենէն» խորագիրը, կը պարփակէ Լօթը յօդուածներ՝ նուիրուած աշխահահռչակ օտար գրագէտներու՝ ինչպէս՝ Պուշկին, Ռապինստրանաթ Թակորի, Ժյուրան Ուայլի Ժյուրանի, Վյասնմիր Մայակովսկիի եւ ուրիշներու:

Երրորդ գլուխին մէջ՝ «Գիրքեր», Վահէ Վահեան ի մի խմբած է 1938էն 1959 երկարող քսանամեակին հայրենիքի եւ Սփիւռքի մէջ հրատարակուած գիրքերու մասին ստորագրուած 35 գրախօսականներ, որոնց մէջ կը գտնուին, օրինակ, Մ. Իշխանի «Տուներու երգը», Որրուսիի «Վարձու սենեակը» եւ «Դէպի երկիր» յօդուածաշարքը, Յ. Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան» պատմա-բանասիրական գործը, Սողոմոն Տարօնցիի «Դաւթի երգը», եւ այլն:

Իսկ չորրորդ եւ վերջին բաժնին մէջ տեղ գտած են 1936ի ապրիլեան յուշատօնին առիթով Մելքոնեան կրթական հաստատութեան մէջ հեղինակին արտասանած բանախօսութիւնը՝ «Ապրիլ արեւի եւ արիւնի» եւ հայրենագարձ հայերու առաջին կարգանին առիթով գրուած «Խօսք ողջերթի»:

«ԵՐԿԵՐ»

(Հեղինակ՝ ՅԱԿՈՒ ՄՆՁՈՒՐԻ)

1986ին, Երևանի «Սովետական գրող» հրատարակչատունէն լոյս տեսաւ «Երկեր» խորագրեալ Յակոբ Մնձուրիի հատորը, Սուրէն Նաղբեանի խմբագրութեամբ:

544 էջերէ բաղկացած այս գիրքը կը բովանդակէ արձակագիր Յակոբ Մնձուրիի պատմուածքները, որոնց մեծ մասը առաջին անգամ ըլլալով կը հրատարակուին խորհրդահայ ընթերցողին:

Ժողովածուին մէջ տեղ գտած գրութիւնները առնուած են նախօրօք լոյս տեսած արձակագիրին «Կապոյտ լոյս»



«Արմտան», «Կոունկ, ուստի՞ կու գաս» գործերէն եւ մամուլին մէջ ցրուած էջերէն:

Մնձուրի իր ստեղծագործութեան առանցքը կազմած է հայ գիւղը՝ իր բնական գեղեցկութիւններով, կենցաղային գիծերով եւ բարի բարքերով: Ասոնց կողքին ունի նաեւ գրութիւններ՝ նուիրուած այլազգիներու ապրելակերպին, կրելով էպպէս տուեալ ժամանակաշրջանի հարագատ կնիքը:

Արձակ գրութիւններէն անմիջապէս Լոտ, մօտ երկու տասնեակ էջերու վրայ կը բացուի «Բառարան» մը, ուր այրենական կարգով կը հանգիւպինք գիւղագիր Մընձուրիի օգտագործած օտար բառերուն եւ անոնց հայերէն բացատրութիւններուն:

Յաջորդ գլուխով կը կարդանք Հրանտ Մաթևոսեանի վերլուծական յօդուածը՝ «Անրնդիատ, անվերջ վերադարձ» խորագրով, ուր կ'ընդգծուի Մնձուրիի կեանքին, գրական փաստակին եւ ստեղծագործութեան առանձին կողմերը:

«Իր կենդանութեան հրատարակուած մօտ հազար էջ ընդհանուր ծաւալի գրքերից մէկին անուն է տուել հայրենի Արմտան գիւղը, որ «մեր թուականէն առաջ երկրորդ հազարամեակին հերթական պնակիտներուն մէջ յիշատակուած հայաստայի կամ Հայաստայի Արմտանան է, Մնձուրը՝ Մուգուրին՝ նոյնպէս նոյն պնակիտներուն մէջ յիշուածը»: Միւս գրքի «Կապոյտ լոյս» անունը մօտաւոր անընչութիւն անգամ չունի գրական-գեղարուեստական որեւէ հոսանքի գոյների ու խորհրդանշանների հետ, իրենց լերան անունն է: Այդ պատկեր-պատմուածքների «Կոունկ, ուստի՞ կու գաս» երրորդ հաւաքածոն արդէն ինքն է անմիջաբար նշում կարօտի ու պանդխտութեան երգերի բուն հայրենիքը՝ Քուչակի, խոխոջուն հայոց բարբառի, հայրենների, Մեծարենցի հայրենիքը»:

Հայրենի եղերքէն պաղպաղուն վկայութիւններ բերող այս ժողովածուն կը փակուի «Կապոյտի կողմից» անուն հասուածով: ուր Սուրէն Նաղբեան կը ներկայացնէ Մնձուրիի սակզագործական կեանքի գանազան հանգրուանները, կը նշէ հատորին ընդգրկած պատմուածքներուն ծննդոցը, արագ ակնարկ մը նետելով նաեւ հատորէն գուրս մնացած գրութիւններուն:

Այս բաժնին մէջ կը կարդանք հետեւեալ շահեկան վկայութիւնը, որ ամբողջական տրամաբանութեամբ կու տայ գրագէտին:

«Մարմարա» օրաթերթի 1968 թ. Յունիսի 26-28 համարներում հարցազրոյցի ձեւով ապագրուած «Ըսին» յօդուածաշարում Մնձուրին գրում է. «Ըսին՝ ինչպէ՞ս գիւղագիր եղար»: Ըսի. «Անզգայարար եղայ: Մինչեւ 1950ր չէի խորհրդատու ատոր վրայ: Անկէ յետոյ գտայ, ըսի ես ինձի, թէ իմ գործս գիւղը պատմելը ըլլալու է, կամ առաւելապէս գայն պէտք է աամ: Հաւանաբար պիտի չսահմանափակուէի անոր մէջ, եթէ դիւղին գոյութիւնը շարունակուէր: Անոր անհասացումն ալ պատճառներէն մէկն է...»:

ցած են. դարձած եղանակային քիթեռնիկներ, ե. քեպայի հոտերէն շատ անգին՝ եքերային տեղ մը անոնք մը բուրմունքով կը վերադառնան մեզի»:

Անդրազատնայով Յ. Գոյանեանի ձայնապնակին զեզարուեստական որակին և բերած նորութեան, Գ. Այսնայտոյեան կը կատարէ սա Հաստատումը.

«Հաս պիտի բաւականանանք ըսելով, որ թէ՛ վերժանումներուն մեծ մասը եւ թէ Գոյանեանի նուազածութիւնը նուրբ են. խորհրդաւոր-լուսաւոր ու խորաքափանց: Կիթառը զգալու եւ զգացնելու համար յատուկ մտայնութիւն հարկաւոր է. ինչպէս նաեւ մասնայատուկ ներքին շեշտակշռութային շնչառութիւն՝ կարենալ ստեղծելու տաճուկ մտերմութիւն եւ արտաքերիւն համար ինքզինքին հետ «զազունի» գրոյց: Սրտի անեուն հրեռումնով, որ կը գտնենք այս յատկանիշները Գոյանեանի նուագին մէջ, ուր — կրկնենք — նուրբ զգայնութեան կը միանայ զուսպ ազնուականութիւն ու օրինակելի ճաշակ»:

Եզրակացնելով, յօդուածագիրը յատուկ կարևորութեամբ կ'ընդգծէ Յ. Գոյանեանի մեկնարանութեան Հեզաստնութիւնն ու քննչութիւնը, մեզը դիական հարուստ կենդանութիւնը, որոնք իր «ձայնակշռութային ելիւէլներուն կու տան հարուստ եւ գունագեղ բազմերանգաւորում»:

«ԱՍՏՂԻԿ» ՀԱՆԴԵՍԻ Ա. ԹԻԻԸ

Հայաստանի գրախանութներուն մէջ վերջերս երեւցած է համեստ, բայց ճաշակով ձեւաւորուած հետաքրքրական հասար մը՝ «Աստղիկ». որ նրեւանի համալսարանի հրատարակութիւնն է եւ նուիրուած է թարգմանական գրականութեանը: Հատորին առաջին էջերուն, քննադատ Ազատ Եղիազարեան կը գրէ, թէ գրողներու միութեան մէջ, վերջին տարիներուն յաճախ կարծիքներու փոխանակում կատարուած է՝ թարգմանական գրականութեան նուիրուած պարբերագիրքի մը լոյս ընծայման անհրաժեշտութեան շուրջ, սակայն բոլոր ծրագիրներն ալ մնացած են երազի սահմաններուն մէջ: Նրեւանի համալսարանի մէջ գործող խումբ մը մասնագէտներ, թարգմանչուհի Սոնա Ալֆրեանի ղեկավարութեամբ, նախաձեռնած են «Աստղիկ»ի հրատարակութեան եւ այդ աշխատանքը յաջողած են զուի հանկ առանց ազմուկի: Ա. Եղիազարեան ապա կը յայտնէ, որ պարբերագիրքը կը բացուի «Թարգմանութիւններ գրարարից» բաժնով: Այս առիթով ան կ'ընդգծէ, թէ մենք յաճախ քիչ մտածած ենք կամ երբեք չենք մտածած այս կարևոր հարցին մասին, թէ ինչպիսի՛

յատուկ օրինաչափութիւններ կան նոյն լեզուի տարբեր փոփոխուն կատարում թարգմանական «առընչութիւններուն» միջև: Այս բաժնին մէջ, տպագրուած է Կորիւնի «Վարդ Մաշտոցի» մասնանի թարգմանութիւնը, գոր կատարած է Մանուկ Արեղեան, ապա՝ «Երգ երգոց»ի նորոբայ թարգմանութիւնը, որուն Հեղինակն է Արշալոյս Դազինեան:


«Աստղիկ»ի յաջորդ էջերուն մէջ, տեղ տրուած է Մամուկ Մկրտչեանի ստորագրութիւնը կրող Շէյքսպիրի «Նշակներու թարգմանութեանը, որոնց Հեղինակին մասին խօսելով՝ Ա. Եղիազարեան գիտնէ կու տայ, թէ թարգմանչուհի ո՛չ միայն կը տիրապետէ բանաստեղծական թեքնիքին, այլև խորապէս կը զգայ շէյքսպիրեան մտածողութեան առանձնայատկութիւնները:

Քնարերգութեան բաժնին կը յաջորդեն արձակ թարգմանութիւնները՝ կատարուած օտար գրականութեանց անդաստաններէն: Սևակ Յովհաննիսեանի, Նուարդ Վարդանեանի և Երիտասարդ միւս թարգմանչուհիներուն հայացումները ընթերցողին դիմաց լայն կը բանան օտար գրականութեանց հորիզոնները:

«Գարուն» ամսագրի 1988ի 7րդ համարին մէջ, «Եւս մի քար ազգային շինումս մի վրայ» խորագրեալ գրախօսականով մը, հայրենի Երիտասարդ արձակագիր և թարգմանչուհի Վարուժան Այվազեան, ամսագրի Եօթը բաժնիներուն առարկայական քննարկումը կատարելով՝ յատուկ կարևորութեամբ կանգ կ'առնէ դասական արձակ գրականութեան կատարում հայացումներուն վրայ և առ այդ կ'ընդգծէ.

«Ելնելով թէ՛ քարգմանում գրականութեան բնոյթից եւ թէ՛ իրենց իսկ նպատակը որոշակիացնելով՝ առաջին համարի գրագէտ, ճաշակով ըմտրուած, բայց լիզուականօրէն բարդ տեխնիքի «եայացումով» պէտք է ողջունել լեզուական այն որակի թէկուզեւ ազօտ երանգը, որը որպէս արձակի լեզու մի ջգուտ, դրամատիկազուսպ ու ճշգրիտ խօսքի «տեսակ» է բերում: Տարողունակ, զեզարուեստօրէն կենդանի լեզուն գնահատելի չկարողանալուց է, որ քարգմանութիւններում մեզ գարմացնում ու գրաւում է միայն արտասահմանեան կեանքի ինֆորմացեան եւ բնաւ երբեք զեզարուեստական համոզականութիւնը. քանի որ առաւել հակուած ենք գրաւելու սրտամտիկ, յուզական ճանացում միջոցներով, եւ՝ նոյնիսկ Ֆոլկլորի պէս գրողը մեծ մասամբ է յուզում. իսկ մտածել չենք կարողանում, որովհետեւ նրան հասկանալու համար պիտի փորձենք արձակ եւ արձակի լեզու գնահատել»:

Եզրակացնելով, Վարուժան Այվազեան կ'ողջունէ արձակի լեզուն բանաստեղծութեան լեզուամտածողութեան անջատելու եւ կեանքի կենդանի արտայայտութեան վերածելու թարգմանչուհիներուն ճիգը և յաջողութիւնը կը մաղթէ հանդէսին և անոր շուրջը գործող քարգմանչուհիներուն:



ԵԴՈՒԱՐԴ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

ԳՐԱԿԱՆ – ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԷԶԵՐ

● 1989, Անթիլիաս, 293 էջ, տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայոց:

ԱՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

ԶԱՆԶՆ ԻՄ ՓԱՌԱԻՈՐԵԱԼ (Վ Է Պ)

Հրատարակութիւն՝ «Գեորգ Մելիտինեցի» գրական մրցանակի, թիւ 28:

● 1989, Անթիլիաս, 508 էջ, տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայոց:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԶԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ (ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ՆԻԹԵՐ)

Հրատարակութիւն՝ Հայկական Հարցերու Հաստատութեան:

● 1989, Պէյրութ, 260 էջ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան:

ԼԻՐԱՆԱՆ

Հատավաճառ 500 Լ. Ռ.
Տարեկան բաժնեգին 2500 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 40 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باکین
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ